



ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- **ԽՈՐՀՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀՀ ԳԼԽԱՎՈՐ
ԴԱՏԱԽՍՑՈՒԹՅՈՒՆՈՒՄ**
ՀՀ Նախագահը
հանձնարարականներ է տվել
- **ՀԱՏՈՒԿ ՋԱՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ**
ՀԻՆԳ ՏԱՐԵԿԱՆ Է
- **ԽՈՒԽԱՆՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿՐԱՎԱԿԱՆ
ԲՆՈՒԹՅՈՒՆԸ**
Օգնություն դատախազին, քննիչին
- **ԻՐԱՎՈՒՅԹԻ ՆՈՐՄԱՏԻՎԻՍՏԱԿԱՆ ԴՊՐՈՅԸ**
- **ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁՆԵ ՆԿԱՏՄԱՄԲ
ԿԻՐԱԽՈՎՈՂ ՏՈՒՅՏԵՐԸ**
Վարչական իրավունքի հարցեր

ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ՈՐԾ ՄԻ ԱՄԲՈղջ Դպրոց է Նոր սերնդի համար

ՀՀ գլխավոր դատախազը
այցելել է ԽՍՀՄ և ՀՀ
ժողովրդական արտիստ
ՍՈՍ ՍԱՐԳՍՅԱՆԻ
և շնորհավորել
ծննդյան 83-րդ տարեդարձի
կապակցությամբ



ՄԵԾԱՐԳՈ ՎԱՐԴԵՏ,

Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատողների
և անձանք իմ անունից սրտանց շնորհավորում եմ Ձեզ՝ ծննդյան հոբել-
յանի առթիվ։

Թատրոնում և կինոյում Ձեր խաղացած դերերի մասին հիշողությունները մեզ վերադարձնում են դեպի զուզակ ու անաղարտ երիտասարդություն, դեպի ժողովրդի դաշը պատմություն, ուրախ ժամանակների ձանաչողություն։ Ձեր խաղացանկի հարուստ շտեմարանը սերմանում է մեր նախնիների ապրելու և մաքանելու արժանապատիվ հուշերը։

Ձեր մարմնավորած դերերով Դուք ոտքի կազմնեցրիք դեպի անկախություն գնալու անսասան հավատով դաստիարակված մի ամբողջ սերունդ և հազարավորների մեջ արթնացրեցիք մեր բազկի ուժի հզորության հանդեպ հավատը՝ դարձարադան ազատագրական պայքարում հաղթանակ տանելու համար։

Ձեր հարուստ կենսագրությունը մի ամբողջ դպրոց է՝ մեր 20-ամյա անկախ հանրապետության նոր սերնդի համար։

Ձեր փորձը, ձեավորված ավանդույթները և ավագ սերնդի խոհեմությունը Դուք փոխանցել և շարունակում եք փոխանցել մեր երեխաներին, սովորեցնում սիրել մեր հայրենիքը, նրա մշակույթը՝ դրանով դառնալով միշնորդ և կապող օղակ անցյալի ու ապագայի միջև։

Սիրելի վարպետ, իմ լավ բարեկամ,

Ծննդյան օրվա առթիվ կրկին շնորհավորելով Ձեզ՝ ցանկանում եմ առողջություն, երկար տարիների լյանք, ինչն արդեն իսկ ստեղծագործություն է։

Հարգանքով՝

ՀՀ գլխավոր դատախազ, արդարադատության

պետական խորհրդական

Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆ

24.10.2012

№74

Հիմնադիր և հրատարակիչ՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅՈՒՆ

ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՇԵՄ

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1997 թՎԱԿԱՆԻՑ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՃՈՒՐԴ

ԱՐՄԵՆ ԴԱՏԻԵԼՅԱՆ - նախագահ
ԳՈՒՐԳԵՆ ԱՄԲԱՐՅԱՆ
ԳԵՎՈՐԳ ԴԱՏԻԵԼՅԱՆ
ԱՐԹՈՒՐ ԴԱՄԲԱՐՅԱՆ
ՎԱՐԴԱՄ ՇԱՐԻՆՅԱՆ
ԳԱՈՆԻԿ ՍԱՖԱՐՅԱՆ
ՅՈՎՐԱՆՆԵՍ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Գլխավոր Խմբագիր՝ Գ. ԱՄԲԱՐՅԱՆ

Խմբագրության հասցեն.
375010, ք. Երևան, Յանրապետության փ., 85
Հեռախոս՝ 52-33-76, Ֆաքս՝ 56-76-72
www.genproc.am

© Համակարգչային շարվածքը,
ոճը, տառածերը և էջադրումը՝
«ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»

Ստորագրված է տպագրության՝
12.12.2012 թ.
Ֆորմատ՝ 70 X 100 1/16
Տպաքանակ՝ 500
Ծավալը՝ 8 պայմ. մամուլ
Գրանցման վկայական՝ N 688

Տպագրված է
«Պոլիգրաֆ բիզնես» ՍՊԸ տպարանում
Երևան, գ. Քոչարի 21

© «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ», 2012 թ.

2012

Յանդեսը ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի (ԲՈՅ)
կողմից ընդգրկված է թենածանուան (1999թ.)
և դրսորուական (2002թ.) ասենախտությունների
հիմնադրույթների հրապարակման համար բույլատրելի
գիտական պարբերականների ցանկում:

Յուրաքանչյուրը պետք է պատասխանատվություն ունենա

Հայաստանի Հանրապետության նախագահը խորհրդակցություն էր իրավիրել քրեական գործերով իրականացվող նախաքննության վիճակին առնչվող խնդիրների կապակցությամբ



**Նախագահ Սերժ Սարգսյանը 2012թ. հոկտեմբերի 29-ին
Հայաստանի Հանրապետության դատախազությունում իրավապահ
մարմինների ներկայացուցիչների մասնակցությամբ
խորհրդակցություն էր իրավիրել քրեական գործերով իրականացվող
նախաքննության վիճակին առնչվող խնդիրների կապակցությամբ:**

Խորհրդակցության սկզբում ընդգծելով, որ նախաքննության խնդիրների հաջող լուծումն առավելապես պայմանավորված է այս ոլորտում դատախազական հսկողության բացարիկ գործառույթի պատշաճ իրացունով, Նախագահը դատախազության գործունեության մեջ առանձին հանցատեսակների դեմ պայքարում նկատելի դրական տեղաշարժի մասին խոսելուց բացի, խստորեն քննադրատել է դեռևս առկա բացասական երևույթները՝ առանձին դատախազների անփուլքությամբ կամ չարամտությամբ պայմանավորված գործողությունները:

«Ընդհանուրապես, դատախազություն-

նը շարունակում է մնալ պետական այն մարմինների շարքում, որոնք կարողանում են իրենց գործունեության մեջ թեև թիւ, սակայն որոշակի դրական արդյունքներ ցույց տալ: Ասվածի ապացույցն են հանդիսանում, մասնավորապես, միջազգային կառույցների կողմից մեր պետության առաջընթացի արձանագրումը փողերի լվացում և բրաֆիքինգ հանցատեսակների դեմ պայքարում: Նաջող կարելի է համարել նաև իրավակարգի ամրապնդման գործում իրավապահ այլ մարմինների հետ համագործակցության բարելավումը: Որոշակիորեն բարելավ-

վել է նաև գինվորական դատախազության աշխատանքը:

Նման օրինակները մեկ անգամ ևս վկայում են, որ բարեխիղծ և ազնիվ դատախազները, որոնք համակարգում քիչ չեն, գիտակցում են հանրության և պետության առջև ստանձնած իրենց առաքելությունը և այդ առաքելությունն իրականացնում են սրտացավորեն:

Սակայն պետք է փաստեմ նաև, որ շարունակում է արդիական մնալ առանձին դատախազների անփութության կամ չարամտության խնդիրը, որը, ցավոք, ար-

դրբների ստուգման արդյունքում նախարնական պրակտիկայում բացահայտվել են փաստեր, որոնք ուղղակի անհամատեղելի են առողջ բանականության հետ: Յերիք չէ, որ քննությունը վարող պաշտոնյաները գործի հանգամանքները պարզելու փոխարեն կեղծիքների միջոցով փոխում են դեպքի փաստերը, դեռ հովանավորում են հանցագործներին և պարտակում հանցագործությունը: Ավելին՝ որոշ դեպքերում հանցագործությունը բարդում են ուրիշի վրա: Իրավապահ մարմնի աշխատողի կողմից ավելի ստորև և անբարոյական արարք են ուղղակի չեմ պատկերություն: Մենք այսօր դեռևս այդ փաստերի մասին կլսենք:

Չեր գործունեության ուսումնասիրության ընդամենը

ժամանակակից չի արժանանում:

Չիշեցնեմ, որ անցած տարվա դեկտեմբեր ամսին կայացած խորհրդակցության ընթացքում նախարննության որակի և դատախազական հսկողության արդյունավետության հարցերը քննարկելիս առանձնապես շեշտվել եր հենց այս երևույթը և առաջարկվել դրա դեմ պայքարի արդյունավետ միջոցներ ձեռնարկելու: Ու թեև այս ուղղությամբ որոշակի քայլեր կատարվել են, ընդհուպ մինչև մեղավորներին պատախանատվության ենթարկելը, սակայն առկա բացասական երևույթները չեն նվազել: Եվ մասնավոր հետևողությունն այն է, որ առանձին անհատներ այս ամենից պարզապես դասեր չեն քաղել: Դասեր չեն քաղել, որովհետև դատախազության ներսում ես չեմ տեսնում սուր պայքար այդ երևույթների դեմ:

Ակնհայտ է, որ նախարննության ընթացքում դատախազը լուրջ դերակատարություն ունի, սակայն նախարննական մարմինների ներկայացուցիչներն այստեղ են, և բոլորը քաջ գիտակցում են, որ այս գործում յուրաքանչյուրն ունի պատախանատվության իր բաժինը:

Այս կարծ ժամանակահատվածում նախագահի աշխատակազմում քաղաքացիներից ստացված դիմումների և բո-

երկու-երեք ամիսների ընթացքում պարզվել է, որ, օրինակ.

— Դատախազի թողտվությամբ հանցանք կատարած մի քանի անձինք գործով դառնում են վկա, նույնիսկ ոչ թե թողտվությամբ, այլ նրա ակտիվ մասնակցությամբ:

— Դատախազը հանցավորության դեմ պայքարելու փոխարեն ինքն է հանցանք կատարում և հայտնվում հետախուզության մեջ: Եվ որևէ մեկը որևէ պատախանատվություն դրա համար չի կրում՝ ոչ նրա անմիջական պետք, ոչ դատախազության այն պաշտոնն ենան հսկողություն իրականացնել այդ դատախազի գործունեության նկատմամբ:

— Դաշորդ՝ օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու փոխարեն լկտի պահվածքով վիճաբանում է իրավապահ այլ մարմնի աշխատակցի հետ: Վիճաբանությունն էլ, երկի, այստեղ ծիշտ բառը չէ: Ոստիկանության աշխատողին նրա պետի միջոցով իրավում է իր աշխատասենյակ և լվտիաբար նրան ապտակում, այսինքն՝ ծեծում: Եվ անպայման ես պետք է միջամտեմ, որպեսզի այդ մարդը ոչ թե քրեական պատախանատվության ենթարկվի, այլ

ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ուղղակի նրան ազատեն դատախազության համակարգից: Եթե դատախազը ինքը պետք է ինքնադատաստան տեսնի, ինքը պետք է այդպես վարվի, դատախազը ուրիշներից ի՞նչ կարող է պահանջել:

— Հաջորդը՝ դատախազի կոչմանը ոչ վայել իրավիճակում հայտնվելու դեպքում մնում է անպատճի՛: Այսինքն, դատախազը փողոցում կրիվ է սարքում, պարզ է՝ աղմուկից հետո քրեական գործ է հարուցվում, և հետո չեղած վկա ներգրավելով, բոլոր հնարավոր, անհնար միջոցներով տանում են և ուրիշին են ուզում դատապարտել:

Հանցավոր, արատավոր միտում կա՝ գործերը քննելիս, մեկ էլ հանկարծ 15 տարվա գործունեությունն ուսումնասիրելու անհրաժեշտություն է ի հայտ գալիս: Հանձնարարում են հարկայինին՝ այս կազմակերպության վերջին 15 տարվա գործունեությունն ուսումնասիրի: Հարյուրավոր մարդկանց պետք է քննել, այն դեպքում, եթե դա գործի հետ բիշ առնչու-

թյուն ունի: Եվ այս ամբողջը բացատրում են գործի համապարփակ, ամբողջական քննությամբ, իբր: Ի՞նչ գործ ունեք: Հանցագործությունը բացահայտեք:

Եվ սրանք արձանագրված դեպքերից միայն մի քանիսն են: Ինչոր մեկը կարող է ինձ բացատրել, թե ընդհանրապես, իրավապահ մարմնում ինչպես կարող է այսպիսի մթնոլորտ լինել: Այսինքն, դա նշանակում է, որ որոշ մարդիկ հղվացել են: Եթե մարզի դատախազի տեղակալը մտածում է, որ ինքը կարող է այդպիսի արարք բոլոյ տալ, ես ուրիշ կերպ մտածել չեմ կարող»,- ասել է Նախագահ Սերժ Սարգսյանը:

Խորհրդակցության մասնակիցներին ներկայացվել է քրեական գործերով նախարարության վիճակի գործնական խնդիրների վերաբերյալ ՀՀ Նախագահի աշխատակազմում իրականացված վերլուծությունը: Ներկայացված օբյեկտիվ տվյալները և դրանց համակողմանի վերլուծությունը բույլ են տվել եզրակացնել, որ:

— քրեական գործերով նախարարության համար պատասխանատու անձանց կողմից ոչ պատշաճ են իրականացվում կամ ընդհանրապես չեն իրականացվում իրենց դատավարական լիազորությունները,

— անձի դեմ ուղղված ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների քննության ընթացքում խախտվում է գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն կատարելու պահանջը,

— դրա հետևանքով չեն լուծվում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված խնդիրները՝ հանցանք կատարած անձինք չեն ներարկվում քրեական պատասխանատվության, ակնհայտ անմեղ անձինք մեղադրվում են հանցանքի կատարման մեջ կամ առանց անհրաժեշտության ներարկվում են իրավունքում սահմանափակման,

— իրենց գործունեության մեջ խախտումներ թույլ տված պաշտոնատար անձինք չեն ներարկվում կատարածին համարժեք պատասխանատվության կամ ընդհանրապես մնում են անպատճի,

— անմիջական իրավակիրառողներն իրենց գործունեության բարելավման կամ դրա արդյունավետության բարձրացման ուղղված միջոցառումների մշակման, իրականացման գործում անհրաժեշտ նախաձեռնություն չեն ցուցաբերում:

Հաշվի առնելով արձանագրված խնդիրների բնույթը և դրանց առաջացրած հետևանքները՝ հանրապետության նախագահը իրավիճակի շտկմանն ուղղված հանձնարարականներ է տվել կոնկրետ պատասխանատուներին:

Խորհրդակցության ավարտին Սերժ Սարգսյանն ընդգծել է, որ շահագոգի վերաբերմունք է ակնկալում ՀՀ գլխավոր դատախազից, դատախազի տեղակալներից, քննության պատասխանատուներից: «Ես պահանջում եմ բոլորից սկզբուն-

քայնություն: Յուրաքանչյուրը պետք է պատասխանատվություն ունենա, և այդ պատասխանատվությունը պետք է ֆիքսված լինի:

Սենք 2012թ. առաջին եռամսյակի արդյունքներով նորից անդրադառնալու ենք քննության որակին և կոնկրետ փաստերին»,- ընդգծել է Նախագահ Սերժ Սարգսյանը:

ՀՀ նախագահի մամլո գրասենյակ

ՀՀ ՆԱԽԱԳԱՀԸ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԻ Տ ՏՎԵԼ

**Իրավապահ մարմինների ղեկավար կազմի հետ 2012 թ. հոկտեմբերի 29-ին
անցկացրած խորհրդակցության արդյունքներով**



Նախագահ Սերժ Սարգսյանը 2012թ. հոկտեմբերի 31-ին մի շարք հանձնարարականների է տվել քրեական գործերով մինչդատական վարույթի հարցերով հոկտեմբերի 29-ին իրավապահ մարմինների ղեկավար կազմի հետ անցկացրած խորհրդակցության արդյունքներով:

Մասնավորապես.

● ՀՀ կառավարությանը հանձնարարվել է իրականացնել իրավապահ մարմինների աշխատակիցների նյութատեխնիկական և սոցիալական ապահովության վիճակի համակողմանի ուսումնասիրություն, երկամսյա ժամկետում մշակել վիճակի բարելավմանն ուղղված առաջարկներ և ներկայացնել ՀՀ նախագահի աշխատակազմ։

● Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին հանձնարարվել է լրամշակել Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի նախագիծը՝ հաշվի առնելով

խորհրդակցության ընթացքում կոնկրետ գործերի օրինակներով վերիանված գործնական հիմնախնդիրները, ինչպես նաև վերջերս Մարդու իրավունքների եւ պրոպական դատարանի կայացրած վճիռներում արտահայտված իրավական դիրքորոշումները։

● ՀՀ գլխավոր դատախազին, ՀՀ ոստիկանության պետին և ՀՀ հատուկ քննչական ծառայության պետին հանձնարարվել է մեկամյա ժամկետում գրավոր առաջարկություններ ներկայացնել նախարարության կազմակերպմանը և այն սպասարկող հարակից ոլորտների, հատկապես՝ դատաքնչկան փորձաքննությունների կատարմանը, ինչպես նաև օպերատիվ-հետախուզական գործունեության իրականացմանն առնչվող խնդիրների համալիր լուծումների վերաբերյալ։

● ՀՀ գլխավոր դատախազին, ՀՀ ոստիկանության պետին, ՀՀ հատուկ քննչական ծառայության պետին հանձնարարվել է ծերնարկել անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու դատախազների, քննիչների և քննչական ստորաբաժանումների ղեկավարների դատավարական լիազորությունների պատշաճ իրականացումը՝ բացառելով դրանց ծևական իրականացման հնարավոր դրսերումները։

● ՀՀ ոստիկանության պետին հանձնարարվել է հաշվարկել և մեկամյա ժամկետում ներկայացնել քննիչների գործունեության նյութատեխնիկական ապահովմանն ուղղված առաջարկ։

ՀՀ նախագահի մամլո գրասենյակ

«Դատախազի յուրաքանչյուր որոշում պետք է լինի բացատրելի՝ օրենքի շրջանակներում և արդարության տեսանկյունից հասկանալի՝ ժողովրդի համար»

ՀՀ գլխավոր դատախազ Աղվան Յովեկյանի նախագահությամբ 2012թ. նոյեմբերի 2-ին տեղի է ունեցել ՀՀ դատախազության կոլեգիայի նիստ, որի ընթացքում քննարկվել է. «Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ՀՀ գլխավոր դատախազությունում 2012թ. հոկտեմբերի 29-ին անցկացված խորհրդակցության արդյունքներով ներկայացված պահանջների, հաճախարականների ներքո նախաքննության, դատախազական հսկողության իրականացման ընթացքում թույլ տրված թերացումների, խախտումների, դրանց օբյեկտիվ և սուրյեկտիվ դրսուրումների, ժագած հիմնախնդիրների քննարկման և դրանց վերացման ուղղությամբ ձեռնարկվելիք միջոցառումների մասին» հարցը:

Կոլեգիայի նիստին հրավիրվել և մասնակցել են նաև օպերատիվ-հետախուզական, քննչական մարմինների, ստորաբաժանումների ղեկավարներ, փորձաքննությունների ազգային բյուրոյի, արդարադատության նախարարության փորձագիտական կենտրոնի, առողջապահության նախարարության դատարժեկական գիտագործնական կենտրոնի նախարարը:

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալներ Արամ Թամագյանը, Մենացական Սարգսյանը, Արմեն Ղանիելյանը ըստ համակարգման ոլորտների ներկայացրել են հետաքննության, նախաքննության, դատարաններում մեղադրանքի պաշտպանության ընթացքում արձանագրված թերություններն ու խախտումները, դրական ու հիմնախնդիրները՝ հանդես գալով դրանք վերացնելու ուղղությամբ կոնկրետ առաջարկություններով:

«Յուրաքանչյուր դատախազ պետք է հասկանա, որ ինքը հանրապետությու-

նում իրականացվող քրեական քաղաքականության առանցքն է՝ դրանից բխող պարտավորություններով»,՝ հայտարարել է գլխավոր դատախազը՝ նշելով, որ դատավարական ղեկավարում իրականացնող դատախազները պատասխանատվություն են կրում ինչպես նախաքննության, այնպես էլ՝ մեղադրանքի պաշտպանության որակի համար: «Դատախազի յուրաքանչյուր որոշում պետք է լինի բացարձիքի շրջանակներում և արդարության տեսանկյունից հասկանալի՝ ժողովրդի համար»,՝ նշել է գլխավոր դատախազը՝ պահանջելով բարձրացնել նախաքննության օրինականության նկատմամբ դատախազական հսկողության որակը:

«Դատախազները պետք է գիտակցեն, որ նախաքննության ընթացքում ձեռք բերված ապացույցներն են դրվելու մեղադրանքի հիմքում, որը պաշտպանելու են դատարանում: Եվ պետք է հետամուտ լինեն, որ ապացույցները ձեռք բերվեն օրենքով սահմանված կարգով, քանզի միայն այդ դեպքում դա կլինի համոզիչ հասարակության համար, իսկ առանց հասարակության վստահության հնարավոր չէ արդյունավետ պայքարել հանցագործության դեմ»,՝ ընդգծել է ՀՀ գլխավոր դատախազը:

Ա. Յովեկյանը նախագգուշացրել է, որ քրեական գործի նյութերը խեղաքյուրելու, քրեական գործը փակուղի մտցնելու յուրաքանչյուր դեպք դաշնալու է առանձին քննարկման արարկա: Զի հանդուրժվելու քրեական գործի նյութերի խեղաքյուրման որևէ դեպք, պետք է բացատել «մատակարարված» մեղադրյալների երևույթը, իսկ արձանագրվելու դեպքում քրեական գործեր կհարուցվեն թե՛ հետաքննիչի, թե՛ քննիչի, թե՛ դատախազների նկատմամբ՝ քննությունը հանձնարարելով Հատուկ քննչական ծառայությանը:



ՀՀ ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅԱՆ ԿՈԼԵԳԻԱՅՈՒՄ

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա.Թամացյանը, ով նաև ՀՀ դատախազության որակավորման հանձնաժողովի նախագահն է, կարևորել է նախկինից դասեր չքաղած, հանապատասխան հետևությունների չփառագած, ծառայողական պարտականությունները պարբերաբար խախտող աշխատակիցների նկատմամբ անհանդուրժողականությունը: «Անհրաժեշտ է ազատվել նաև անձանցից և համակարգը համալրել այնպիսի կադրերով, որոնք իրենց գործնական, մասնագիտական և բարոյական հատկանիշներով կնպաստեն դատախազական գործունեության արդյունավետության

տումների կապակցությամբ հարուցել կարգապահական վարույթներ, որոնց արդյունքում խախտումներ թույլ տված անձինք կենթարկվեն պատասխանատվության:

Կոլեգիան հանձնարարել է ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ս.Սարգսյանին ուսումնասիրել 2005-2012թթ. մարդու դեմ ուղղված հանցագործությունների դեպքերի առթիվ հարուցված և կասեցված քրեական գործերը, որոշումների հիմքերը, հետախուզական գործերը և արդյունքները ներկայացնել կոլեգիայի քննարկմանը:

Դատարաններում մեղադրանքի պաշտպանության որակը բարձրացնելու համար

հանձնարարվեց պահանջել և վարույթներին կցել դատական նիստերի ձայնագրառումները, որոնք հանապատասխան ստորաբաժանումները ղեկավարող դատախազները ընտրանքային կարգով կուտամասիրեն՝ պարզելու, թե ինչպիսի վարքագիծ են դրսևորում դատախազները դատական նիստերի ժամանակ և որքանով են պատշաճ պաշտպանում մեղադրանքները: Միաժամանակ պահանջորվեց դատա-

խազների և նախաքննական մարմինների առջև՝ խստագույնս պահպանել նախաքննության ժամկետները, խոսափել անհարկի և չպատճառաբարնված զգձումներից, հետամուտ լինել հանցագործություն կատարած անձանց հնարավորինս սեղմ ժամկետներում պատասխանատվության ենթարկելու հարցում:

«Պետք է կրծատել տեղի ունեցած հանցագործության դեպքից մինչև հանցագործին դատապարտելու վերաբերյալ դատավճիռն ընկած ժամանակահատվածը: Այլապես՝ տարիներ շարունակ զգձելով նախաքննությունն ու դատաքննությունը՝ հասարակության մոտ կարծիք է ձևավորվում, որ հանցագործը մնացել է անպատիթ: Պատժողական քաղաքականությունը կծառայի իր նախականիչ նշանակությանը, եթե հանցագործները դեպքից անմիջապես հետո ենթարկվեն պատասխանատվության», - ասել է ՀՀ գլխավոր դատախազը:



բարձրացմանը, կլինեն օրինապահ, արդարամիտ, կարգապահ, զուսպ, անկեղծ, բարեկիրթ, սկզբունքային, ամկողմնակալ և դրանց արդյունքում կնպաստեն դատախազության նկատմամբ հանրության վստահության աճին», - նշել է Ա.Թամացյանը:

Գլխավոր դատախազը հանձնարարել է որակավորման հանձնաժողովին խստացնել պահանջները: «Դատախազի կերպարով վարկարեկող անձինք չպետք է աշխատեն համակարգում», - շեշտել է Ա.Ռովսեփյանը՝ կարևորելով ոչ միայն մասնագիտական ունակություններն ու գիտելիքները, այլ նաև բարոյական նկարագիրը: Իսկ տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումները ղեկավարող դատախազները զգուշացվել են, որ պատասխանատվության կենթարկվեն ենթակաների վերաբերյալ սուբյեկտիվ գնահատագրեր ներկայացնելու համար:

Գլխավոր դատախազը հանձնարարել է հայտնաբերված բացթողումների, խախ-

ՀՀ ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅԱՆ ԿՈԼԵԳԻԱՅՈՒՄ

Կոլեգիայի նիստում ելույթ ունեցան նաև Երևան քաղաքի դատախազ Յ. Բադայյանը, ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն և կազմակերպված հանցագործու-

թան որոշումներ, իսկ դրանց կատարման ապահովելու նպատակով գլխավոր դատախազի կողմից կտրվեն գրավոր ցուցումներ, հանձնարարականներ, իրանականներ:

**«...Առանց հասարակության
վստահության հնարավոր չէ արդյունավետ
պայքարել հանցավորության դեմ...»**

թյունների գործերով վարչության պետ Կ. Փիլոյանը, ՀՀ փոխստիկնապետ, ոստիկանության գլխավոր քննչական վարչության պետ Գ. Զամբարձումյանը, ՀՀ Շատուկ քննչական ծառայության պետ Ա. Սիրոյանը և ուրիշներ:

Դատախազության կոլեգիայի նիստում մանրամասն քննարկվեցին ոլորտում առկա խնդիրները, որոնցից յուրաքանչյուրի վերաբերյալ կոլեգիան կարտահայտի իր գնահատականը՝ կայացնելով համապատաս-

առնթեր տեղի կունենան առանձին օպերատիվ խորհրդակցություններ՝ փորձագիտական կենտրոնների ղեկավարների մասնակցությամբ՝ փորձաքննությունների որակը բարելավելու ու ժամկետները կրծատելու նպատակով, ինչպես նաև ոստիկանության հետ՝ քննարկելու օպերատիվ-հետախուզական և քննչական մարմինների համագործակցության արդյունավետությունը բարձրացնելուն վերաբերող հարցեր:

ՀՀ դատախազության ինտերնետային էջում կարող եք ծանոթանալ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալների՝ կոլեգիայում ունեցած ելույթներին:

Ի ԿԱՏԱՐՈՒՄ ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ՀԱՆՁԱՐԱԿԱՆԵՐԻ

ԴԱՏԱԽԱՎԻ ԳԼԽԱՎՈՐ ՉԵՆՔ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆ Է

2012 թվականի նոյեմբերի 7-ին կայացավ ՀՀ գլխավոր դատախազին առընթեր օպերատիվ խորհրդակցություն, որին մասնակցում էին ՀՀ դատախազության կոլեգիայի անդամները, գլխավոր դատախազության վարչությունների և բաժինների պետերը, դատախազության կառուցվածքային ստորաբաժնումների ղեկավարներ, քննչական մարմինների պետեր, փորձագիտական հիմնարկների ղեկավարներ:

Խորհրդակցությունում քննարկվեց «Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ՀՀ գլխավոր դատախազությունում 2012թ. հոկտեմբերի 29-ին անցկացված խորհրդակցության և դրա արդյունքներով 2012թ. հոկտեմբերի 31-ին ՀՀ Նախագահի տրված N ՀՆԱ-10 համանարարականի 3-րդ կետի պահանջների կատարման ներքո դատական փորձաքննությունների նշանակման և իրականացնան ընթացքում հայտնաբերված թերացումների, խախտումների, դրանց օրինակի և սուրբեկությունների, ծագած հիմնախնդիրների քննարկանան և դրանց վերացնան ուղղությամբ ձեռնարկվելիք միջոցառումների մասին հարցը:

Խորհրդակցությունում ելույթ ունեցան ՀՀ գլխավոր դատախազի տեղակալներ Ա.

Սարգսյանը, Ա. Թամանայանը, Ա. Դանիելյանը, Գ. Կոստանյանը, ՀՀ գլխավոր դատախազության վարչությունների պետեր Վ. Շահինյանը, Ա. Գոյունյանը, Կ. Փիլոյանը, ՀՀ ոստիկանության գլխավոր քննչական վարչության պետ Գ. Զամբարձումյանը, ՀՀ Շատուկ քննչական ծառայության պետ Ա. Սիրոյանը, Երևան քաղաքի դատախազ Յ. Բադայյանը, փորձագիտական հաստատությունների ղեկավարներ և ուրիշներ:

Խորհրդակցության աշխատանքներն ամփոփեց ՀՀ գլխավոր դատախազ Աղվան Յովսեփյանը, ընդգծելով որ հնչած բոլոր առաջարկություններն մանրամասնորեն կուտամնասիրվեն և դրանց հետ կապված կտրվեն համապատասխան հանձնարարականներ:

ՀԱՏՈՒԿ ՔՆՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ

5 ՏԱՐԵԿԱՆ Է

Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայության կազմավորման 5-ամյակի կապակցությամբ ծառայության պետ Անդրանիկ Միրզոյանին և աշխատակիցներին շնորհավորական ուղերձ է հղել ՀՀ գլխավոր դատախազությունը, որում մասնավորապես ասված է.



«...Հատուկ քննչական ծառայության կազմավորման անհրաժեշտությունը պայմանավորված և թեկադրված էր ժամանակի պահանջներով, մասնավորապես՝ նախարարների համակարգում կատարվող փոփոխություններով, այդ թվում՝ դատախազության մարմիններից քննչական ապարատի անջատմամբ և դրա արդյունքում նախարարների համակարգում գերատեսչական ենթակայությամբ գործող նախարարների մարմիններից մեկի մենաշնորհը չդարձնելու, դրանից բխող անցանկայի երևոյթները բացառելու նպատակով:»

Անցած տարիների փորձը ցույց տվեց, որ

նման մարմնի ստեղծումը լիովին արդարացված էր, և չնայած օրենսդրական անկատարությունը, աշխատակիցների փոքր թվաքանակին, ծառայությունն օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակում մեծամասամբ բարդ և հասարակական մեծ հնչեղություն ունեցող շուրջ 1000 քրեական գործ է քննել:

Քննիչների և բոլոր ծառայողների մասնագիտական բարձր պատրաստվածության, քաղաքացիական հստակ դիրքորոշման և ամենօրյա տրնաջան աշխատանքի շնորհիվ նկատելիորեն ակտիվացել է հանցագործությունների դեմ մղող պայքարը, ամրապնդվել համագործակցությունն ինչպես իրավապահ և ուժային այլ կառույցների, այնպես էլ քաղաքացիական հասարակության ինստիտուտների հետ, ինչը հանցավոր որտնագործություններից մեր հասարակության պաշտպանության հուսալի նախադրյալներից է:

Կրկին ջերմորեն շնորհավորելով Ձեր և Ձեր դեկավարած կոլեկտիվի աշխատակիցներին մասնագիտական տոնի առթիվ՝ մաղթում ենք հաջողություններ Ձեր դժվարին ու պատախանատու աշխատանքում և անձնական կյանքում», - ասված է ՀՀ գլխավոր դատախազության ուղարկում:

Հանրապետության հատուկ քննչական ծառայության 5-րդ տարեդարձի կապակցությամբ Ծառայության պետ Անդրանիկ Միրզոյանը գլխավոր դատախազի հրամանով պարգևատրվել է հուշանվերով:

Աշխատանքային պարտականությունները բարեխսղորեն կատարելու համար ՀՀ

գլխավոր դատախազության շնորհակալագործ պարգևատրվել են. հատկապես կարևոր գործերի ավագ քննիչ Ա. Երեմյանը՝ հատկապես կարևոր գործերի քննիչներ Ռ. Ամիրիխանյանը, Վ. Մկրտչյանը, Ա. Կարապետյանը:

«Օրինականություն» գիտագործնական հանդեսը սիրով միանում է հոբելյանի առթիվ ստացված շնորհավորանքներին և Հատուկ քննչական ծառայության մեր գործընկերներին մաղթում աշխատանքային կորով, առողջություն և հաջողություններ:



ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ ՀՀ ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱԿԱՐԳՈՒՄ

ԵՐԵՄՅԱՆ ԳԱԼՈՐԾ ԽԱՀԻԿԻ

Ծնվել է 1951 թվականին, Ապարանի շրջանի Չորագլուխ գյուղում:

Ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետը:

ՀՀ դատախազության համակարգում աշխատում է 1974 թվականից. շրջանային դատախազության քննիչ, ավագ քննիչ, ՀԽՍՀ դատախազին առընթեր ՀԿԳ քննիչ, շրջանային դատախազի ավագ օգնական, շրջանային դատախազի տեղակալ, Ապարանի շրջանի դատախազ, ՀՀ գլխավոր դատախազության վարչության ավագ դատախազ, վարչության պետի տեղակալ, Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի դատախազ:

Արդարադատության երրորդ դասի պետական խորհրդական է, արժանացել է պետական և գերատեսչական պարգևների ու խրախուսանքների:

ՀՀ գլխավոր դատախազի 2012 թվականի նոյեմբերի 7-ի հրամանով Գ. Երեմյանը նշանակվել է Երևան քաղաքի Արարկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազ:

ԴՎԹՅԱՆ Արթուր Սարգսի

Ծնվել է 1978 թվականին, Շիրակի մարզի Հոռոն գյուղում:

Ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետը և դասախոսել նույն ֆակուլտետում: Իրավաբանական գիտությունների թեկնածու է:

ՀՀ դատախազության համակարգում է 2006 թվականից. ՀՀ գլխավոր դատախազության վարչության քրեագետ-դատախազ, ՀՀ գլխավոր դատախազության մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետի տեղակալ:

Արժանացել է պարգևների և խրախուսանքների:

ՀՀ գլխավոր դատախազի 2012 թվականի նոյեմբերի 7-ի հրամանով Ա. Դավթյանը նշանակվել է Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի դատախազ:

ՀԱԿՈԲՅԱՆ Նորայր Հայրապետի

Ծնվել է 1955 թվականին Սիսյանի շրջանի Բորիսովկա գյուղում:

Ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետը: Իրավաբանական գիտությունների թեկնածու է:

Աշխատել է Սիսյանի քաղաքությունի նախագահ, Սյունիքի մարզի դատախազի տեղակալ, ՀՀ գլխավոր դատախազության քամնի պետ, ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության պետի տեղակալ:

Խորախուսվել է ՀՀ գլխավոր դատախազի հրամաններով, արժանացել գերատեսչական պարգևների:

ՀՀ գլխավոր դատախազի 2012 թվականի նոյեմբերի 6-ի հրամանով Ն. Հակոբյանը նշանակվել է Սյունիքի մարզի դատախազ:

ԽՈՒԼԻԳԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԵՄԱԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ,

որակման իհմնախնդիրները և նրա
սահմանազատումը այլ հանցագործություններից

Արամ ԹԱՍԱԶՅԱՆ

ՀՀ գլխավոր դատախազութեղակալ,
արդարադատության պետական խորհրդական,
իրավաբանական գտությունների դոկտոր

Հոդվածում արծարծված հարցերը վերաբերում են խովհանության հանցակազմի առանձնահատկություններին, նրա շարժառիթների բովանդակային մեկնաբանությանը, խովհանական դրդումների և անձնական անքարյացակամ հարաբերություններից բխող վրեժի շարժառիթների տարանջատմանը, դիտավորության դրսւորման եղանակին, խովհանության և այլ հանցագործությունների, մասնավորապես, խովհանական դրդումներով կատարված սպանության, սպանության կամ առողջությանը ծանր վնաս պատճառելու սպառնալիքի, իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելու, գոյքը դիտավորությամբ ոչնչացնելու կամ վնասելու, վանդակիզմի և այլ հանցակազմերի տարանջատմանն ու գուգորդումներին:

Խովհանությունը հանրորեն առավել վտանգավորություն ներկայացնող արարք է, որն էական վնաս է պատճառում ինչպես պետության ու հասարակության շահերին, այնպես էլ քաղաքացիների իրավունքներին և օրինական շահերին: Նետսլաբար, խովհանության դեմ պայքարը եղել և մնում է իրավապահ մարմինների առաջնահերթ խնդիրներից մեզը, որի լուծման արդյունավետությունը պայմանավորված է նի շարք գործոններով, այդ թվում՝ քրեական օրենսդրության կատարելագործմանը և դրա կիրարկման միատեսակ պրակտիկայի ծևավորմանը:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը «Հայաստանի Հանրապետությունում հանցագործությունների կանխարգելման պետական ծրագիրը հաստատելու մասին» որոշմամբ խնդիր է դրել գիտական հաստատությունների և պատկան պետական մարմինների առջև՝ իրականացնելու «հանցավորության դեմ պայքարի հիմնախնդիրների վերաբերյալ հանակարգված և գիտականորեն հիմնավորված առաջարկությունների մշակում և ներդրում»:

Այս կապակցությամբ առանձնակի ուշադրության է արժանի խովհանության հանցակազմի գիտական վերլուծությունը, որը, թեպետ, եղել է ոչ թիզ թվով գիտականների ուսումնասիրության առարկան, սակայն դրան առնչվող առանձին հարցեր դեռևս վիճահարույց բնույթ են կրում ինչպես գիտության մեջ, այնպես էլ քրեական իրավունքի գործնական կիրառման ժամանակ՝ պայմանավորված նաև վերջին տասնամյակի ընթացքում հանցակազմի թե՛ հասկացության, թե՛ նրա որակյալ տեսակները բնորոշող հանգամանքներում կատարված որակական փոփոխություններով:

Հարցերը, որոնք ծագել և ծագում են տեսության մեջ և գործնականում, վերաբերում են խովհանության հանցակազմի առանձնահատկություններին, նրա շարժառիթների բովանդակային մեկնաբանությանը, խովհանական դոդումների և անձնական անքարյացակամ հարաբերություններից բխող վրեժի շարժառիթների տարանջատմանը, դիտավորության դրսւորման եղանակին, խովհանության և այլ հանցագործությունների, մասնավորա-

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԴԱՏԱԽԱՉԻՆ, ՔՆԵՒԶԻՆ

պես, խուլիգանական դրորումներով կատարված սպանության, սպանության կամ առողջությանը ծանր վնաս պատճառելու սպասնալիքի, իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելու, գույքը դիտավորությամբ ոչնչացնելու կամ վնասելու, վանդալիզմի, թաղման վայրերն անարգանքի ենթարկելու և այլ հանցակազմերի տարանջատմանն ու գործոդումներին:

Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի՝ խուլիգանությունը դիտավորությամբ հասարակական կարգը կոպիտ կերպով խախտելն է, որն արտահայտվել է հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով։ Խուլիգանության հանցակազմի նման սահմանումը միաժամանակ հանդիսանում է տվյալ հանցակազմի հասարակ տեսակը և սահմանված է ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասով, ի տարբերություն նախկին ծևակերպման, երբ քրեորեն պատժելի խուլիգանության համար պարտադիր հատկանիշներ էին նաև անձի նկատմամբ բռնություն գործադրելու կամ դա գործադրելու սպասնալիքը, ինչպես նաև ուրիշի գույքը ոչնչացնելը կամ վնասելը, որպիսիք ներկայունս հանդիսանում են արարքը որակյալ դարձնող հատկանիշներ և սահմանված են ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով։

Հասարակական կարգը մարդկանց ամենօրյա կենսագործունեության՝ աշխատանքի, կենցաղի, հանգստի ընթացքում նորմայ փոխհարաբերություններն ապահովող հասարակական հարաբերությունների ամբողջությունն է։ **Հասարակական կարգը, որպես քրեաիրավական պաշտպանության օբյեկտ**, հասարակական անդորրը, հասարակական բարոյականությունը, այդ թվում՝ քաղաքացիների կողմից հասարակական վայրերում օրինապահ և կայուն վարքագծի պահպանումը, տրանսպորտի անխափան աշխատանքը, հիմնարկությունների, ծեռնարկությունների, անձանց ֆիզիկական և բարոյական անձնումիտելիությունն ապահովող հասարակական հարաբերությունների ամրողջությունն է։ Այս և նմանատիպ հասարակական հարաբերությունների դեմ ուղղված հասարակության նկատմամբ բացահայտ ան-

հարգալից վերաբերմունք արտահայտող և հասարակական կարգը կոպտորեն խախտող գործողությունների կատարումը հանդիսանում է **խուլիգանության հանցակազմի օբյեկտիվ կողմը**։

Գործնականում իրավակիրառ մարմինները երբեմն շփորում են հասարակական կարգը հասարակական վայրում կարգ ու կանոնի հետ, որը հանգեցնում է այն սխալ հետևողական մարդկանց ներկայությամբ։ Մինչդեռ, հասարակական կարգը կարող է խախտվել ինչպես վերը նշված հասարակական վայրերում՝ մարդկանց ներկայությամբ, որպիսիք կազմում են խուլիգանության դեպքերի հիմնական մասը, այնպես էլ հասարակական վայրերում մարդկանց բացակայության դեպքում, ինչպես նաև կոմունալ և առանձին մեկուսացված բնակարանում, նույն ընտանիքի անդամների միջև հարաբերություններում, դաշտում, անտառում և այլն, քանի որ **այնտեղ, որտեղ կա շփում մարդկանց միջև, միշտ էլ պետք է պաշտպանվի փոխհարաբերությունների որոշակի կարգ, ապահովվի բարոյական նորմերի պատշաճ պահպանում**։ Այսինքն, հասարակական կարգը կարող է խախտվել թե՝ հասարակական վայրում, թե՝ նրանից դուրս՝ ոչ հասարակական վայրում, թե՝ նրանց բացակայության դեպքում։

Ընդհանրապես, թեկուզ և ներ իմաստով ընկալմանք, հասարակական կարգը չի կարելի նույնացնել հասարակական վայրի հետ, դա ընդունելի չէ թե՝ տեսական, թե՝ գործնական առումով։ Խուլիգանության համար քրեական պատասխանատվության պարտադիր պայմանը հասարակական կարգն է, և ոչ թե հասարակական վայրը։

Ինչ վերաբերում է խուլիգանությանը հասունք **հրապարակայնության** հատկանիշին, ապա այն պայմանավորված չէ միայն արարքի կատարման ժամանակ մարդկանց առկայությամբ, այն կարող է կատարվել նաև նրանց բացակայությամբ, այդ թվում՝ գիշերային ուշ ժամերին, նաև՝

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԴԱՏԱԽԱՉԻՆ, ՔԵՆԵՐԻՆ

գաղտնի: Վերջին դեպքում պարտադիր է, որպեսզի անձը գիտակցի, որ իր դրսնորած խոլիգանական վարժագիծը կարծ ժամանակ անց հայտնի կդառնա հասարակության լայն շերտերին կամ բնակչության որոշակի նասին:

Հասարակական կարգի կոպիտ խախտումը և հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքի դրսնորումն ընդամենը խոլիգանության հանցակազմի օբյեկտիվ կողմի դրսնորումն է՝ հանցավոր նպատակին հասմելու եղանակ:

Հասարարական կարգը կոպիտ կեպով կարող է խախտվել և հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքի դրսնորումն ընդամենը խոլիգանության հանցակազմի օբյեկտիվ կողմի դրսնորումն է՝ հանցավոր նպատակին հասմելու եղանակ:

Մինչեւ, մարդկային արարքի արտաքին, օբյեկտիվ դրսնորումը, որքան էլ այն վտանգավոր լինի, բավարար չէ արարքի քրեականական գնահատման համար առանց հանցագործության սուբյեկտիվ կողմը բնութագրող հատկանիշների՝ մեղքի, շարժարիթի, նպատակի, հույզերի բացահայտման, որի իրավաբանական նշանակությունը կայանում է նաև նրանում, որ թույլ է տալիս իրարից տարբերել օբյեկտիվ կողմով միմյանց նման հանցակազմերը և ապահովել հանցագործությունների ճիշտ որակումը: Միայն հանցակազմի սուբյեկտիվ կողմի դրսնորմամբ է, որ նույն արարքը, օրինակ՝ գույքի բացահայտ հափշտակումը մի դեպքում կարող է որակվել որպես կողոպուտ, մյուս դեպքում՝ գույքի դիտավորյալ ոչնչացում, երրորդ դեպքում՝ խոլիգանություն և այլն:

Հասարակական կարգը կոպտորեն

խախտվում է բազմաթիվ հանցագործությունների կատարման դեպքում, սակայն միայն այն շարժառիթների և դրումների դեպքում է արարքը հանցավոր խոլիգանություն, երբ դրանցում արտահայտվում են բացահայտ անհարգալից վերաբերմունք հասարակության նկատմամբ, երբ հանցավորի գործողությունները պարունակում են հասարակական կարգի կոպիտ խախտման, հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքի այնպիսի դրսնորումներ, ինչպիսիք են հասարակության և բարոյականության համբերի հանցագործությունները, որում անհարգալի դրսնորումները, ինչպիսիք են հասարակության և բարոյականության համբերի ծանաչում ստացած նորմերին նետված բացահայտ մարտահրավերը, շրջապատին և հասարակության իրեն հակադրելու և հակազդելու ցանկությունը, իր անձի «առավելություններն» ընդգծելու մոլուցքը, «ինքնահաստատման» պահանջը, եսանդությունը, սանձարձակությունը, կատաղի, անպարկեշտ վարժագիծը, ցինզամը, դաժանությունը, հանդգնությունը և այլն: Նշված հանգամանքները բնութագրում են նաև հանցագործի անձի խիստ բացասական հատկանիշները և նրա կողմից կատարած արարքի առավել վտանգավոր բնույթը:

ԽՈԼԻԳԱՆՈՒԹՅԱՆ ՇԱՐԺԱՌԻԹԸ անձի՝ իր «առավելություններն» ընդգծելու մոլուցքն է, «ինքնահաստատման» ձգտումը, շրջապատին և հասարակությանը հակադրելու և հակազդելու հանդուզն ցանկությունը, որին նա ձգտում է հասնել հասարակական կարգի կոպիտ խախտման և հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսնորելու միջոցով: Շարժառիթը նպատակին հասնելու ցանկությունն է, իսկ նպատակը շարժառիթի հիմքի վրա ծևավորված այն պայքար ցանկալի վիճակի մասին պատկերացումն է, որին ձգտում է հասնել անձը:

Խոլիգանության շարժառիթը, ըստ **Բ.Ս.Վոլկովի**, անձի հատկապես անհարգալից ծևով իրեն դրսնորելու և համակեցության պահանջների ու կանոնների նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունք հանդես բերելու ձգտումն է: **Ս.Ա.Տարարուխինը** խոլիգանության շարժառիթը սահմանում է որպես «հասարակական կարգը խախտող զանազան վկտի և հանդուզն գործողությունների միջոցով հասարակության նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսնորելու գիտակցակած մղում»:

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԴԱՏԱԽԱՉԻՆ, ՔՆԵԼՉԻՆ

Հաճախ այս հանցագործությունը կատարվում է առանց տեսանելի առիթի, կամ աննշան առիթն օգտագործվում է որպես պատրվակ խուզիգանություն կատարելու համար: Տեսանելի առիթի բացակայությունը երբեմն այն տպավորությունն է ստեղծում, թե խուզիգանությունը կատարվում է առանց շարժառիթի: Սակայն առանց շարժառիթ դիտավորյալ գործողություններ, այդ թվում՝ խուզիգանություն չի լինում: Առանց շարժառիթի արարքներ կարող են կատարել միայն իրենց արարքի փաստական կողմն ու հասարակական վտանգավորությունը չգիտակցող և այդպիսիք դեկավարելուն անընդունակ, անմեղսունակ անձիք:

Մյուս դեպքում՝ գիտակցական և նպատակառդպված մարդկային յուրաքանչյուր գործողություն հետևանք է որոշակի մղումների և ներքնապես պատճաբանված է: Այդ պատճառով էլ պետք է նկատի ունենալ այն կարևոր հանգամանքը, որ խուզիգանության շարժառիթը պատճառաբանված է ոչ պակաս, քան այլ հանցագործությունների դեպքում, և որ առաջին հայացքից անտրամաբանական, աննպատակ, անորոշ և բովանդակազուրկ թվացող արարքները պայմանավորված են հանցավորի համար իմաստավորված, գիտակցված և նպատակային գործողություններով:

Խուզիգանության սուբյեկտիվ կողմը բնութագրվում է դիտավորությամբ:

Ինչպես արդեն նկատեցինք, խուզիգանության շարժառիթի բացահայտումը կարևոր նշանակություն ունի արարքը ճիշտ որակելու, խուզիգանությունն այլ հանցագործություններից և առաջին հերթին ամեն դեմ ուղղված հանցագործություններից տարբերելու համար: Այսինքն, հանցակազմի սուբյեկտիվ կողմի հատկանիշներով են պայմանավորված խուզիգանության և այլ հանցագործությունների տարբերությունները:¹

Արարքի ճիշտ քրեակրավական գնահատման համար անհրաժեշտ է նաև հստակ սահմանազատում կատարել մի կողմից խուզիգանության՝ որպես հասա-

րակական կարգի դեմ ուղղված հանցագործության, և մյուս կողմից խուզիգանական շարժառիթի՝ որպես արարքի հոգեբանական հատկության միջև: Խուզիգանական շարժառիթը և խուզիգանությունը որպես հանցագործություն չեն նույնացվում: Խուզիգանական շարժառիթը կարող է դրսևորվել առանց խուզիգանության հանցակազմի օբյեկտիվ կողմի՝ առանց հասարակական կարգը կուտորեն խախտող և հանրության հանդեպ բացահայտ անհարգալից վերաբերումների պատահայտող գործողությունների կատարման և հակառակը՝ հասարակական կարգի խախտումը կարող է դրսևորվել առանց խուզիգանական շարժառիթների: Այսինքն՝ խուզիգանական շարժառիթը խուզիգանության հանցակազմի պարտադիր հատկանիշներից միայն մեկն է, և խուզիգանական շարժառիթի առկայությունը դեռևս չի նշանակում ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածով նախատեսված հանցագործության կատարում:

Զեա խուզիգանություն այն դեպքում, երբ ծեծը, առողջությանը վնաս պատճառելը և նմանատիպ արարքները կատարվել են անձնական անբարյացակամ հարաբերությունների հողի վրա, տուժողների ոչ իրավաչափ և անօրինական գործողությունների արդյունքում ծևավորված վրեժի շարժառիթով: Խուզիգանական դրդումները և կենցաղային շարժառիթները (Վրեժ, խանո, անձնական անբարյացակամ հարաբերություններ) արարքի որակման ժամանակ բացառում են մինյանց:

Գործնականում, սակայն, պատահում են դեպքեր, երբ առողջությանը վնաս պատճառելը, ծեծը կամ նմանատիպ այլ արարքները կատարվում են անձնական անբարյացակամ հարաբերությունների հողի վրա, բայց դրանով անձը **միաժամանակ** կոպիտ կերպով խախտում է հասարակական կարգը և բացահայտ անհարգալից վերաբերումներ դրսևորում հասարակության մկանամբ:

Երբեմն անձնական անբարյացակամ հարաբերությունների առիթով սկսված

¹ Տե՛ս. Բ.С. Վոլկով. Проблема воли и уголовная ответственность. Казань. 1965. с.28,151-152: Տե՛ս. նաև С.А.Тарарухин. Преступное поведение. Социально-психологические черты. М.1974. с.98:

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԴԱՏԱԽԱՉԻՆ, ՔՆԵՒԶԻՆ

գործողությունները **Վերածում են հասարակական կարգի դեմ ուղղված հանցագործության, երբ հանցավորն ակնհայտութեն անտեսում և արհանարհում է երրորդ անձանց՝ հասարակության շահերը (անձանց գիշերային հանգստի խանգարումը, հարևանների կողմից արված դիտողություններից հետո իր գործողությունները համարուեն չդադարեցնելը և այլն) և դրսերում շրջապատին և հասարակությանը հակառակելով և հակազդելով հանդուգն ցանկություն, իր «առավելություններն» ընդգծելու մոլուցք, «ինքնահասատատման» ձգուում:**

Այս և նման այն դեպքերում, երբ անձի գործողություններն ուղեկցվել են հանցավորի համար ակնհայտ հասարակական կարգի կոպիտ խախտնամբ և արտահայտել հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունք՝ առկա է խուլիզանության հանցակազմը, կարևոր մի հանգամանք, որը, ցավոք, վերջին տարիներին հաճախ անտեսվել է իրավակիրաց մարմինների կողմից, որի արդյունքում արիեստականորեն նվազել են խուլիզանության դեպքերը ի հաշիվ անձի դեմ ուղղված հանցավոր արարքների աճի:

Օրինակ. կինոթատրոնում, համերգասրահում, ռեստորանում անձնական անբարյացական հարաբերությունների հողի վրա ծագած կրիվը, կոնկրետ հանգամանքներից ելնելով, կարող է վերաճել խուլիզանության՝ շրջապատին և հասարակությանը հակառակելով հանդուգն ցանկությամբ հասարակական կարգի կոպիտ խախտնան և հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքի դրսերման:

ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հասարակ խուլիզանության հանցակազմը ճեղկան է, հանցագործությունն ավարտված է համարվում հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքի դրսերմանը հասարակական կարգը կոպիտ կերպով խախտող գործողություններ կատարելու պահից:

Խուլիզանությունը, որը գուգորդվել է անձի նկատմամբ բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով, ինչպես նաև ուրիշի գույքը ոչնչացնելով կամ վնասելով, հանդիսանում է ա-

րարքը որակյալ դարձնող հատկանիշ և նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով:

Անձի նկատմամբ բռնության գործադրությունը դրսերմում է հարվածներ հասցնելով, ծեծով, ֆիզիկական ցավ, առողջությանը վնաս պատճառելով կամ բռնության բռնույթ կրող և այդ մասին վկայող այլ գործողություններով:

Անձի նկատմամբ բռնություն գործադրելու սպառնալիքը կարող է դրսերմով կել ինչպես հարվածներ հասցնելու, ծեծի կամ առողջությանը վնաս պատճառելու սպառնալիքի, այնպես էլ սպանության սպառնալիքի ծևով:

Գույքի ոչնչացումը գույքն այնպիսի վիճակի հասցնելն է, որի արդյունքում այն լիովին դառնում է անպետք և չի կարող ծառայել իր նպատակային նշանակությանը:

Գույքը վճասելը գույքի հատկանիշների այնպիսի փոփոխությունն է, որի դեպքում գույքի վիճակն եւականորեն վատթարանում է, կորսվում են դրա օգտակար հատկությունները կամ դրանց զգալի մասը, և գույքը լրիվ կամ մասնակիորեն դառնում է անպետք նպատակային կամ տնտեսական նշանակության համար: Ի տարերություն գույքի ոչնչացման, վնասման դեպքում օրոշակի ծախսումներով հնարավոր է վերականգնել գույքի որակական հատկանիշները, դրա հետ միասին՝ նրա տնտեսական նշանակությունը:

ՀՀ քրեական օրենսգրքի **258-րդ հոդվածի 3-րդ մասը** սահմանում է ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարքներ, որոնք.

ա) կատարվել են մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից,

բ) գուգորդվել են իշխանության ներկայացուցչին կամ հասարակական կարգի պահպանության պարտականություն իրականացնող կամ հասարակական կարգի խախտումը խափանող անձին դիմադրություն ցույց տալով,

գ) գուգորդվել են անձի առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելով,

դ) գուգորդվել են բացարիկ ցինիզմով:

Արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով որակվում է այն դեպքում, երբ **այն կատարվել է մի խումբ անձանց կամ կազմակերպ-**

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԴԱՏԱԽԱՉԻՆ, ՔՆԵՒԶԻՆ

Ված խմբի կողմից: Օրենքի սահմանումից հետևում է, որ արարքի որակման համար կապ չունի խմբի կողմից խուլիգանությունը կատարվել է նախնական, թե առանց նախնական համաձայնության: Երկու դեպքում էլ գործ ունենք համակատարման՝ խմբի անդամների կողմից խուլիգանության կատարման հետ:

Միաժամանակ, անհրաժեշտ է հստակորեն պարզել, թե կոնկրետ ինչպիսի գործողությունները են կատարել համակատարողները՝ կապված անձի նկատմամբ կիրառված բռնության գործադրման կամ դրա գործադրման սպառնալիքի, ինչպես նաև ուրիշի գույքը ոչնչացնելու կամ վճասելու հետ: Նկատի ունենալով, որ մի խունք անձանց կամ կազմակերպված խմբի կողմից կատարված խուլիգանության համար պատասխանատվությունն օրենսդրության է ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարքի հետ, ուստի խմբի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված խուլիգանության կատարման դեպքում հանցավորի արարքը չի կարող որակվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով: Խմբի առկայության նման դեպքում, փաստորեն, հանցակիցներից յուրաքանչյուրի արարքը ենթակա է որակման ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասով, չնայած այն իր բնույթով, բնականարար, ավելի վտանգավոր արարք է, քան ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված նույն հանցագործությունը մեկ անձի կողմից կատարելը:

Խմբի կողմից անձի նկատմամբ կիրառված բռնության դեպքում խմբի յուրաքանչյուր անդամի գործողություն ենթակա է որակման ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, իսկ կատարողի սահմանազանցման դեպքում լրացնելու դաշտում է պահանջում միայն այն կատարողի արարքը:

Այս դեպքում, եթե մի խունք անձանց կամ կազմակերպված խմբի կողմից կատարված խուլիգանության ընթացքում տուժողի առողջությանը պատճառվել է թերև վնաս, հանցակիցների արարքը ենթակա է որակման ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով: Այս դեպքերում, եթե խմբի կողմից կատարված խուլիգանության ընթացքում տուժողին պատճառվել է միջին ծանրության

վնաս՝ հանցակիցների արարքը ենթակա է որակման ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 4-րդ կետերով, ծանր մարմնական վնաս պատճառելու դեպքում՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի և 112-րդ հոդվածի համակցությամբ, տուժողին մահ պատճառելու դեպքում՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ և 104-րդ հոդվածների համակցությամբ:

Խմբի կողմից զենք կամ որպես զենք օգտագործվող առարկաների գործադրումամբ ծանր մարմնական վնաս կամ տուժողին մահ պատճառելու դեպքում արարքը ենթակա է որակման ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխանաբար 258-րդ հոդվածի 4-րդ մասով և 112-րդ հոդվածի համակցությամբ կամ 258-րդ հոդվածի 4-րդ մասով և 104-րդ հոդվածի համակցությամբ:

Եթե 18 տարին լրացած անձը խուլիգանության կատարմանը ներգրավել է տվյալ հանցագործության համար քրեական պատասխանատվության տարիքի հասած անչափահասի, ապա նրա արարքը լրացնելով պետք է որակել նաև ՀՀ քրեական օրենսգրքի 165-րդ հոդվածով՝ անչափահասին հանցանքի կատարմանը ներգրավելու համար:

Այս դեպքում, եթե խուլիգանության կատարման ժամանակ հանցավորն անձի կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելու նպատակով օգտագործել է անձի կյանքի ու առողջության համար վտանգ ներկայացնող կենդանիների, ապա գործի հանգամանքներից ելնելով՝ հանցավորի արարքը կարող է որակվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով, իսկ դրանց միջոցով տուժողին ծանր մարմնական վնաս կամ մահ պատճառելու դեպքում՝ նաև ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ կամ 104-րդ հոդվածով:

ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով է որակվուն ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված խուլիգանական արարքը, որը գուգորդվել է հշխանության ներկայացնելու կամ հասարակական կարգի պահպանության պարտականություն իրականացնող կամ հասարակական կարգի խախտումը խափանող անձին դիմադրություն ցույց տալով:

Խուլիգանության հանցակազմի տվյալ

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԴԱՏԱԽԱՉԻՆ, ՔՆԵՒԶԻՆ

որակյալ հատկանիշը, ըստ էռթյան, ընդգրկում է խուլիգանության հետ զուգորդված հետևյալ արարքները.

- ա) իշխանության ներկայացուցչին դիմադրություն ցույց տալը,
- բ) հասարակական կարգի պահպանության պարտականություն իրականացնող անձին դիմադրություն ցույց տալը,
- գ) հասարակական կարգի խափուռնը խափանող անձին դիմադրություն ցույց տալը:

Այսինքն, դիմադրությամբ զուգորդված խուլիգանությունն ունի տուժողների երեք խումբ հասցեատերեր:

ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, իշխանության ներկայացուցիչ է համարվում պետական և տեղական ինքնակառավարման մարմիններուն ծառայող այն անձը, ով ծառայողական ենթակայության տակ չգտնվող անձանց նկատմամբ սահմանված կարգով օժտված է կարգադրիչ լիազորություններով:

Հասարակական կարգի պահպաննան պարտականություն իրականացնող անձինք կարող են լինել ներքին զորքերի գինծառայողները և այն անձինք, ովքեր օժտված են հասարակական կարգի պահպաննան որոշակի լիազորություններով: Ինչ վերաբերում է հասարակական կարգի խախտումը խափանող անձին, ապա այն կարող է լինել ցանկացած անձ:

Իշխանության ներկայացուցիչն և հասարակական կարգի պահպանության պարտականություն իրականացնող, ինչպես նաև հասարակական կարգի խախտումը խափանող անձին դիմադրություն ցույց տալն արտահայտվում է ակտիվ գործողություններով՝ հարվածներ հասցելով, ծեծով, ֆիզիկական ցավ, վնաս պատճառելով, ինչպես նաև այդպիսի գործողությունների սպառնալիքներով:

Հանցավորի խուլիգանական գործողությունների խափանմանը, հանցագործին գինաբակելուն, ծերեակալմանն ուղղված իշխանության ներկայացուցիչ կամ այլ անձանց օրինաչափ գործողություններին ակտիվ հակազդմամբ դիմադրություն ցույց տալը պետք է տարբերել չարամիտ անհնազանդությունից, այն է՝

անձի այնպիսի պասիվ վարքագծից, որը պայմանավորված է նրա կողմից խուլիգանական գործողությունները դադարեցնելու պահանջի կատարումից հրաժարվելու, այդ թվում՝ իրենց հետ ոստիկանություն գնալու պահանջից առանց ակտիվ հակազդման հրաժարվելու հետ և այլն:

Անձի պասիվ վարքագծով պայմանավորված անհանազանդության ննան դեպքերում հանցավորի արարքը չի կարող որակվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով: Բացի այդ, հարկ է նկատել, որ որոշ դեպքերում դիմադրությունը կարող է կրել նաև ոչ բռնի բռնույթ, այսինքն, կարող է դրսևորվել նաև առանց բռնության կամ բռնության սպառնալիքի, և նման դեպքում նույնպես հանցավորի արարքը չի կարող որակվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, որքանով որ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասը հղում է կատարում նույն հոդվածի 2-րդ մասին, որտեղ չարամիտ խուլիգանության տակ հասկացվում է խուլիգանության այն դեպքերը, որոնք զուգորդվել են անձի նկատմամբ բռնության գործադրմամբ կամ դրա սպառնալիքով:

ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցակազմում սահմանված դիմադրությունը պետք է ցույց տրվի խուլիգանության կատարման ընթացքում կամ պայմանավորված լինի նրա կատարմամբ: Դիմադրությունը, պայմանավորված թույլ տրված վարչական կամ այլ իրավախախտմամբ, կամ զուգորդված ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված խուլիգանությամբ, չի կարող որակվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, որքանով որ այս դեպքում նույնպես ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով սահմանված պատասխանատվությունը օրենսդիրը կապում է ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարքի կատարման հետ: Կապված արարքի բռնւթից՝ նման դեպքերում հանցավորի արարքը կարող է որակվել ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի համապատասխան մասով:

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԴԱՏԱԽԱՉԻՆ, ՔԵՆԵՐԻՆ

Խուլիզանության ավարտից հետո իշխանության ներկայացուցչին, հասարակական կարգի պահպանություն իրականացնող անձին դիմադրություն ցույց տալը, այդ թվում՝ անձի ծերբակալման, զինաթափման ժամանակ, ենթակա է որակման խուլիզանության և ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածների համակցությամբ: Նման դեպքում հանցավոր արարքը չի պարունակում ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցագործության հատկանիշներ:

ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով սահմանված հանցակազմը նախատեսում է խուլիզանական գործողությունների կատարման ժամանակ այնպիսի դիմադրություն, որն արտահայտվել է կյանքի և առողջության համար ոչ վտանգավոր բռնության կիրառմամբ կամ դրա սպառնալիքով: Տվյալ դեպքում հանցավորի արարքը ամբողջովին ընդգրկվում է ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետում և այն նաև ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածով չի որակվում:

Առողջությանը ծանր, միջին ծանրության և առողջությունը քայլայող թերեւնարմնական վնաս պատճառելու դեպքում արարքը որակվում է հանցագործությունների համակցությամբ՝ իշխանության ներկայացուցչին դիմադրություն ցույց տալու մասով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ և 316-րդ հոդվածի 2-րդ մասի համակցությամբ, հասարակական կարգի պահպանության պարտականություն իրականացնող անձին դիմադրություն ցույց տալու կամ հասարակական կարգի խախտումը խափանող անձին դիմադրություն ցույց տալու դեպքերում՝ պատճառված թերեւնարմնական վնասի դեպքում՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասով, ծանր վնասի դեպքում՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ և 112-րդ հոդվածների համակցությամբ:

Եթե դիմադրության ընթացքում նշված անձանց առողջությանն անզգուշությամբ թերեւն, միջին կամ ծանր վնաս է պատճառվել, ապա արարքը ենթակա է որակման ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասով, իսկ տուժողին անզգուշությամբ մահ պատճառելու դեպքում՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասով և 109-րդ հոդվածով:

Իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնի գործողությունները պետք է որակել խուլիզանություն, եթե նրանք կատարվել են խուլիզանական դրդումներով, այլ չեն ծագել պաշտոնատար անձի ծառայողական գործունեության հետ կապված վեծի, հակամարտության հետևանքով:

Հասարակական կարգը խախտողի գործողությունները խափանելու հետ կապված բռնությամբ գուգորդված դիմադրությունը ենթադրում է մեղավոր անձի նկատմամբ ակտիվ հակագդեցություն, այդ թվում և նրա խուլիզանական գործողությունները դադարեցնելուն կամ նրա ծերբակալմանն ուղղված ուժի կիրառում: Նման դեպքում չի բացավում խուլիզանական գործողությունները խափանող անձի կողմից հանցավորին վնաս պատճառելը:

Վնաս պատճառելու նման դեպքերը պետք է քննարկվեն ՀՀ քրեական օրենսգրքի 43-րդ հոդվածի կանոններով, որպես արարքի պատճելիությունը բացառող հանգամանքի, իսկ եթե անձի կողմից թույլ է տրվել հանցանք կատարած անձին բռնելու համար անհրաժեշտ միջոցների սահմանազանցում, ապա դա կարող է դիտվել որպես հանցագործություն, եթե հատկապես նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասով:

Հանցագործությունների կրկնակիրության ինստիտուտի ուժը կորցրած ճանաչելու հիմքով՝ 23.05.2011թ. ուժը կորցրած է ճանաչվել նաև ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետը:

ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով սահմանված հանցակազմը նախատեսում է ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված այնպիսի արարքի կատարումը, որն անձի առողջությանը պատճառել է միջին ծանրության վնաս: Խուլիզանության հանցակազմի համար այս ծանրացնող հանգամանքի նախատեսումը գործնականում որոշակի շփոր է առաջացնում՝ կապված ՀՀ քրեական օրենսգրքի 113-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով նախատեսված հանցակազմի, այն է՝ խուլիզանական դրդումներով առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելու հետ:

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԴԱՏԱԽԱՉԻՆ, ՔՆԵՒԶԻՆ

Ստեղծված իրավիճակում, մեր կարծիքով, պետք է կիրառվի արարքների որակման հետևյալ կանոնը. եթե խուզանական դրդումներով առողջությանը պատճառվել է միջին ծանրության վնաս և այդ ընթացքում ինքնուրույն խուզանական գործողություններ չեն կատարվել, ապա արարքը պետք է որակել ՀՀ քրեական օրենսգրքի 113-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով՝ որպես խուզանական դրդումներով առողջությանը միջին ծանրության վնասի պատճառում, իսկ եթե խուզանական դրդումներով առողջությանը միջին ծանրության վնասի պատճառումը գործողությունների հետ, ապա հանցավորի արարքը պետք է որակել նշված հանցագործությունների համակցությամբ, այդ թվում՝ կապված կատարված խուզանության բնույթից՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի համապատասխան մասի և 113-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի համակցությամբ:

Յարկ է նկատել նաև, որ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի սանկցիան այլընտրանքային է, ուստի՝ ավելի մեղմ, քան 113-րդ հոդվածի 2-րդ մասի սանկցիան, որը նույնպես, ընդունված կանոնի համաձայն, որոշակի դեր է խաղում արարքը հանցագործությունների համակցությամբ որակելու հարցում:

Բոլոր դեպքերում, ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի սահմանումը հնարավորություն է տալիս նաև մեկնարանել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված բռնության հատկանիշի սահմանները, դրանք սահմանափակելով մինչև միջին ծանրության վնասի պատճառումը, հակառակ դեպքում բռնության հատկանիշին կարող էր տրվել տարածական մեկնարանում՝ ընդորկելով ոչ նիսան առողջության, այլև կյանքի համար վտանգավոր բռնության շրջանակները, այդ թվում՝ ծանր մարմնական վնաս պատճառելու դեպքերը և այլն:

Նկատի ունենալով, որ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է ընդամենը ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ կամ 3-րդ մասով նախատեսված արարքի կա-

տարումը զենքի կամ որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմամբ, ապա, բնականաբար, դրամից դուրս գտնվող արարքները, այդ թվում՝ դիտավորությամբ ծանր մարմնական վնաս պատճառելու դեպքերը, ենթակա են առանձին որակման, կոնկրետ դեպքում՝ խուզանության և դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու հանցագործությունների համակցությամբ: Տվյալ դեպքում արարքի որակման վրա որևէ կերպ չի կարող ազդել այն հանգանաքը, որ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության համար սահմանված պատժաչափն ավելի մեղմ է, քան զենքի գործադրմամբ կատարված խուզանությունը:

ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետը նախատեսում է ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարքի կատարումը, որը **գուգորդվել է բացարիկ ցինիզմով**: Բացարիկ ցինիզմն անձի խիստ անամոթ, լկուի վարքագիր դրսերումն է և վերաբերմունքը հասարակության նկատմամբ:

Օրենսդրական ձևակերպումից պարզուղ նկատելի է, որ այն դեպքերում, երբ բացարիկ ցինիզմի դրսերումը պայմանավորված չէ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարքի կատարմամբ, այն չի կարող հանդիսանալ խուզանության որակյալ տեսակի հատկանիշ: Այսինքն, ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքի կատարումը՝ գուգորդված բացարիկ ցինիզմով, ենթակա է որակման ոչ այլ կերպ, քան ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով սահմանված հանցակազմերի օբյեկտիվ հատկանիշների դրսերումնը՝ պայմանավորված ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության գուգորդմամբ:

(Ծարունակելի)

Իրավունքի հասկացության նորմատիվական դպրոցը

Վարդան ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀՀ գլխավոր դատախազության

թմրամիջոցների ապօրի շղանառության

հանցագործությունների գործերով բաժնի պետ

Գործող իրավունքի պողիտիվիստական իմացաբանությունը ուղղված է ոչ թե օրենքի եռթյան ձևնաշմանը, ոչ թե գործող իրավունքի մասին (փաստացի տրված իրավունքում բացակայող) իմացության, գիտելիքի ձեռքբերմանը, այլ դրա՝ որպես արդեն ձևնաշված և իմացած օրինական համարժեք իրավունքի տեսությունը պողիտիվ իրավունքի դոգմին և օրենքի մասին ուսմունքին հանգեցնելու, այլ այն բանին, որ իրավունքի համակողմանի հետազոտման ու ձևնաշման գործընթացում անհրաժեշտ է և կարևոր օգտագործել իմացաբանական բոլոր ձևերը, եղանակներն ու մեթոդները՝ իրավունքի ու օրենքի մասին հավաստի և ձգմարիտ գիտելիք ձեռք բերելու համար:

Աքսիոլոգիական առումով լեգիզմը իրավունքի և օրենքի (պողիտիվ իրավունքի) նույնացման և իրավունքի օբյեկտիվ, օրենքից և օրենսդրից անկախ հատկությունների և բնութագործի բացառման պատճառով, ըստ էության, մերժում է բուն իրավական արժեքները և ճանաչում է միայն օրենքի (պողիտիվ իրավունքի) արժեքը: Ըստ որում պողիտիվիստների կողմից ճանաչվող օրենքի (պողիտիվ իրավունքի) «արժեքը» իրականում զուրկ է բուն արժեքային իմաստից: **Օրենքի պողիտիվիստական արժեքը՝ նրա պաշտոնական համապարտադիրությունն է, իշխանային իմպերատիվայնությունը, այլ ոչ որևէ օրինական գործությունը:**

Այս առումով հատկանշական է Յանս Կելգենի ծայրահեղական-պողիտիվիստական մտեցումը, համաձայն որի իրավունքը արժեքավոր է միայն որպես իրաման, որպես նորմ: Այդ իմաստով (որպես իրաման, նորմ) իրավունքը բնութագործում է Քելգենի կողմից որպես պարտի ձև: «Չի կարելի, ինչպես դա հաճախ արվում է, ասել, որ իրավունքը իրենից ներկայացնում է ոչ միայն նորմ (կամ իրաման), այլև

որ այն կազմում կամ արտահայտում է որևէ արժեք (նման պնդումը իմաստ կունենա, եթե միայն բացարձակ աստվածային արժեքի ենթադրման դեպքում), - գրում է Կելգենը: -Չէ՞ որ իրավունքը արժեք է ներկայացնում միայն այն պատճառով, որ հանդիսանում է նորմ...»¹:

Սակայն այդ նորմը Կելգենի մոտ գուտ հրաման-պարտադրություն է, այլ ոչ թե հավասարության նորմ, ազատության նորմ, արդարության նորմ: Այն իր մեջ ոչինչ չի պարունակում իրավունքի ձևական-իրավական հատկանիշներից: Քելգենյան նորմը (և դրա հետ մեկտեղ իրավունքի ձևը) պարտի «մաքուր» ու դատարկ ձև է, որը պիտանի է ցանկացած կամայական պողիտիվ-իրավական բովանդակությանը իմպերատիվ-իրամայական կարգվիճակ ու բնույթ տալու համար:

Բնութագորելով իրավունքի մասին իր ուսմունքը, Կելգենը գրում է. «Այն փորձում է պատասխանել այն հարցին, թե ի՞նչ է իրավունքը և ինչպես այն կա, սակայն ոչ այն հարցին, թե ինչպիսին այն պետք է լինի կամ ստեղծվի: Այն հանդիսանում է իրավագիտության, սակայն ոչ իրավունքի բաղադրականությունը»²:

¹Տե՛ս Կիստո учение о праве Ганса Кельзена. Вып. 1. М., ИИИОН АН СССР, 1987, с. 93.

² Նույն տեղում, էջ 7.

«Իրավունքի մասին այս ուսմունքը կոչվում է «մաքուր» այն պատճառով, որ զբաղվում է միմիայն իրավունքով և «մաքուր» է ծանաշման ենթակա առարկան այն ամենից, ինչը չի հանդիսանում իրավունք խստիվ իմաստով: Այլ կերպ ասած, այն ձգտում է ազատել իրավագիտությունը նրան խորք տարրերից: Այդպիսին է նրա մեթոդիկայի սկզբունքը»^{3:}

Տեղողիշտիվսատական այս դիրքերից թելզենը քննադատում է ոչ միայն քննական-իրավական ուսմունքները, այլև XIX-XX դարերի ավանդական պողիտիվստական իրավագիտությունը: «Իրավագիտությունը: «Իրավագիտության միանգամայն անքննադատաբար «ընդլայնվել» է հոգեբանության և սոցիոլոգիայի, էթիկայի և քաղաքական տեսության հաշվին,-գրում է Կելզենը: - Նման ընդլայնումը բացատրվում է նրանով, որ այս գիտությունները գործ ունեն այնպիսի առարկաների հետ, որոնք, անշուշտ կապված են իրավունքի հետ: Եվ եթե իրավունքի մասին մաքուր ուսմունքը ցանկանում է սահմանազատել իրավունքի ճանաչումը հարակից դիսցիպլիններից, ապա ամենակին էլ ոչ այն պատճառով, որ չի նկատում կամ նույնիսկ բացառում է այդ կապը, այլև այն պատճառով, որ ցանկանում է խուսափել մեթոդաբանական սիմկրետիզմից, որը մթագնում է իրավագիտության էությունը և լրոցում է, նրա առարկայի բնույթով պայմանավորված, իր համար նախասահմանած շրջանակները»^{4:}

Ի տարբերություն բնության մասին գիտությունների, որոնք հենվում են իրականության կառուցական բացատրության վրա, իրավագիտությունը, ըստ Կելզենի, նորմատիվային գիտություն է իր սեփական, պարտի վրա հենվող նորմատիվային (ձևական-տրամաբանական) մեթոդով:

«Բնորոշելով իրավունքը որպես նորմ (կամ, ավելի ծիշտ, որպես նորմերի համակարգ), որպես նորմատիվային կարգ) և սահմանափակելով իրավագիտության խնդիրը իրավական նորմերի և որոշակի փաստերի միջև նրանց սահմանված հա-

րաբերությունների նկարագրմամբ, մենք հակադրում ենք իրավունքը բնությանը, իսկ իրավագիտությունը, որպես նորմատիվային գիտություն՝ այն բոլոր գիտություններին, որոնք ուղղված են պատճառահետևանքային կապերի բացահայտմանը իրապես ընթացող գործընթացներում», - գրում է Թելզենը^{5:}

Դանածայն Կելզենի, իրավունքի նորմատիվայնությունը (և նրա նորմաբանական մեկնաբանումը) հանդիսանում է պողիտիվ իրավունքի մասին մաքուր ուսմունքի մեթոդ, այլ ոչ պողիտիվ իրավունքի, որպես ճանաչման առարկայի, սեփական, բուն ելային օբյեկտիվ հատկությունը:

«...Իրավունքը արժեք է ներկայացնում միայն այն պատճառով, որ հանդիսանում է նորմ...»

«ճիշտ է նաև այն, որ Կանոնի ճանաչման տեսության իմաստով իրավագիտությունը որպես իրավունքի ճանաչում, ինչպես և ցանկացած ճանաչում, կրում է կոնստիտուտիվ բնույթը և այդ պատճառով «ստեղծում» է իր առարկան այնքանով, որքանով ընկալում է այն որպես իմաստալից ամբողջը: Ինչպես զգայական ընկալումների բառու դառնում է, բնության ամբողջական համակարգ միայն կարգավորիչ գիտական ճանաչման շնորհիվ, նույնպես և իրավական մարմինների կողմից ստեղծված անհատական և ընդհանուր իրավական նորմերի բազմությունը վերափոխվում է միասնական, ոչ հակասական համակարգի, իրավակարգի միմիայն իրավագիտության կողմից ճանաչման արդյունքում: Սակայն այդ «ստեղծումը» կրում է զուտ տեսա-ճանաչողական բնույթը: Դա ամենակին այն չէ, ինչ մարդկային աշխատանքով առարկայի ստեղծում կամ իրավունքի ստեղծում իշխանային առյանի կողմից»^{6:}

Այսպիսով, Կելզենի «մաքուր» իրավունքի ուսմունքում հենց պողիտիվ իրավունքի նյութի հանդեպ նորմատիվս-

³ Նույն տեղում:

⁴ Նույն տեղում, էջ 7-8:

⁵ Նույն տեղում, էջ 105:

⁶ Նույն տեղում, էջ 102:

տական մոտեցումն է (նորմաբանական պարտադրայնականությունը) «վերափոխում» այդ պարտի նորմերի համակարգի, հնարավորություն տալով մեկնել այն որպես իրավակարգ: Այս կապակցությամբ Քելզենը նշում է, որ «սպեցիֆիկ մեթոդ

գիտիվ իրավունքն ինքնին, մինչև նրա հասկացումն ու նկարագրումը որոշակի մեթոդի դիրքերից, համաձայն Կելզենի, հանդիսանում է զուտ անտրանաբանական (ալոգիկ) նյութ:

Կելզենի մոտ իրավագիտության միասնական առարկայի մեջ է մտնում նաև պետությունը, որը մեկնվում է որպես իրավակարգ և փաստորեն նույնացվում է աղօդիտիվ իրավունքի հետ:

Քննադատելով ին պողիտիվագին բնորոշ իրավունքի և պետության երկությունը (դուալիզմը), Կելզենը գրում է.

«Դենց որ մենք սկսենք պետության

տակ ենթադրել իրավակարգ, անմիջապես կհայտնաբերվի, որ հասարակ է թիկա-քաղաքական նախադրութերին հակադրվող

պետության «իրա-

կանությունը» հանդիսանում է իրա-

վունքի պողիտիվայնություն: «Իրա-

կան» պետությունը իրենից ներկայացնում է պողիտիվ իրավունք՝ ի տարբերություն արդարության, այսինքն, քաղաքականության պահանջ»⁷:

Եթե դասական պողիտիվիզմը էթատիզացնում է իրավունքը, ապա կելզենյան նորմատիվիզմը ընդհակառակը՝ լեզվացնում է պետությունը (զուտ ծևական պարտի իմաստով):

Իրավունքի և պետության նույնացման դիրքերից Կելզենը պնդում է, որ «ցանկացած պետություն իրավական պետություն է»⁸:

Սակայն որպես ծայրահետ պողիտիվիստ,

նա մերժում է հանրաճանաչ իմաստով՝ «իրավական պետություն» հասկացնությունը, որն օգտագործվում է ցուցելու համար այնպիսի պետություն, «որը պատասխանում է ժողովրդավարության ու

«...Քնորոշելով իրավունքը որպես նորմ և սահմանափակելով իրավագիտության խնդիրը իրավական նորմերի և որոշակի փաստերի միջև նրանց սահմանված հարաբերությունների նկարագրմամբ, մենք հակադրում ենք իրավունքը բնությանը, իսկ իրավագիտությունը, որպես նորմատիվային գիտություն՝ այն բոլոր գիտություններին, որոնք ուղղված են պատճառահետևանքային կապերի բացահայտմանը իրապես ընթացող գործընթացներում...»

բնորոշում է սպեցիֆիկ առարկան»⁷: Ըստ Կելզենի, մեթոդի սկզբունքային տարրերությունը պայմանավորում է նաև հետագոտվող առարկայի տարրերությունը:

Իրավագիտության առարկայի և մեթոդի նման միասնականության շրջանակմերում ճանաչման առարկան (այսինքն, իրավունք՝ որպես նորմերի համակարգ) հանդիսանում է ճանաչման մեթոդի (այսինքն, նրա ուսումնասիրնան ու նկարագրնան նորմատիվիստական, նորմաբանական եղանակի) «ստեղծագործություն»: Ոչ թե բուն իրավունքն է (որպես ինքնին օբյեկտիվ ինչ-որ բան) բնորոշում նրա նորմատիվիստական (նորմաբանական) հասկացումը և նկարագրումը նորմերի համակարգի տեսքով, այլ նորմատիվիստական (նորմաբանական) մեթոդն է բնորոշում այն որպես պարտի նորմերի համակարգ: Պո-

կանությունը» հանդիսանում է իրավունքի պողիտիվայնություն: «Իրական» պետությունը իրենից ներկայացնում է պողիտիվ իրավունք՝ ի տարբերություն արդարության, այսինքն, քաղաքականության պահանջ»⁸:

Եթե դասական պողիտիվիզմը էթատիզացնում է իրավունքը, ապա կելզենյան նորմատիվիզմը ընդհակառակը՝ լեզվացնում է պետությունը (զուտ ծևական պարտի իմաստով):

Իրավունքի և պետության նույնացման դիրքերից Կելզենը պնդում է, որ «ցանկացած պետություն իրավական պետություն է»⁹:

⁷ Տե՛ս Kelsen H. Der soziologischen und der juristische Staatsbegriff. Tübingen, 1928. էջ 106.

⁸ Տե՛ս Kelsen H. Allgemeine Staatslehre. Berlin, 1925. էջ 45.

⁹ Տե՛ս Կիստու ուսումնական պարտի համակարգը՝ պատճառահետ պահանջանաչ իմաստով՝ «իրավական պետություն» հասկացնությունը, որն օգտագործվում է ցուցելու համար այնպիսի պետություն, «որը պատասխանում է ժողովրդավարության ու

իրավական անվտանգության պահանջներին»¹⁰: «Իրավական պետություն» հասկացության նման ընկալումը նշանակում է «քույլ տալ ենթադրություն», ըստ որի «իսկական» իրավակարդ կարող է համարվել միմիայն հարկադրման այդ կարգը», իսկ դա, համաձայն Քելզենի գնահատականի, «նախապաշարնունք է, իիմնված բնական իրավունքի տեսության վրա»¹¹: Իրավակարգի (և որպես իրավունքի, և որպես պետության) տակ Կելզենը նկատի ունի միմիայն պողիտիկ իրավունքը՝ կանաչական ցանկացած բովանդակությամբ: «**Տէ որ նաև ավտոկրատիայի բնույթը ունեցող և իր անսահմանափակ ծկունությամբ հանդերձ իրավական ոչ մի անվտանգություն չերաշխավորող հարկադրման համեմատաբար կենտրոնացված կարգը՝ նույնպես իրավակարդ է,- գրում է նա: -Եթևողական իրավական պողիտիվիզմի տեսակետից իրավունքը, ինչպես և պետությունը, չի կարող հասկացվել որևէ այլ կերպ, քան մարդկանց վարքի հարկադրական կարգ, ինչը ինքնին դեռ ոչ մի կերպ չի բնութագրում այն բարոյականության կամ արդարության տեսակետից: Այս դեպքում պետությունը «իրավաբանական իմաստով» պետք է հասկացվի ոչ ավելի, ոչ էլ պակաս չափով, քան բուն իրավունքը»¹²:**

Կելզենի «մաքուր» իրավունքի մասին ուսմունքը կարելի է բնութագրել որպես պողիտիվստական իրավունքի պողիտիվստական փիլիսոփայություն, սակայն իրավունքի հանդեպ պողիտիվիստական մոտեցումը (իրավունքի ու օրենքի նույնացում և այլն) ըստ եռթյան մերժում է իրավունքի մասին ցանկացած ուսմունքի առարկան ու իմաստը, բացառում է իրավունքի փիլիսոփայության, գիտական կարգավիճակն ու նշանակությունը: Այդ իսկ պատճառով ավելի ճիշտ կիրարի ասել, որ **կելզենյան նորմատիվիստական ուսմունքը իր ուղղությամբ, բովանդակությամբ և եռթյանը մշակված է հենց իրավունքի պողիտիվիստական տեսության ձևով և վերլու-**

Ժական իրավագիտության հունով:

Որպես վերլուծական իրավագիտության տարբերակ, Կելզենի նորմատիվիզմը մեծ ազդեցություն է ունեցել XX դարում իրավունքի մասին պողիտիվիստական ուսմունքի նորացման վրա: Նրա գգալի ազդեցության տակ է գտնվում վերլուծական իրավագիտության մեկ այլ նշանակոր ներկայացուցիչ, Յ. Յարթի տեսությունը: Մենք տեսանք, որ Քելզենը ցանկանալով թաքցնել իր իրավահասկացման էթատիստական-համայական իմաստը, հղումների է անում երևակայական «իիմնական նորմին»՝ որպես իրավունքի ծևական-տրամարանական հիմքի, նկատի ունենալով իրավունքը որպես նորմաբանական գոյացություն, որպես պարտի նորմերի համակարգ:

Նման բան ենք ենք տեսնում նաև իրավունքի (պողիտիվ իրավունքի) մասին Յ. Յարթի ներպողիտիվիստական ուսմունքում, որտեղ իրավունքը պատկերացվում է որպես կանոնների (նորմերի) համակարգ, բաղկացած երկու մասից, առաջնային կանոններից (պարտադրության կանոններ) և երկրորդական կանոններից (ճանաչման կանոններ, փոփոխման կանոններ և որոշման կանոններ):¹³ «**Մենք,- գրում է Յարթը,- իրավարվում ենք այն դիրքորոշումից, ըստ որի իրավական համակարգի հիմքը հանդիսանում է իրավաբանորեն անսահմանափակ սուվերենին ենթարկվելու սովորությունը, և փոխարինում ենք այն ճանաչման գերագույն կանոնի հայեցակարգով, որը կանոնների համակարգին տալիս է իրականության չափանիշ»¹⁴: Սակայն իրավարումը հարկադրական-համայական այդ իրավահասկացումից իրականում թվացյալ է, քանի որ, համաձայ Յ. Յարթի հայեցակարգի, իրավունքի միակ իրական չափանիշը և ոչ իրավական (բարոյական և այլն) կանոններից տարբերող հատկանիշ է հանդիսանուն հենց հարկադրական սանկցիայի առկայությունը, այսինքն, իրավական կանոնների և իրավունքի ընդհանրապես հարկադրականությունը:**

¹⁰ Նույն տեղում, էջ 153:

¹¹ Նույն տեղում:

¹² Նույն տեղում, էջ 153-154:

¹³ St. e. Hart H. The Concept of Law. Oxford. 1961. էջ 163.

¹⁴ Նույն տեղը, էջ 201:

ԻՐԱՎՈՒՆՔԻ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ

Վերլուծական իրավագիտության և մեկ տարբերակ է ներկայացնում իրենից ավստրիացի իրավագետ Օ. Վայնբերգերի այսպիս կոչված **իրավունքի ծանաչողական-քննադատական տեսությունը**¹⁵: Դանածական Վայնբերգերի և նրա համախոհների մոտեցման, «**իրավական գիտության իմանական դիսցիպիլներն են իրավունքի համընդիանուր տեսությունը (իրավունքի փիլիսոփայությունը), իրավունքի դոգմատիկան, իրավունքի սոցիոլոգիան, իրավունքի պատմությունը, համեմատական իրավունքը»¹⁶: «Իրավունքի համընդիանուր տեսությունը, - նշում են այդ հեղինակները, - այսինքն, իրավունքի փիլիսոփայությունը, ընդգրկում է իրավունքի կառուցվածքային հիմնահարցերի վերլուծությունը, իրավական գիտության տեսական հիմնարար պրոբլեմները, իրավաբանական համընդիանուր հասկացություններն ու հիմնախնդիրները, որոնք վերաբերում են տարբեր դոգմատիկ դիսցիպիլներին, արդարության տեսությունը և մեթոդների մասին իրավաբանական ուսմունքը: Մեթոդների մասին իրավաբանական ուսմունքին են պատկանում ոչ միայն այստեղ ավանդաբար ընդգրկվող ուսմունքները, իրավաբանական որոշումների և իրավունքի մասին կարծիքների հիմնավորման մասին ուսմունքները, այլև օրենսդրության մասին ուսմունքը՝ որպես քաղաքական-իրավական հիմնավորան մասին տեսություն և որպես օրենսդրական տեխնիկայի մասին ուսմունքը»¹⁷:**

Ի տարբերություն իրավունքի համընդիանուր տեսության (որը նրանք անվանում են նաև իրավունքի փիլիսոփայություն), «**իրավունքի դոգմատիկան ընդգրկում է պողիտիվիստական հայեցակարգերը նրանք անվանում են «իրավունքի սպեկուլյատիվ փիլիսոփայություն», որին հակադրում են «իրավունքի գիտական-քննադատական տեսությունը», այսինքն, իրավունքի ընդիանուր տեսության պողիտիվիստական զանազան տարբերակները»²¹: «**իրավունքի սպեկուլյատիվ փիլիսոփայությունը նրանք համարում են ոչ գիտական, քանի որ այն «գրադպում է նետաֆիզիկական հարցերով և տրանսցենդենտ գաղափարներով»**²²:**

Եղողոգիան, - շարունակում են հեղինակները, - գրադպում է իրավունքի վերաբերյալ հասարակական բոլոր գործոնների, ինչպես նաև իրավունքի՝ որպես հասարակական բոլոր ֆենոմենների վրա ներազդող հասարակական գործոնի ուսումնասիրմանը»¹⁹: Իրավունքի պատմությունն, իր հերթին, գրադպում է իրավունքով նրա զարգացման մեջ: Իսկ համեմատական իրավունքը, որի մեջ են մտնում դոգմատիկ-իրավական, սոցիոլոգիական-իրավական և քաղաքագիտական համեմատությունը, գրադպում է պատմական և արդի տեսանկյուններից իրավունքի առանձին համակարգերի տարբերություններով:

Դամապատասխանաբար, իրավունքի փիլիսոփայությունը (կամ իրավունքի համընդիանուր տեսությունը) որպես նետաֆիտիվիստական իրավագիտության բաղկացուցիչ մաս, հասկացվում ու մշակվում է «ոչ թե որպես աշխարհահայեցողական համակարգի մաս, այլ որպես իրավական գիտությունների հիմքերի ռեֆլեկտիվ (ինքնարերական) վերլուծություն»²⁰: Իրավունքի ընդիանուր տեսության (փիլիսոփայության) ոչ պողիտիվիստական հայեցակարգերը նրանք անվանում են «իրավունքի սպեկուլյատիվ փիլիսոփայություն», որին հակադրում են «իրավունքի գիտական-քննադատական տեսությունը», այսինքն, իրավունքի ընդիանուր տեսության պողիտիվիստական զանազան տարբերակները²¹: «**իրավունքի սպեկուլյատիվ փիլիսոփայությունը նրանք համարում են ոչ գիտական, քանի որ այն «գրադպում է նետաֆիզիկական հարցերով և տրանսցենդենտ գաղափարներով»**²²:

Բնորոշելով իրավունքի նետաֆիտիվիստական ընդիանուր տեսության (փիլիսոփայության) խնդիրները, նրանք գործում են: «Որպես գիտության փիլիսոփայություն, իրավունքի գիտական-քննադատա-

¹⁵ Տե՛ս Einfuring in die Rechtsphilosophie, Ursig. Von Prof. O. Wienberger in Zusammenarbeit mit P. Koller, P. Strasser. M. Prischine. Graz, 1979. էջ 37.

¹⁶ Նույն տեղը:

¹⁷ Նույն տեղը:

¹⁸ Նույն տեղը:

¹⁹ Նույն տեղը:

²⁰ Նույն տեղը:

²¹ Նույն տեղը, էջ 36:

²² Նույն տեղը, էջ 35-36:

կամ փիլիսոփայությունը իր առջև կնորիր է դրել տալ իրավական գիտությունների փիլիսոփայական բազիսը: Նախևառաջ այն ձգտում է իրավական գիտության հարցադրումների, աշխատանքի մեթոդների և հնարքների հիմնավորմանը: Պողիտիվ իրավական համակարգի մշակման հիմքում ընկած է իրավունքի ընդհանուր հիմնական հասկացությունների համակարգը, որոնք հանդիսանում են ցանկացած իրավական գիտության գործիքներ: Դրանք այն հասկացություններն են, ինչպիսիք են, օրինակ, իրավունքը, իրավական նորմը, իրավունքի գործողությունը, իրավական ակտը, իրավական հարաբերությունը և այլն»²³: Յասկացողական այս գինանոցի հիմնան վրա «իրավունքի գիտական-քննադատական փիլիսոփայությունը» ձգտում է զարգացնել «իրավունքի կառուցվածքի և դինամիկայի համընդհանուր տեսությունը»²⁴: Բացի այդ մշակվում է ուսմունք իրավաբանական աշխատանքի մեթոդների մասին, այսինքն ծեռնարկ իրավաբանների պրակտիկ գործունեության համար:

Նշված աշխատության հեղինակները «իրավունքի գիտական-քննադատական փիլիսոփայության» մեջ են դասում նաև «իրավունքի վերլուծական փիլիսոփայությունը» (կամ վերլուծական իրավագիտությունը), ինչպես նաև «այսպես կոչված «մաքուր» իրավունքի մասին ուսմունք՝ իրավունքի վերլուծական փիլիսոփայության տարատեսակը»²⁵: Որպես «վերլուծական հայեցակարգ» են նշում նրանք նաև իրենց «իրավունքի ճանաչողական-քննական տեսությունը»²⁶:

Վերլուծական իրավագիտության իրենց ընկալումը նրանք մեկնաբանում են հետևյալ կերպ. «Որպես իրավունքի վերլուծական փիլիսոփայություն (կամ վերլուծական իրավագիտություն) նշվում են տեսական-իրավական համընդհանուր այն տեսությունները, որոնք իրեց հետազոտումների կենտրոնում դմում են իրավուն-

քի կառուցվածքային տեսությունը, այսինքն, ուսումնասիրում են իրավական տեսության բոլոր հիմնախնդիրները նախևառաջ ձևական (ֆորմալ) իմաստով և կառուցվածքային հասկացությունների և սխեմաների այդ ապարատում տեսնում են իրավաբանական բոլոր հետազոտումների անհրաժեշտ գործիքներ, սակայն վերլուծական իրավագիտության շատ ներկայացուցիչներ աշքարող չեն անում նաև զանազան առումներ ու փաստեր, այսինքն, այն, որ իրավունքը նախևառաջ հանդիսանում է հասարակական ֆենոմեն»²⁷:

Անջատելով իրենց «մաքուր» իրավունքի մասին ուսմունքից որպես իրավունքի վերլուծական փիլիսոփայության տարատեսակից, նրանք գրում են, որ այդ ուսմունքը իրեն համարում է ուսմունք իրավունքի մասին, որը հասնում է իրավաբանական մեթոդների մաքրության շնորհիվ այն բանի, որ ուղղված է միմիայն պողիտիվ իրավունքի ճանաչման:

Նշված գործի հեղինակները իրենց տեսությունը անվանում են «ճանաչողական-քննական», քանի որ այն ելնում է տեսական-ճանաչողական ինաստարամությունից և մշտապես ձգտում է տալ պորբեմային իրավիճակի պարզ, ճանաչողական-քննական վերլուծում²⁸: Այն «ելնում է այն համոզնումնից, որ ժամանակակից իրավագիտությունը հիմնվում է մի շարք գիտությունների վրա, ինչպիսիք են տրամաբանությունը, իմաստաբանությունը, աքսիոլոգիան, որոշումների տեսությունը, կիրեննետիկան, սոցիոլոգիան, քաղաքականությունը և այլն»²⁹:

Իրավունքի իրենց բնորոշման մեջ նշված աշխատության հեղինակները ընդհանուր առմանը ընտրել են պողիտիվիստական իրավահասկացման բավականին գուստ տարբերակ, թեև դա էլ, ըստ էության, լեզվատական է: «Իրավունքի», իրավակարգի տակ նրանք նկատի ունեն-

²³ Նույն տեղը, էջ 36:

²⁴ Նույն տեղը:

²⁵ Նույն տեղը:

²⁶ Նույն տեղը:

²⁷ Նույն տեղը, էջ 37:

²⁸ Նույն տեղը:

²⁹ Նույն տեղը:

«իրավունքը օրիեկտիվ հմաստով» [146,1], այսինքն, պողիտիվ իրավունքը (օրենքը): Համաձայն նրանց մեկնության, իրավունքը «դիմանմիկ համակարգ» է, «պարտի համակարգ», «նորմերի համակարգ», որի գերագույն նորմերը վերաբերվում են իրավական ընդհանուրություն կազմող բոլոր անձանց (անձնավորություններին)»³⁰:

«Այօրյա կյանքում, իսկ հաճախ նաև իրավունքի փիլիսոփայության մեջ իրավունքի հասկացությունը կապակցվում է

«...Իրավունքը նախևառաջ հասարակական ֆենոմեն է...»

«Ճիշտ», «արդարացի» ասորիբուտի հետ, գրում են աշխատության հեղինակները: - Խոսքի այս ձևերում պարունակվում է ոչ միայն հղում տվյալ նորմի բովանդակությանը, այլև դրսից ներս բերվող գնահատական: Իրավական գիտությունների նպատակների, իրավունքի վերլուծման համար, ընդհակառակը, պետք է կիրառվի իրավունքի արժեքային-չեզոք հասկացությունը: «Իրավունք» հասկացության այդ չեզոք կիրառումը ունի այն առավելությունը, որ թույլ է տալիս զատել շարադրանքը և գնահատականը: Իրավունքի իմանանենտ բարոյական հավակնությունը պետք է ստույգ տարածաշտվի իրավունքի հանդեպ մեկնողի արժևորային գնահատականից»³¹:

Անշուշտ, մեկնողի դիրքորոշումը հարկ է զատել բուն իրավունքի «բարոյական հավակնություններից»³²: Սակայն փիլիսոփայական-իրավական բուն հիմնախնդիրը այլ բան է պահանջում՝ պարզել օրենքի (պողիտիվ իրավունքի) նման հավակնությունների հիմնավորվածությունը կամ անհիմնությունը: Ընդ որում, ճշտիվ իրավաբանական մոտեցման պարագայում խոսքը պետք է գնա ոչ թե օրենքի (պողիտիվ իրավունքի) բարոյական կամ անբարեր լինելու մասին, ինչպես լավագույն դեպքում համաձայնվում են պողիտիվիստները, այլ նրա իրավական կամ ոչ իրավական բնույթի մասին, այն մասին, համապատասխանում է այն արդյոք օրենսդրի, պաշտոնական իշխա-

նության կամքից ու նկատառումներից անկախ իրավունքի պահանջներին:

Լեգիստական իրավահասկացման պայմաններում օրենքից (պողիտիվ իրավունքից) տարբերվող իրավունքը դիտարկվում է որպես «քարոյականություն», այսինքն, որպես ըստ եռթյան ոչ իրավական և իրավունքից դուրս գտնվող ինչ-որ բան: Ենց այդպիսին է իրավունքի «ճանաչողական-քննական տեսության» դիրքորոշումը: Ի դեպ, նրանք մերժուստ հակա-

սում են իրենք իրենց, քանի որ, խոսելով մի կողմից իրավական համակարգի բարոյական հավակնությունների մասին, դրանով

իսկ արդեն ճանաչում են այդպիսի հավակնությունների առկայությունը պողիտիվ իրավունքի եղելության մեջ, իսկ մյուս կողմից, ի սկզբանե» արդեն արժեքայնորեն ոչ չեզոք այդ պողիտիվ իրավունքի «գիտական» շարադրանքի համար պահանջում են կիրառել «իրավունքի արժեքայնորեն չեզոք հասկացություն»: Չէ՞ որ նույնիսկ առանց մեկնիչի կողմից դրսից ներսությամբ այդ արժեքային պահերի նման «գիտական շարադրանքի բուն օբյեկտը ի սկզբանե» արդեն արժեքայնորեն չեզոք չէ, ինչպես խոստովանում են դիտարկվող տեսության հեղինակները:

Բացի այդ, ստացվում է, որ օրենսդրի հավակնությունները «համարժեք» և «ճիշտ» իրավունքի ստեղծման վերաբերյալ նիստական տեղին և հիմնավոր են, իսկ փիլիսոփայական-իրավական կասակածները այս առումով, ինչպես նաև գործերի իրական դրության հետազոտումը տվյալ ոլորտում՝ «տրանսցենդենտալ» է, «մետաֆիզիկական» ու «օչ գիտական»:

Այսպես թե այնպես, բայց իրավաբանական պողիտիվիզմը իր բոլոր տարբերակներում ցուցադրում է իր լեգիստական բնույթը:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ իրավաբանական պողիտիվիզմն իր զանազան դրսերումներով հանդերձ, չի փոխում իր եռթյունը, այսինքն՝ իրավունքի լեգիստական ըմբռնումը:

³⁰ Նույն տեղը:

³¹ Նույն տեղը, էջ 85-86:

³² Նույն տեղը, էջ 86:

Իրավաբանական անձանց նկատմամբ կիրառվող վարչական տույժերի շրջանակը ու դրանց իրավական կարգավորման բարելավման ուղիները

Թամարա ՇԱԶԱՐՅԱՆ

ՀՀ գլխավոր դատախազի օգնական

Վարչական տույժի օրենսդրական բնորոշումը տրված է Վարչական իրավաբանատումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 22-րդ հոդվածում, որի համաձայն՝ վարչական տույժը համարվում է պատասխանատվության միջոց։ Բնորոշ է այն, որ օրենսգրքի նշված հոդվածը չի նշում, որ այն հանդիսանում է վարչական պատասխանատվության միջոց (ընդգծումը՝ թ.ջ), սակայն նորմի վերլուծությունից պարզ է դառնում, որ այն կիրառվում է վարչական իրավաբանատում կատարած անձի նկատմամբ զանցանք կատարելու համար՝ սոցիալական արդարությունը վերականգնելու, անձին ուղղելու, օրենքները և իրավակարգը հարգելու ոգով դաստիարակելու, ինչպես նաև իրավաբանապատճենի ու այլ անձանց կողմից նոր վարչական իրավաբանատումներ կատարելը կանխելու նպատակներով։

Մի շարք երկրների վարչական իրավաբանատումների վերաբերյալ օրենսդրության վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանց մեծամասնությունում կիրառելի է «վարչական պատիժ» հասկացությունը¹, քանի որ իր համար նպատակային նշանակությամբ այն նման է քրեական պատժին։ Ուսական գրականության մեջ այս տերմինների փոխակերպումը հիմնավորվել է այն մեկնաբանությամբ, որ ՈԴ Սահմանադրական դատարանը վարչական իրավաբանատումների վերաբերյալ նորմերին առնչվող գործերի վերաբերյալ իր որոշումներում կիրառել է հենց «վարչական պատիժ» տերմինը²։

Վարչական իրավաբանատումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 23-րդ հոդվածով սահմանված են վարչական տույժերի հետևյալ տեսակ-

ները՝ 1) նախազգուշացում, 2) տուգանք, 3) վարչական իրավաբանատում կատարելու գործիք կամ անմիջական օրենքությունը առարկայի հատուցմամբ վերց-

¹ Տե՛ս Բուլղարիայի Հանրապետության վարչական իրավաբանատումների և վարչական տույժերի մասին օրենսգիրը (ընդունվել է 1969թ. նոյեմբերի 28-ին), Մոլդովայի Հանրապետության վարչական իրավաբանատումների վերաբերյալ օրենսգիրը (ընդունվել է 2008թ. հոկտեմբերի 24-ին), Ուսասատանի Դաշնության վարչական իրավաբանատումների վերաբերյալ օրենսգիրը (ընդունվել է 2001թ. դեկտեմբերի 20-ին), Մակեդոնիայի Հանրապետության զանցանքների մասին օրենսգիրը, (ընդունվել է 1997թ.), և այլն։

² Տե՛ս օրինակ, Определение Конституционного суда РФ от 20 мая 1997г. по делу о проверке конституционности пп. 4 и 6 ст. 242 и ст. 280 Таможенного Кодекса РФ в связи с запросом Новгородского областного суда // СЗ. — 1997. — N21. -Ст. 2542.

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

նում. 4) վարչական իրավավախսում կատարելու գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկայի բռնագրավում. 5) քաղաքացուն տրված հատուկ իրավունքից զրկում (տրանսպորտային միջոցների վարելու իրավունքից, որսորդության իրավունքից):³ Ի դեպ, նույն հոդվածի 3-րդ պարբերության դրույթների վերլուծությունը թույլ է տալիս նշելու, որ որպես տույժի առանձին տեսակ օրենսդիրը սահմանում է նաև ՀՀ սահմաններից վարչական վտարում վարչական տույժի տեսակը:

Ընդ որում, տույժի վերոնշյալ տեսակները, նշանակվում են բացառապես ֆիզիկական և պաշտոնատար անձի նկատմամբ, քանի վարչական իրավավախսումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով իրավաբանական անձինք վարչական պատասխանատվության սուբյեկտ չեն հանդիսանում, իսկ այն բխում է մի շարք կոնկրետ օրենսդրական ակտերից: Հետևաբար, իրավաբանական անձանց նկատմամբ կիրառվող տույժերի տեսակների ցանկն ափելի լայն է, քան նախատեսված է վարչական իրավավախսումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով:

Այսպես, օրինակ, «Քաղաքաշինության բնագավառում իրավավախսումների համար պատասխանատվության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով⁴, որի գործողությունը տարածվում է քաղաքաշինական գործունեության բնագավառում աշխատանքներ իրականացնող բացառական իրավաբանական անձանց վրա, սահմանված են ինչպես քաղաքաշինության բնագավառում նրանց կողմից կատարվող վարչական գանցանքները, այնպես էլ դրանց առնչությամբ

նրանց նկատմամբ նշանակվող վարչական տույժերի տեսակները: Կամ «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» և «Հսկիչ-դրամարկղային մեքենաներ կիրառողների գործունեության կասեցման մասին» ՀՀ օրենքներով⁵ կազմակերպությունների նկատմամբ նշանակվող տույժի տեսակ է համարվում որոշակի վայրում որոշակի ժամկետով տվյալ տեսակի գործունեության կասեցումը: Իսկ, օրինակ, «Վիճակախաղերի մասին» և «Շահումով խաղերի և խաղատների մասին» ՀՀ օրենքներով⁶ սահմանված են տույժի այնպիսի տեսակներ, ինչպիսիք են լիցենզիայի գործողության կասեցում և լիցենզիայի գործողության դադարեցում (դադարեցման հայով դատարան դիմել):

Այսպիսով, ՀՀ օրենսդրության ամփոփ վերլուծությունը ցույց է տալիս, որ իրավաբանական անձանց նկատմամբ կարող են կիրառվել հիմնականում հետևյալ տույժի տեսակները՝ 1) նախագույշացում, 2) վարչական տուգանք, 3) լիցենզիայի (թույլտվության) գործողության կասեցում, 4) լիցենզիայի (թույլտվության) գործողության դադարեցում, 5) վարչական իրավավախսուման գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկայի բռնագրավում, 6) որոշակի տեսակի գործունեության կամ որոշակի վայրում գործունեության իրականացման կասեցում, 7) իրավաբանական անձի գործունեության դադարեցում:

Այս ցանկը սպառիչ չէ, այլ օրենսդրական ակտերով կարող են նախատեսվել նաև վարչական տույժի նաև այլ տեսակներ: Ընդհանուրը, թերևս, տույժի այս տեսակների պարագայում այն է, որ դրանք ու-

³ Մինչ 2006 թվականի հունվարի 14-ին ընդունված «Վարչական իրավավախսումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունումը որպես վարչական տույժի տեսակներ ամրագրված էն վարչական կալամքը և ուղղիչ աշխատանքները, որոնք հիշյալ օրենքի ընդունմամբ հանվեցին օրենսգրքից:

⁴ Տես «Քաղաքաշինության բնագավառում իրավավախսումների համար պատասխանատվության մասին» ՀՀ օրենքը, (ընդունվել է 1999թ. ապրիլի 28-ին):

⁵ Տես 2004 թ. նոյեմբերի 22-ին ընդունված «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքը, 2006 թվականի նոյեմբերի 28-ին ընդունված «Հսկիչ-դրամարկղային մեքենաներ կիրառողների գործունեության կասեցման մասին» ՀՀ օրենքը:

⁶ Տես 2003 թվականի դեկտեմբերի 17-ին ընդունված «Վիճակախաղերի մասին» ՀՀ օրենքը, 2003 թվականի դեկտեմբերի 13-ին ընդունված «Շահումով խաղերի և խաղատների մասին» ՀՀ օրենքը:

Ան գույքային բնույթ, ուղղված են հիմնականում իրավաբանական անձի գույքային իրավունքների սահմանափակմանը:

Հատկանշական է, որ այլ երկրների օրենսդրության ուսումնասիրությունը ցույց է տալիս հետևյալ ոչ միանշանակ պատկերը: Մասնավորապես, օրինակ, Մոլդովայի Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 32-րդ հոդվածի համաձայն՝ սահմանված է իրավաբանական անձանց նկատմամբ նշանակվող վարչական տույժի տեսակների սեղմ շրջանակ, որպիսիք են տուգանքը և որոշակի տեսակի գործունեությամբ գրադրելու իրավունքից զրկելը⁷: Իսկ Ղազախստանի Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 45-րդ հոդվածը սահմանում է իրավաբանական անձանց նկատմամբ նշանակվող վարչական տույժերի լայն շրջանակ, մասնավորապես, 1) նախազգուշացում, 2) Վարչական տուգանք, 3) Վարչական իրավախախտման գործիք կամ անմիջական օրյեկտ հանդիսացող առարկայի հատուցմանը վեցրում, 4) Վարչական իրավախախտման գործիք կամ անմիջական օրյեկտ հանդիսացող առարկայի, ինչպես նաև Վարչական իրավախախտման արդյունքում ձեռքբերված գույքի բռնագրավում, 5) հատուկ իրավունքից զրկում, 6) լիցենզիայի, հատուկ թույլտվության գործողության, որակավորման վկայականից զրկում կամ որոշակի տեսակի գործունեության կամ որոշակի տեսակի գործունեության կամ հարկադիր քանդում, 7) ապօիինի շինության հարկադիր քանդում, 8) որոշակի գործունեության կամ որոշակի տեսակի գործունեությամբ գրադրելու իրավունքի դադարեցում կամ արգելում⁸: Գերմանիայի «Վարչական իրավախախտում-

ների մասին» Գերմանիայի Դաշնության օրենքի §30-ի համաձայն՝ իրավաբանական անձանց նկատմամբ կիրառվող տույժի տեսակը՝ վարչական տուգանքն է: Ընդ որում, նաև քրեական արարքների դեպքում: Սակայն, նույն օրենքի §56-ով սահմանված է նվազ նշանակություն ունեցող վարչական իրավախախտումների դեպքում նախազգուշացման վարույթի իրականացման կարգը, որը կարող է ուղեկցվել ոչ միայն նախազգուշացում վարչական տույժի նշանակմամբ, այլ նաև սահմանված չափով նախազգուշացման գումարի բռնագանձմանը⁹:

Հարկ ենք համարում նշել, որ այլ երկրների օրենսդրության համակողմանի և իրավահամեմատական ուսումնասիրությունը վկայում է, որ այնուհանդերձ, իրավաբանական անձանց նկատմամբ կիրաւող տույժերի տեսակներն առավել լայն են, ուղղակի, հարկ է նկատել, որ դրանք դասակարգված արտացոլում են ստանուն այն երկրների օրենսդրությունում, որոնք ունեն իրավաբանական անձանց համար սահմանված քրեական և վարչական պատասխանատվություն: Այսպես, օրինակ, իրավաբանական անձի լուծարումը շատ երկրների քրեական օրենսդրությամբ նախատեսված պատժի տեսակ է, օրինակ՝ Եստոնիա, Լիտվա, Լատվիա, Ռուսիա և այլն¹⁰:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Ղազախստանի Հանրապետության օրենսգրքի նախագծի 45-րդ հոդվածի 4-րդ մասի¹¹ համաձայն՝ իրավաբանական անձանց նկատմամբ կարող են նախատեսվել և կիրառվել հետևյալ վարչական տույժերը՝ **ա) նախազգուշացում, բ) Վարչական տուգանք, գ) Վարչական իրավախախտման գործիք կամ անմիջական օրյեկտ**

⁷ Տե՛ս Մոլդովայի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքը (ընդունվել է 2008թ. հոկտեմբերի 24-ին),

⁸ Տե՛ս Ղազախստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքը (ընդունվել է 2001թ. հունվարի 30-ին):

⁹ Տե՛ս՝ «Վարչական իրավախախտումների մասին» Գերմանիայի Դաշնության օրենք, (ընդունվել է 1987թ. փետրվարի 19-ին):

¹⁰ Տե՛ս Լատվիայի Հանրապետության քրեական օրենսգրքը, (ընդունվել է 1998թ. հունիսի 17-ին), Էստոնիայի Հանրապետության քրեական օրենսգրքը, (ընդունվել է 2001թ. հունիսի 6-ին), Լիտվայի Հանրապետության քրեական օրենսգրքը, (ընդունվել է 2000թ. սեպտեմբերի 26-ին), Ռուսիայի Հանրապետության քրեական օրենսգրքը, (ընդունվել է 2004թ.),

¹¹ Տե՛ս հղումն ըստ համացանցի 2011 թվականի դրությամբ՝

<http://moj.am/am/download.php?view=328>, <http://www.parliament.am/drafts.php?sel=show-draft&DraftID=4516&Reading=0>:

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

հանդիսացող առարկայի բռնագրավում, դ) լիցենզիայի, թույլտվության գործողության կասեցում, ե) լիցենզիայի, թույլտվության գործողության դադարեցում, զ) որոշակի տեսակի գործունեության կամ որոշակի վայրում գործունեության իրականացման կասեցում, է) իրավաբանական անձի գործունեության դադարեցում:

Կարծում ենք, Նախագծում, սահմանված են իրավաբանական անձանց նկատմամբ կիրավող տույժերի թերևա ամրողական շրջանակ, որոնք համահունչ են ոչ միայն այլ երկրների վարչական, այլև քրեական օրենսդրությանը: Սակայն, կարծում ենք, որ Նախագծում սահմանված տույժի տեսակները ունեն օրենսդրական և հայեցակարգային որոշակի թերություններ, որոնց կանորադառնանք ստորև: Այսպես, մինչ 2002 թվականը կատարված փոփոխությունները Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 26-րդ հոդվածում տուգանքի բնորոշումը տրված չէր, այլ սահմանում էր վարչական պատասխանատվության սուբյեկտների նկատմամբ նշանակվող տուգանքի նվազագույն և առավելագույն չափերը: 2002 թվականի դեկտեմբերի 11-ի «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով¹² վերը նշված հոդվածը ուժը կորորած ճանաչվեց: Կարծում ենք, սակայն, օրենսդրական այս փոփոխությունը, իրավի չեր կարող հիմնավորված լինել, քանի որ վարչական տուգանքը որպես վարչական տույժի տեսակ չեր հանվել օրենսգրքից:

Նախագծում, սակայն, տրվեց վարչական տուգանքի բնորոշումը, մասնավորա-

պես, Վարչական իրավավիսախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի նախագծի 48-րդ հոդվածի համաձայն՝ վարչական տուգանքը դրամական տուժմանք է, որը որպես տույժի միջոց վճարվում է վարչական իրավախախտում կատարելու համար սույն օրենսգրքի հատուկ մասով նախատեսված դեպքերում: Աշխատանքային խմբի քննարկումների արդյունքում, որոշվեց տուգանքի նվազագույն և առավելագույն չափերը չսահմանել, քանի որ դա հնարավորություն չի տա օրենսդրին հետագայում կոնկրետ իրավախախտումների համար սահմանելու տուգանքի բարձր չափեր և անհրաժեշտություն կառաջանա այդ չափեր օրենսդրության անընդհատ փոփոխության ենթարկել: Անշուշտ, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի նախկին խմբագրությամբ 26-րդ հոդվածում սահմանված տուգանքի նվազագույն և առավելագույն չափերը բացարձակ չափեր չեն, քանի որ հետագայում օրենսդրական փոփոխությունների արդյունքում սահմանվում էին տուգանքի բարձր չափեր և հակասություն էր առաջանում նշված օրենսգրքի ընդհանուր և հատուկ մասի նորմերի միջև: Իհարկե, որա համար հիմք էր հանդիսանում նույն հոդվածի այն դրույթը, ըստ որի՝ «...եթե վարչական իրավախախտումների առանձին տեսակների համար պատասխանատվությունն ուժեղացնելու կապակցությամբ այլ բան չի նախատեսվում»:

Նույնիսկ այլ երկրների վարչական օրենսդրության նորմերի վերլուծությունը թույլ է տալիս նշելու, որ տվյալ հիմնահարցը օրենսդրության տարբեր կերպ է կարգավորվել: Այսպես, Լատվիայի¹³, Էստոնիայի¹⁴, Լիտվայի¹⁵, Մոլդովայի¹⁶, Բելառու-

¹² Տե՛ս «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք, ընդունված 2002 թվականի դեկտեմբերի 11-ին, ՀՕ-495-Ն:

¹³ Տե՛ս Լատվիայի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքը (ընդունվել է 1984թ. դեկտեմբերի 7-ին), հոդված 26:

¹⁴ Տե՛ս Էստոնիայի Հանրապետության քրեական օրենսգրքը, (ընդունվել է 2001թ. հունիսի 6-ին), հոդված 46:

¹⁵ Տե՛ս Լիտվայի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքը (ընդունվել է 1985թ.), հոդված 24: Լիտվայի Հանրապետության քրեական օրենսգրքը, (ընդունվել է 2000թ. սեպտեմբերի 26-ին), հոդված 47:

¹⁶ Տե՛ս Մոլդովայի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքը (ընդունվել է 2008թ. հոկտեմբերի 24-ին), հոդված 34:

սի¹⁷, Մակեղոնիայի¹⁸, Ղազախստանի¹⁹ օրենսդրությամբ սահմանված են տուգանքի առավելագույն և նվազագույն չափերը: Ընդ որում, տարբերակվող լուծում է տրված Ղազախստանի Հանրապետության վարչական իրավականացման մասին օրենսդրով, մասնավորապես, վերջինիս 48-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը տարբերակում են իրավաբանական անձանց նկատմամբ նշանակվող տուգանքի առավելագույն և նվազագույն չափերը, հաշվի առնելով իրավաբանական անձը խոշոր ձեռնարակատիրությամբ գրանդու սուրբյեկտ է, թե ոչ²⁰: Գերմանիայի «Վարչական իրավականացման մասին» օրենքի §30-ը սահմանում է տուգանքի առավելագույն չափը, ինչպես նաև տարբերակում է տուգանքի առավելագույն չափը դիտավորությամբ կամ անփութությամբ կատարված իրավականացման դեպքում: Զարկ է նշել, որ մի շարք այլ երկների քրեական օրենսդրությամբ նույնպես սահմանված են տուգանքի առավելագույն և նվազագույն չափերը²¹:

Այնուամենայնիվ, կարծում ենք, աշխատանքային խմբի ներկայացրած փաստարկն այնքան էլ իմանալորված չէ, և նախագծում այս սկզբունքային օրենսդրական լուծում պահանջող հարցն անհրաժեշտ է կարգավորել, սահմանելով տուգանքի միայն առավելագույն չափը, առանց որևէ բացառության, որպեսզի անհարկի պատճառաբանությամբ՝ իմբռում դնելով արարքի հանրային վտանգավորությունը, չսահմանվեն տուգանքի այնպիսի չափեր, որոնք մի քանի անգամ կգերազանցեն նույնարնույթ հանցագործությունների համար քրեական օրենսդրությամբ սահմանված

տուգանքի չափերը²²: Ինչպես արդարացիորեն նշում է իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ.Դամիելյանը, եթե անգամ նկատվում է տուգանքի առավելագույն սահմանը գերազանցելուն հանգեցնող որևէ արարքի հանար պատասխանատվությունն ուժեղացնելու անհրաժեշտություն, ապա առավել տրամարանական է, որ տվյալ դեպքում գործ ունենանք ոչ այնքան զանցանքի, որքան հանցանքի հետ՝ դրանից բխող բոլոր իրավական հետևանքներով հանդերձ:²³

Տվյալ իմանախմնդրի համատեքստում կարծում ենք, սակայն, որ տուգանքի չափերի սահմանան տարբերակում, վարչական պատասխանատվության սուրբյեկտների առումով անշուշտ, պետք է սահմանել: Քանի դեռ իրավաբանական անձինք քրեական պատասխանատվության սուրբյեկտ չեն հանդիսանում, անհրաժեշտ է, վերջիններիս համար սահմանել վարչական տուգանքների՝ ֆիզիկական անձանց համեմատ ավելի բարձր չափ, կամ նույնիսկ հավասար չափ այն նույնարնույթ արարքների համար, որոնք քրեական օրենսդրությամբ համարվում են հանցագործություն: Այս կարգավորմամբ կլուծվի նաև իրավաբանական անձանց նկատմամբ քրեական պատիժներին մոտ կանգնած վարչական տույժի նշանակման հարցը: Այս դեպքում կիհմնավորվի նաև իրավաբանական անձանց միայն վարչական պատասխանատվության սուրբյեկտ սահմանելու իմանահարցը:

Հաշվի առնելով վարչական իրավականացման համրային վտանգավորության աստիճանը, վարչական իրավականացման կատարելու գործիք կամ աննիշական օբյեկտ հանդիսացող առարկան հատուցմամբ վերցնելը որպես վարչական

¹⁷ Տե՛ս Բելառուսի Հանրապետության վարչական իրավականացման համրային վտանգավորությունը, չսահմանվեն տուգանքի այնպիսի չափեր, որոնք մի քանի անգամ կգերազանցեն նույնարնույթ հանցագործությունների համար քրեական օրենսդրությամբ սահմանված

¹⁸ Տե՛ս Մակեղոնիայի Հանրապետության զանցանքների մասին օրենսգիրք, (ընդունվել է 1997թ.), հոդված 38:

¹⁹ Տե՛ս Ղազախստանի Հանրապետության վարչական իրավականացման համրային վտանգավորության աստիճանը, վարչական իրավականացման համրային վտանգավորության օրենսգիրք (ընդունվել է 2001թ. հունվարի 30-ին), հոդված 48:

²⁰ Տե՛ս նույն տեղը:

²¹ Օրինակ՝ Ալովենիա, Ֆինլանդիա, Ռումինիա, Ավստրիա, Իտալիա, Խորվաթիա և այլն:

²² Տե՛ս օրինակ, Յայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 315.1-րդ հոդվածը, Յայաստանի Հանրապետության վարչական իրավականացման համրային վտանգավորությունը, (դասագիրք բուհերի համար), Երևան, «ԱՌ» հրատարկչություն, 2007, էջ 109-110:

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

տույժի տեսակ չսահմանվեց Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի նախագծում, քանի որ այն առավելապես կրում է քաղաքացիական վական բնույթ:

Ինչ վերաբերում է վարչական իրավախախտումն գործիք կամ անմիջական օրյեկտ հանդիսացող առարկայի բռնագրավման վարչական տույժի տեսակին, ապա վերջինս սահմանված է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի նախագծի 45-րդ հոդվածում որպես վարչական տույժի տեսակ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 28-րդ հոդվածի համաձայն վարչական իրավախախտում կատարելու գործիք կամ անմիջական օրյեկտ հանդիսացող առարկայի բռնագրավումը այդ առարկան հարկադիր կարգով, անհատույց դառնում է պետական սեփականություն: Բռնագրավվել կարող է միայն այն առարկան, որը խախտողի անձնական սեփականությունն է, եթե Յայաստանի Յանրապետության օրենսդրական ակտերով այլ բան նախատեսված չէ:

Դարձի նկատել, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի նախագծում 49-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է բռնագրավման առավել հստակ բնորոշումը, ըստ որի՝ վարչական իրավախախտումն գործիք կամ անմիջական օրյեկտ հանդիսացող առարկայի բռնագրավումը՝ վարչական իրավախախտում կատարած անձին սեփականության իրավունքը պատկանող վարչական իրավախախտում գործիք կամ անմիջական օրյեկտ հանդիսացող առարկայի հարկադրաբար և անհատույց վեցնելով է՝ ի սեփականություն պետության կամ համայնքի: **Կարծում ենք, արդարացված է նաև, որ նախագծով սահմանվել է ոչ միայն վարչական իրավախախտում հանդիսացող գործիք կամ անմիջական օրյեկտ հանդիսացող առարկայի, այլև հենց վարչական իրավախախտում արդյունքում ստացված գույքի բռնագրավումը:** Դարձի նկատել, որ օրինակ՝ Ղազախստանի Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 45-րդ հոդվածը:

²⁴ Տե՛ս Ղազախստանի Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 45-րդ հոդվածը:

²⁵ Տե՛ս Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի նախագծի 605 հոդվածը:

սակայ հետևյալ անվանմանը «վարչական իրավախախտումն գործիք կամ անմիջական օրյեկտ հանդիսացող առարկայի, վարչական իրավախախտումն արդյունքում ձեռքբերված գույքի բռնագրավում»²⁴: Անշուշտ, նման անվանումը առավել բնորոշ է տույժի տվյալ տեսակի բովանդակությանը:

Դարձի նկատել նոր օրենսգրքի նախագծում, տվյալ տույժի տեսակը նշանակվում և բռնագրավման մասին որոշումը կատարվում է համապատասխան վարչական մարմնի կողմից՝ առանց դատարան դիմելու²⁵: Օրենսդրական այս լուծումը հիմնավորվում է հետևյալ փաստարկներով, նախատարանները որպես վարչական տույժ նշանակող մարմնի այլևս նախատեսված չեն նոր օրենսգրքի նախագծով, ու եթե ֆիզիկական կամ իրավաբանական անձը համաձայն չէ վարչական մարմնի բռնագրավումը որպես տույժի տեսակ նշանակելու որոշման հետ կարող է այն վիճարկել վարչական դատարանում՝ դրանով իսկ ապահովելով իր իրավունքների պաշտպանությունը, և երկրորդ՝ դատարավական բարեփոխումների այս փուլում ՀՀ Արդարադատության նախարարության կողմից մշակվել էր քաղաքացիական դատավարության և վարչական դատավարության օրենսդրության բարեփոխումների հայեցակարգը, որի հիմնական դրույթներից էր վարչական դատարանի ծանրաբեռնվածությունը թերևացնելու նկատառումով վերջիններիս ազտակ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննելու լիազորություններից: Կարծում ենք, սակայն, նախագծում վերը սահմանված կարգը իրավաչափ չէ և հակասում է Յայաստանի Յանրապետության Սահմանադրության 31-րդ հոդվածին: Այսպես, ՀՀ սահմանադրության 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ոչ ոքի չի կարելի գրկել սեփականությունից, բացառությանը դատական կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերի:

Նշված համատեքստում, անշուշտ, բռնագրավումը, որը ևս հանդիսանում է սեփականության իրավունքի հարկադիր և անհատույց դադարում, որպես տույժի տեսակ սահմանված է Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի

նախագծով, սակայն, նախագիծը վերապահել է դրա նշանակումը և իրականացումը վարչական մարմիններին, այսինքն՝ արտադատական կարգով։ Իսկ սահմանադրական նորմի տառացի մեկնաբանությունից բխում է, որ սեփականությունից զրկելու արտադատական կարգով արգելվում է²⁶:

Ընդ որում, ուսումնասիրելով վարչական իրավախախտումների վերաբերյալ առանձին իրավական ակտեր ընդունած երկրների համապատասխան օրենսդրական դրույթները, կարող ենք փաստել, որ ՀՀ բացառիկ այն երկրներից է, որի վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով՝ բռնագրավումը որպես տույժի տեսակ նշանակվում և կիրառվում է առանց դատարանի որոշման։ Իհարկե, բացառությունը դեռևս վիճարկելի չէ իրավաչափության տեսանկյունից, այլ խիստ վիճարկելի է Սահմանադրական նորմերի մեկնաբանության տեսանկյունից, ուստի կարծում ենք իրավական նման լուծումը՝ նույնիսկ վարչական դատարանի ծանրաբեռնվածության նվազեցման հիմնավորմանը չի կարող իրավաչափ լինել։

Այսպիսով, կարծում ենք, նախագծով սահմանված բռնագրավման տույժի տեսակի նշանակման կարգը պետք է համապատասխանեցվի Սահմանադրական վերը նշված նորմին։ Յատկանշական է, որ ՈԴ Սահմանադրական դատարանը 1998 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ 201 որոշմամբ²⁷ անդրադառնալով այս հարցին, նշել է, որ վարչական տույժի այս տեսակը պետք է նշանակվի բացառապես դատարանի կողմից, հակառակ դեպքում այն կիակասի ՈԴ

Սահմանադրության 35-րդ հոդվածի 3-րդ մասին։ Ուստի այս հիմնախսնդիրը կարող է լուծվել, եթե օրենսգրքի նախագծով վարչական տույժի այս տեսակի նշանակումը վերապահվի դատարանին։

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի նախագիծը մշակող աշխատանքային խումբը տարակարծիք էր լիցենզայի կասեցումը և դադարեցումը որպես վարչական տույժի տեսակ ամրագրելու հիմնախսնդիրի վերաբերյալ։ Սակայն, առանձին իրավական ակտերի ուսումնասիրությունը թույլ տվեց եզրահանգելու, որ լիցենզայի կասեցումը և դադարեցումը կիրառվում են հենց իրենց բնույթով վարչական իրավախախտում համարվող արարքների կատարման արդյունքում։

Ի դեպ, հարկ է նկատել, որ վարչական տույժի այս տեսակը մի շաբթ երկրների վարչական օրենսդրությամբ ևս ամրագրված է²⁸։ Այսպես, հարկ է նշել նաև, որ լիցենզայի գրկումը տարրեր անվանումներով, բայց նույն բովանդակությամբ նաև շատ այլ երկրների քրեական օրենսդրությամբ նախատեսված պատժի տեսակ է, օրինակ՝ Լիտվա, Լատվիա, Մոլդովա, Բուլղարիա, Ռումինիա և այլն²⁹։

Միևնույն ժամանակ հարկ ենք համարում նշել, որ վերը նշված թույլը երկրներում քննարկվող վարչական տույժի տեսակը նշանակվում է բացառապես դատարանի կողմից, և ավելին՝ նույնիսկ այն երկներում, որտեղ նշված վարչական տույժի տեսակը սահմանված է վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրությամբ։

²⁶ Տե՛ս Յայաստանի Յանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Զարությունյանի, Ա. Կաղարջյանի. Երևան: «Իրավունք», 2010թ., էջ 368։

²⁷ Տե՛ս Օпределение Конституционного Суда РФ от 3 декабря 1998 г. № 201-0 по жалобе гражданина Л.Н. Васильевоой, А.Н. Евгееva и Л. А. Налетова на нарушения их конституционных прав положениями ч.4 ст. 146-7 КоАП РФ // СЗ . — 1999. — N17.-Ст. 2204:

²⁸ Տե՛ս Մոլդովայի Յանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքը (ընդունվել է 2008թ. հոկտեմբերի 24-ին), Բուլղարիայի Յանրապետության վարչական իրավախախտումների և վարչական տույժերի մասին օրենսգրքը (ընդունվել է 1969թ. նոյեմբերի 28-ին), հոդված 6.2. 1-ին մաս 6-րդ կետ և հոդված 6.9, Ղազախստանի Յանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքը (ընդունվել է 2001թ. հունվարի 30-ին), Ղրղիզաստանի ժողովրդական Յանրապետության վարչական պատիժների վերաբերյալ օրենսգրքը, (ընդունվել է 1996թ. հոկտեմբերի 1-ին):

²⁹ Տե՛ս Լատվիայի Յանրապետության քրեական օրենսգրքը, (ընդունվել է 1998թ. հունիսի 17-ին), Մոլդովայի Յանրապետության քրեական օրենսգրքը (ընդունվել է 2002թ. ապրիլի 18-ին), Լիտվայի Յանրապետության քրեական օրենսգրքը, (ընդունվել է 2000թ. սեպտեմբերի 26-ին), Բուլղարիայի Յանրապետության քրեական օրենսգրքը, (ընդունվել է 1968թ. ապրիլի 2-ին), Ռումինիայի Յանրապետության քրեական օրենսգրքը, (ընդունվել է 2004թ.):

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Կարծում ենք, սակայն, որ լիցենզիա-ի և թույլտվության դադարեցման վարչական տույժի տեսակները, անշուշտ, չեն կարող նշանակվել վարչական մարմինների կողմից: Սամանվորապես, վերջինս համարվում է խիստ վարչական տույժի տեսակ, և ինչպես արդեն նշել ենք, շատ ու շատ երկրների օրենսդրությամբ այն սահմանված է որպես պատժի տեսակ և նշանակվում է բացառապես դատարանների կողմից: Ակնհայտ է, որ վարչական դատարանների ծանրաբեռնվածությունը թոթափելու, պետական միջոցների անհարկի վատնումից խուսափելու հիմնախնդիրը այս համատեքստում ևս չի կարող վեր կանգնած լինել սահմանադրորեն երաշխավորված տնտեսական ազատությունից, ինչպես նաև մարդու և քաղաքացու իրավունքների պաշտպանությունից: Բացի այդ «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ օրենքով սահմանված հիմքերով լիցենզիայի գործողության դադարեցման դեպքում անձն իրավունք ունի նոր լիցենզիա ստանալու համար դիմել միայն լիցենզիայի գործողությունը դադարեցվելուց մեկ տարի հետո: Այս դեպքում, կարծում ենք, որ օրենսդրորեն պետք է ամրագրել նաև, որ իրավաբանական անձը չի կարող կրկին դիմել նույն լիցենզիան ստանալու համար, որից նա գրկվել է վարչական իրավախախտման կատարման արդյունքում: Այս նորմը նպատակառություն կլինի կանխելու ինչպես տվյալ իրավաբանական անձի կողմից հետագայում կատարվելիք իրավախախտումները, այնպես էլ ընդհանուր առնամբ մյուս իրավաբանա-

կան անձանց կողմից իրավախախտումներ կատարելուց ծեռնպահ մնալու համար ևս նախականինչից նշանակություն կունենա:

Այսախով, կարծում ենք, որ վարչական տույժի այս տեսակը, ինչպես նաև իրավաբանական անձի գործունեության դադարեցումը, պետք է բացառապես նշանակվեն դատարանների կողմից:

Ըստ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի նախագծի 54-րդ հոդվածի՝ իրավաբանական անձի գործունեության դադարեցումը իրավաբանական անձի հարկադիր լուծարումն է: Ի դեպ, Նախագծով բացառություն է սահմանված միայն կուսակցությունների համար: Հարկ է նկատել, որ օրինակ՝ Ռումինիայի քրեական օրենսգրքի 83-րդ հոդվածով³⁰ այդ բացառությունը, բացի կուսակցություններից, տարածվում է նաև այն իրավաբանական անձանց վրա, որոնք գործունեություն են ծավալում որպես զանգվածային լրատվության միջոցներ, և կրոնակական կազմակերպությունների վրա: Իսկ Խորվաթիայի «Քրեական հանցագործությունների համար իրավաբանական անձանց պատասխանատվության մասին» օրենքի 12-րդ հոդվածի համաձայն՝ նաև տեղական ինքնակառավարման միավորների և առևտարյին միությունների վրա³¹: Որպես պատժի տեսակ այն ամրագրված է նաև Ֆրանսիայի, Լատվիայի, Էստոնիայի, Լիտվայի, Մոլդովայի, Մակեդոնիայի, Ռումինիայի, Սլովենիայի, Խորվաթիայի և այլ երկրների քրեական օրենսգրքով³², և ըստ նշված օրենսգրքերի համապատասխան դրույթների՝ պատժի տվյալ տեսակը նշանակվում է բացառապես դատարանի որոշմամբ:

³⁰ Տե՛ս Ռումինիայի Հանրապետության քրեական օրենսգրքը, (ընդունվել է 2004թ.):

³¹ Տե՛ս «Քրեական հանցագործությունների համար իրավաբանական անձանց պատասխանատվության մասին» Խորվաթիայի Հանրապետության օրենքը, (ընդունվել է 2003թ. սեպտեմբերի 11-ին):

³² Տե՛ս Ֆրանսիայի Հանրապետության քրեական օրենսգրքը, (ընդունվել է 1992թ. հուլիսի 22-ին), 131-39 հոդված 1-ին մաս, Լատվիայի Հանրապետության քրեական օրենսգրքը, (ընդունվել է 1998թ. հունիսի 17-ին), Էստոնիայի Հանրապետության քրեական օրենսգրքը, (ընդունվել է 2001թ. հունիսի 6-ին), Մոլդովայի Հանրապետության քրեական օրենսգրքը (ընդունվել է 2002թ. ապրիլի 18-ին), Լիտվայի Հանրապետության քրեական օրենսգրքը, (ընդունվել է 2000թ. սեպտեմբերի 26-ին), Մակեդոնիայի Հանրապետության քրեական օրենսգրքը, (ընդունվել է 1996թ. նոյեմբերի 1-ին), Ռումինիայի Հանրապետության քրեական օրենսգրքը, (ընդունվել է 2004թ.), «Քրեական հանցագործությունների համար իրավաբանական անձանց պատասխանատվության մասին» Սլովենիայի Հանրապետության օրենքը, (ընդունվել է 2005թ. նոյեմբերի 21-ին), «Քրեական հանցագործությունների համար իրավաբանական անձանց պատասխանատվության մասին» Խորվաթիայի Հանրապետության օրենքը, (ընդունվել է 2003թ. սեպտեմբերի 11-ին):

Գրեթե բոլոր երկրների օրենսդրության վերլուծությունը ցույց է տալիս նաև, որ իրավաբանական անձի լուծարումը համարվում է որպես լրացուցիչ պատիժ, և նախատեսվում է կոնկրետ պայման, այն է՝ եթե տվյալ իրավաբանական անձը ստեղծվել է հանցագործություն կատարելու համար կամ եթե ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն է կատարել³³ կամ եթե դատարանը գտնում է, որ իրավաբանական անձի կատարած արարքի ծանրությունը անհնարին է դարձնում նրա հետազա գործունեությունը³⁴ կամ եթե դատարանը գտնում է, որ հանցագործության կատարումը նրա գործունեության հիմնական մասն է կազմում³⁵ կամ եթե իրավաբանական անձը չարաշահում է իր գործառությունը կատարելու համար և առկա է իրական վտանգ կրկին հանցագործություններ կատարելու³⁶ կամ իրավաբանական անձը կատարել է այնպիսի արարք, որի կատարման համար ֆիզիկական անձի համար սահմանված է ազատազրկում 5 տարի և ավելի ժամկետով³⁷:

Կարծում ենք, Նախագծի վերը նշված հոդվածն անհրաժեշտ է լրացնել սահմանելով իրավաբանական անձի գործունեության դադարեցման վարչական տույժի նշանակման համար հետևյալ պայմանը, առ այն՝ եթե օրենսգրքի հատուկ մասի նորմերով սահմանված չէ վարչական տույժի նշված տեսակը, ապա որպես լրացուցիչ վարչական տույժ այն կարող է նշանակվել այն իրավաբանական անձանց նկատմամբ, որոնք ստեղծվել են վարչական իրավախախտումներ կատարելու համար կամ

եթե իր լիազորությունները չարաշահում է վարչական իրավախախտումներ կատարելու համար կամ վարչական իրավախախտումների կատարումը նրանց գործունեության հիմնական մասն է կազմում:

Միևնույն ժամանակ, որոշակի առումով գործահեռներ անցկացնելով իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտի հետ, և արդեն իսկ ներկայացնելով դատաիրավական բարեփոխումների տվյալ փուլում դեռևս իրավաբանական անձանց վարչական պատասխանատվության ամրագրման անհրաժեշտությունը, կարծում ենք, որպես քրեական պատասխանատվության հետևանք դատվածության առաջացման համատեքստում վարչական պատասխանատվության իրավական հետևանքը պետք է անրագրել, այն, որ իրավաբանական անձի նկատմամբ իրավաբանական անձի գործունեության դադարեցման վարչական տույժի նշանակման դեպքում տվյալ իրավաբանական անձանց հիմնադիրներին արգելվում է ստեղծել նոր իրավաբանական անձ:

Եսկ միայն իրավաբանական անձանց նկատմամբ կիրառվող տույժերի տեսակների ցանկում, կարծում եմ, անհրաժեշտ է որպես վարչական տույժի լրացուցիչ տեսակ սահմանել նաև վարչական տույժ նշանակելու մասին որոշման իրապարակումը: Բնորոշ է այն, որ եվրոպական երկրներում տույժի այս տեսակը ևս օրենսդրորեն ամրագրված է, օրինակ՝ Ֆրանսիայի, Ռումինիայի, Բուլղարիայի, Սլովենիայի, Խորվաթիայի քրեական օրենսդրությամբ և այլն:

³³ Տես Հատվիայի Հանրապետության քրեական օրենսգիրք, (ընդունվել է 1998թ. հունիսի 17-ին) 70.3-րդ հոդված:

³⁴ Տես Մոլդովայի Հանրապետության քրեական օրենսգիրք (ընդունվել է 2002թ. ապրիլի 18-ին), 74-րդ հոդված:

³⁵ Տես Էստոնիայի Հանրապետության քրեական օրենսգիրք, (ընդունվել է 2001թ. հունիսի 6-ին) 46-րդ հոդված, «Քրեական հանցագործությունների համար իրավաբանական անձանց պատասխանատվության մասին» Սլովենիայի Հանրապետության օրենք, (ընդունվել է 2005թ. նոյեմբերի 21-ին):

³⁶ Տես Սակեռնիայի Հանրապետության քրեական օրենսգիրք, (ընդունվել է 1996թ. նոյեմբերի 1-ին) 96-Բ, «Քրեական հանցագործությունների համար իրավաբանական անձանց պատասխանատվության մասին» Խորվաթիայի Հանրապետության օրենք, (ընդունվել է 2003թ. սեպտեմբերի 11-ին), հոդված 12:

³⁷ Տես Սակեռնիայի Հանրապետության քրեական օրենսգիրք, (ընդունվել է 1996թ. նոյեմբերի 1-ին) հոդված 96-Ը 7-րդ կետ:

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Այսպես, որպես իրավաբանական անձանց նկատմամբ նշանակվող պատժի տեսակի՝ դատավճռի հրապարակման կամ տարածման էլույթունը դրսնորվում է հետևյալում. այն իրականացվում է իրավախախտի հաշվին, ընդ որում այն իրապարակելու և տարածելու վարչական ծախսերը չպետք է գերազանցի տվյալ իրավախախտման համար սահմանված տուրգանքի առավելագույն չափը: Դատարանը կարող է որոշել ամբողջ դատավճռի, կամ նրա միայն մի մասը կամ որոշ մասեր իրապարակել կամ որպես պաշտոնական հաղորդագրություն տարածել՝ հասարակությանը իրազեկելով նման դատավճիր կայացնելու պատճառների մասին: Դատավճռի հրապարակումը իրականացվում է դատարանի որոշված վայրերում կամ մանուլում և դատարանի կողմից սահմանված ժամկետում: Եթե ոչնչացվում են փակցված հաղորդագրությունները կամ այլ կերպ դրանք վնասվում են, նշված լրացնուցիչ ծախսերը ևս իրականացվում են իրավախախտի հաշվին: Ընդ որում, դատարանը որոշում է այն նամուլի օրգանը կամ զանգվածային լրատվության միջոցները, որոնց միջոցով այն պետք է տարածվի և վերջիններս իրավունք չունեն հրաժարվել դրանց իրապարակումից: Դատավճռի հրապարակման

կամ տարածման ժամանակ բույլատրելի է տուժող կողմի անձնական տվյալների հրապարակումը միայն վերջինիս կամ նրա օրինական ներկայացուցչի կամ ներկայացուցչի համաձայնությամբ:

Հարկ է նկատել, որ տվյալ տեսակի վարչական տույժի սահմանումը կարող է ունենալ ինչպես դրական այնպես էլ բացասական հետևանքներ: Որպես բացասական հետևանքներ, կարելի է նշել, օրինակ սպառողների վստահության կորուստը, արտադրանքի նկատմամբ պահանջարկի նվազումը, և այլն: Բացի այդ, ներկայիս շուկայական հարաբերությունների պայմաններում այն կարող է դառնալ նրացակցային պայքարի միջոց այն կազմակերպությունների միջև, որոնք շուկայում նույն հարթության վրա են գտնվում, և հետևաբար, պետությունը անուղղակիորեն կներգրավվի այդ պայքարի մեջ:

Այսպիսով, որոշակի թերություններով հանդերձ, այնուամենայնիվ, ողջունելի պետք համարել այն, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ նախագծում վարչական տույժների տեսակների բավական լայն ցանկ է սահմանված, որոնք իրենց ամբողջությամբ, թերևս ամրագրված չեն որևէ երկորի քրեական կամ վարչական օրենսդրությամբ:

Միևնույն ժամանակ, հարկ է նկատել, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Նախագծում առկա է հայեցակարգային թերություն: Մասնավորապես, եթե Նախագծում որպես վարչական տույժ նշանակող մարմին ամրագրված չէ դատարանը, այլ միայն վարչական մարմինները, հետևաբար, վարչական տույժի այնպիսի տեսակներ, ինչպիսիք են՝ իրավաբանական անձի գործունեության դադարեցում, այսինքն՝ լուժարում, լիցենզիայի գործողության դադարեցում, վարչական իրավախախտման գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկայի բռնագրավում, չեն կարող նշանակել միայն վարչական մարմինների կողմից, որի վերաբերյալ մեր եզրահանգումները ներկայացրեցինք վերևում, ուստի տվյալ դեպքում օրենսդիրը ունի օրենսդրական լուժման երկու ուղղությունն. կամ պետք է կրծատել վարչական տույժի տեսակները, մասնավորապես, վարչական մարմինները կարող են նշանակել միայն վարչական այնպիսի տույժեր, ինչպիսիք են՝ ա) նախագգուչացում, բ) վարչական տուրգանք, գ) լիցենզիայի, բույլատվության գործողության կասեցում, դ) որոշակի տեսակի գործունեության կամ որոշակի վայրում գործունեության իրականացման կասեցում: Կամ վարչական տույժի հետևյալ տեսակները, մասնավորապես, 1) Վարչական իրավախախտման գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող առարկայի բռնագրավում, 2) լիցենզիայի, բույլատվության գործողության դադարեցում, 3) իրավաբանական անձի գործունեության դադարեցում, պետք է նշանակվեն դատարանի կողմից:

Հանցագործության դեպքի բացակայության և արարքի մեջ հանցակազմ չլինելու հիմքերով քրեական վարույթի կարձման առանձնահատկությունները

Արտեն ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Խրավաբանական գիտությունների թեկնածու

Քրեադատավարական օրենսդրության պատմական վերլուծությունը ցույց է տալիս, որ այն հանցամանքները, որոնք հիմք են հանդիսանում քրեական գործի հարուցումը մերժելու և գործով վարույթը կարծելու (քրեական հետապնդումը դադարեցնելու) համար ժամանակի ընթացքում ենթարկվել են եական փոփոխությունների: Այս առումով բացառություն չի կազմում նաև հանցագործության դեպքի բացակայության հիմքը:

Հանցագործության դեպքի բացակայությունը՝ որպես քրեական վարույթի կարձման ինքնուրույն հիմք առաջին անգամ նախատեսվել է 1958 թ. դեկտեմբերի 25-ին ընդունված ԽՍՀ Միության, միութենական և ինքնավար հանրապետությունների քրեական դատավարության հիմունքներում (հոդված 5, մաս I): Հետագայում համանման դրույթ ամրագրվեց նաև 1961 թ. ՀԽՍՀ քրեական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածում², իսկ այսուհետև նաև՝ «Հ գործող քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետև՝ «Հ քր. դատ. օր.) 35-րդ հոդվածում³:

Այսպիսով, օրենսդրական մակարդակով ընդունվեց այն մոտեցումը, որ հանցագործության դեպքի բացակայությունը և արարքի մեջ հանցակազմ չլինելը քրեական վարույթի կարճման ինքնուրույն հիմքեր են⁴: Չնայած դրան, ինչպես նախկինում, այնպես էլ ներկայումս քրեական վա-

րույթի կարծման քննարկվող հիմքերի էլերային և դրանք միմյանցից սահմանազատելու վերաբերյալ դատավարական իրավունքի տեսության մեջ միասնական մոտեցում չկա: Ինչպես ժամանակին նշում էին Ն.Վ. Ժողինը և Ֆ.Ն. Ֆատկուլինը, մինչև օրենսդրության մեջ հանցագործության

¹ Տե՛ս Վեճոմուտի ԲС ՀՀՀՊ, 1959, թիվ 1, հոդվ. 12:

² Տե՛ս Հայկական ԽՍՀ ԳԽ տեղեկագիր, 1961 թիվ 7, հոդվ. 42:

³ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրք ՀՀՊՏ 1998.09.21/22 (55):

⁴ Յարկ է նշել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի ընդիանուր մասի նախագծի (այսուհետ՝ նախագիր) 28-րդ հոդվածում հանցագործության դեպքի բացակայությունը և արարքի մեջ հանցակազմ չլինելը առանձնացված չեն որպես քրեական վարույթի կարճման ինքնուրույն հիմքեր: Փոխարենը նախագծում որպես քրեական վարույթի կարճման հիմք առանձնացած է՝ հաստատվել է քրեական օրենսգրքով նախատեսված որևէ հանցանքի բացակայությունը: Տվյալ դեպքում կարծես թե նախագծում այս հիմքի տակ ի նկատի է ունեցվում և հանցագործության դեպքի բացակայությունը, և արարքի մեջ հանցակազմ չլինելը: Կարծում ենք, որ այս հարցում գործող օրենսգրքի մոտեցումը ավելի ընդունելի է, քանի որ այդ երկու հիմքերի առանձնացումը և հստակ տարանջատումը շատ կարևոր է դրանց կիրառման արդյունքում առաջացրած իրավական տարրեր հետևանքների տեսանկյունից: Նախագիրը տեղադրված է ՀՀ արդարադատության նախարարության ինտերնետային կայք էջում. (04.11.2011թ. դրությամբ): www.moj.am

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

դեպքի բացակայության հիմքի ներմուծումը խորհուրդ էր տրվում գործով վարույթը կարծել արարքի մեջ հանցակազմ չլինելու հիմքով։ Դա միաժամանակ նորմալ համարել էր կարելի, քանի որ այն հանգեցնում էր այդ երկու հիմքերի միախառնման⁵։ Ի հակառություն նշված տեսակետի՝ Ե.Գ. Վասիլևան գտնում է, որ հանցակազմի բացակայության հիմքից պետք է հրաժարվել, քանի որ այն առաջացնում է որոշակի անորոշություն և նրանք բացակայության մեջ է գտնվում հանցագործության դեպքի բացակայության և հանցագործության կատարման մեջ անձի մեղավորությունն ապացուցված չլինելու՝ օրենքով նախատեսված հիմքերի հետ։ Քերինակը պնդում է նաև, որ այդ հիմքի պարզաբանման համար լրացրություն է առաջացնում այն փաստը, որ նշված հիմքը մյուսների նկատմամբ հանդես է գալիս որպես առավել ընդհանուր կատեգորիա և կիրառվում է բոլոր այն դեպքերում, երբ այս կամ այն հիմքը քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված չէ⁶։ Կարծում ենք, չի կարելի համաձայնվել ներկայացված մոտեցման հետ, քանի որ հանցակազմի բացակայության հիմքի վերացումը չի կարող առկա անորոշության վերացնան միջոց հանդիսանալ։ Ընդհակառակը, այն ավելի կիսրացնի և կիսճի առկա վիճակը։ Խնդրի լուծման լավագույն միջոցը, մեր կարծիքով, օրենսդրական մակարդակով այդ երկու հիմքերի հստակ տարածատումն է։

Քննչական պրակտիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ շատ հաճախ գործնական աշխատանքում հստակ չի տարածատվում հանցագործության դեպ-

քի բացակայությունը արարքի մեջ հանցակազմ չլինելու հիմքից։ Գործով վարույթի կարծման այդ երկու հիմքերի եռթյունը բացահայտելու, ինչպես նաև միմյանցից

«...Քննչական պրակտիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ շատ հաճախ գործնական աշխատանքում հստակ չի տարանջատվում հանցագործության դեպքի բացակայությունը արարքի մեջ հանցակազմ չլինելու հիմքից...»

սահմանազատելու համար առաջին հերթին անհրաժեշտ է պարզել թե ինչ է իրենից ներկայացնում «հանցագործության դեպքի բացակայություն» հասկացությունը և ինչպիսի հարաբերակցության մեջ է այն գտնվում «արարքի մեջ հանցակազմ չլինելու» հասկացության հետ։ Առաջին դիտարկմանը կարծեն թե այդ երկու իրավական երևույթները նույնանում են, քանի որ երկու դեպքում էլ նշվում է հանցագործության բացակայության մասին։ Այդպիսի հետևողությունը ընդունելի է միայն քրեադատավական տեսանկյունից։ Քրեադատավական իմաստով «հանցագործության դեպք» հասկացությանը համարժեք է «հանցակազմը», քանի որ հանցագործության դեպքը չի կարող գոյություն ունենալ, եթե նրանում բացակայում են հանցակազմի տարրերը կամ տարրերից որևէ մեկը։ Այլ խստքով ասած՝ հանցագործության դեպքի բացակայությունը միաժամանակ նշանակում է նաև հանցակազմի բացակայություն։ Քրեադատավարական տեսանկյունից «հանցագործության դեպք» հասկացությունը իր բովանդակությամբ ավելի մեղ է, քան «հանցակազմի բացակայություն»⁷։

⁵ Տե՛ս Ժօրին Հ.Վ. Փատկուլլին Փ.Ն. Предварительное следствие в советском уголовном процессе. М., 1965, էջ 305:

⁶ Տե՛ս Վասիլևսա Ե.Գ. Правовые и теоретические проблемы прекращения уголовного преследования и производства по уголовному делу. – М: Изд. “Юрлитинформ”, 2006, էջ 101:

⁷ Տե՛ս Յորասօվ Ա.Բ. Основания прекращения уголовного дела в действующем российском законодательстве – анализ, перспективы развития: Дисс. канд. юрид. наук, М., 2005, էջ 93:

Այսինքն, եթե քրեական դատավարությունը կատարված է հանցագործության դեպքի բացակայությունում և «հանցակազմի բացակայություն» հասկացությունները չեն տարբերվում, ապա նույնը չի կարելի ասել դրանց դատավարական իմաստի վերաբերյալ։ Այդ մասին է վկայում գործող քր. դատ. օր.-ում կարծնան այդ հիմքերը առանձին կետերով նախատեսված լինելու հանգամանքը։ Ուստի և անհրաժեշտություն է առաջանալ հստակեցնել այն չափանիշները, որոնք կարծնան այդ երկու հիմքերը միմյանցից տարանջատելու հնարավորություն կտան։

ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքում բացակայում է «հանցագործության դեպք» հասկացության բնորոշումը։ Օրենսգրքի 6-րդ հոդվածում տրված է միայն «դեպք» հասկացության սահմանումը, որի վերլուծությունից կարելի է հետևություն անել այն մասին, որ տվյալ պարագայում դեպք ասելով օրենսդիրը ի նկատի է ունենում հանցագործության դեպքը։ Այսպես, հաճածայն նշված հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ **դեպքը հանցագործության հատկանիշները պարունակող իրադարձություն է, որի կապակցությամբ իրականացվում է քրեական դատավարություն**։ Ներկայացված բնորոշումից հետևում է, որ օրենսդիրը «հանցագործության դեպք» և «հանցագործություն» հասկացությունները կարծեն թե նույնացրել են։ Հանցագործությունը, ՀՀ քր. օր.-ի 18 հոդվածի 1-ին մասի ուժով, մեղավորությամբ կատարված հանրորեն վտանգավոր արարք է նախատեսված քրեական օրենսգրքով։ Ընդ որում, հանցագործությունը արդեն իսկ իր մեջ բովանդակում է քրեական պատասխանատվության ենթակելու բոլոր անհրաժեշտ նախադրյալները, այսինքն՝ կոնկրետ հանցակազմի բոլոր անհրաժեշտ տարրերը։ Այլ խոսքով ասած, հանցակազմի տարրերից որևէ մեկի բացակայությունը միաժամանակ վկայում է հանցագործության բացակայության մասին։ Այս առումով ինչպես իրավացիորեն նշում է **Ե.Գ. Վասիլևան «հանցագործության դեպքը» չի կարելի նույնացնել հանցագործության հետ**։ «Հանցագործության դեպքը» ՈՂ ՔԴՕ 24 հոդվածի 1-ին

մասի 1-ին կետի ուժով նշանակում է հանցագործության օբյեկտիվ, արտաքին կողմը։ Այստեղից հետևում է, որ դրան է վերաբերում նաև հանցագործության այնպիսի տարր, ինչպիսին օբյեկտն է⁸։ Այլ խոսքով ասած՝ «հանցագործության դեպք» հասկացությունը քրեադատավարական իմաստով նշանակում է հանցագործության օբյեկտիվ կողմի առկայություն, այսինքն՝ հանրորեն վտանգավոր արարք, նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի 3ատուկ մասի կոնկրետ հոդվածի դիսայնդիցիալով։

Անդրադառնալով հանցագործության դեպքի բացակայության և արարքի մեջ հանցակազմի բացակայության հիմքերով գործով վարույթի կարծնան հիմնախնդիրներին՝ **Բ.Ս. Սերգեևը** նշում է. «Հանցագործության դեպքի բացակայությունը ենթադրում է արարքի (գործողություն կամ անգործություն) բացակայություն, որի կապակցությամբ ստացվել է հաղորդում կամ հայտարարություն, որը կարելի է գնահատել որպես հանցագործություն կամ իրավունքի այլ նորմերի խախտում կամ այն իրավաչափի է ...։ Եթե խոսքը գնում է հանցագործության դեպքի բացակայության և արարքի մեջ հանցակազմ չլինելու հիմքերի գանազանումը կայանում է նրանում, որ քննարկվող հիմքերի կիրառումը... առաջացնում է տարրեր իրավական հետևանքներ։ Արարքի մեջ հանցակազմ չլինելը չի բացառում դրանում վարչական կամ կարգապահական գանցանքի կամ հասարակական կազմի և համակեցության այլ կանոնների խախտման առկայությունը։ Ուստի, հանցագործության դեպքի բացակայության հիմքի տարրերությունը արարքի մեջ հանցակազմ չլինելու հիմքից կայանում է նրանում, որ վերջին դեպքում չի բացառվում վարչական կամ կարգապահական պատասխանատվության ներգործության միջոցների կիրառումը։ Բացի այդ, հանցագործության դեպքի բացակայությունը առաջացնում է քաղաքացիական հայցի բավարարման մերժում, այն դեպքում, եթե

⁸ **Տե՛ս Վասիլևա Ե.Գ.** Правовые и теоретические проблемы прекращения уголовного преследования и производства по уголовному делу. – М: Изд. §Юрлитинформ:, 2006, էջ 98-100:

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

արարքի մեջ հանցակազմ չլինելը հնարավորություն է տպական որոշելու քաղաքացիական դատավարության կարգով պատճառված վճարը հասուցելու հարցը»⁹:

Այսպիսով՝ ելեկով ներկայացված նույնությունը կարելի է արձանագրել, որ հանցագործության դեպքի բացակայությունը

«...Արարքի մեջ հանցակազմ չլինելը չի բացառում դրանում վարչական կամ կարգապահական զանցանքի կամ հասարակական կարգի և համակեցության այլ կանոնների խախտման առկայությունը...»

Ենթադրում է այնպիսի արարքի (գործողության կամ անգործության) բացակայություն, որը բոլոր դեպքերում կարելի է գնահատել որպես հանցագործություն և դրա կապակցությամբ իրականացնել քննություն: Այսինքն՝ հանցագործության դեպքի բացակայությունը նշանակում է ինչպես ընդհանրապես դեպքի բացակայություն, այնպես էլ դեպքի առկայություն, որը, սակայն, քրեական օրենսգրքի տեսանկյունից պատժելի չի համարվում:

Միաժամանակ անհրաժեշտ է հստակեցնել այն հնարավոր իրավիճակները, որոնք բոլոր դեպքերում կանահատվեն որպես հանցագործության դեպքի բացակայություն և կիամօգեցնեն հենց այս հիմքով քրեական վարույթի կարճաման: Այս առունվ և տեսության մեջ դատավարագետների մոտեցումները տարբեր են: Այսպես, հեղինակների մի մասը գտնում է, որ հանցագործության դեպքի բացակայությունը

նշանակում է «հանցագործության բացակայություն»¹⁰: Դատավարագետների երկրորդ խմբի կարծիքով՝ հանցագործության դեպքի բացակայությունը ենթադրում է ընդհանրապես դեպքի բացակայություն, որի կապակցությամբ իրականացվում է քննություն¹¹: Յարկ է նկատել, որ օրենքում

խոսվում է ոչ թե ընդհանրապես դեպքի բացակայության, այլ կոնկրետ հանցագործության դեպքի բացակայության մասին: Ուստի ճիշտ պետք է համարել այն երրորդ խումբը դատավարագետների մոտեցումը, որոնք գտնում են, որ

հանցագործության դեպքի բացակայությունը նշանակում է այնպիսի գործողությունների բացակայություն, ինչի համեմատությամբ կարելի է խոսել, որ այն բովանդակում է հանցագործության հատկանիշներ և հատկապես: 1) երբ տեղի չի ունեցել այն փաստը (դեպքը), որը կարելի է գնահատել որպես հանցագործություն, 2) տեղի ունեցած դեպքը բնական ուժի արդյունք է 3) տեղի ունեցած տուժողի գործողությունների արդյունք է¹²:

Դատավարական իրավունքի տեսության մեջ միասնական մոտեցում չկա նաև այն հարցում, թե ինչպիսի որոշում պետք է կայացվի գործով, եթե հնարավոր չէ ստույգ որոշել տեղի է ունեցել հանցագործության դեպքը, թե ոչ:

Որոշ դատավարագետներ գտնում են, որ տվյալ պարագայում գործով վարույթը պետք է կարծել հանցագործության դեպքի բացակայության հիմքով¹³:

⁹ Տե՛ս Սերգեև Բ.Մ. Օտсутствие события и состава преступления как основания к отказу в возбуждении уголовного дела // Следователь. 2002. N 10. էջ 6, 7:

¹⁰ Տե՛ս Դубинский А.Я. Прекращение уголовного дела в стадии предварительного расследования: Учебн. пособие. Киев, 1975. էջ 46-47:

¹¹ Տե՛ս Դավыдов П.М., Мирский Д.Я. Прекращение уголовных дел. М., 1963. էջ 12:

¹² Տե՛ս Ստեփանов В.Т., Шимановский В.В. Прекращение уголовного дела в стадии предварительного расследования.-Լ, 1979, էջ 8, Լևинова Т.А. Отсутствие события преступления: уголовно-процессуальные аспек //Научный портал МВД России. 2009, ? 1 (5). էջ 29, Վարդանյան Ա.Ժ. Քրեական գործով վարույթի կարճաման և քրեական հետապնդման դադարեցման օրինականության և հիմնավորվածության ապահովումը նախնական քննության փուլում: Իրավ. գիտ. թեկն. ատենախոս. սեղմագիր, Երևան, 2009, էջ 15:

¹³ Տե՛ս Լукашевич В.Յ. Прекращение уголовного дела в стадии предварительного расследования по реабилитирующем обвиняемого основаниям //Правоведение. -1968. - N 4. էջ 53, յակобович Н.Ա. Окончание предварительного следствия. М., 1962. էջ 101-102:

4. Յա. Չեկանովի կարծիքով՝ այդ դեպքում գործով վարույթը կարծել հանցագործության դեպքի բացակայության շարժարիթով չի կարելի, քանի որ յուրաքանչյուր հանցագործության բացահայտման խնդիրը մնում է չիրականացված։ Ուստի, ըստ հեղինակի, այս դեպքում գործով վարույթը պետք է կասեցնել որպես մեղադրյալ ներգրավման ենթակա անձի հայտնի չլինելու հիմքով¹⁴։ Ներկայացված մոտեցման հետ չի կարելի համաձայնվել, քանի որ որպես մեղադրյալ ներգրավման ենթակա անձի հայտնի չլինելու հիմքով գործով վարույթը կասեցնելիս պետք է

գործության դեպքի մասին է։ Բոլոր այն դեպքերում, երբ հնարավոր չի լինում հաստատել հանցագործության դեպքի առկայությունը, քրեական վարույթը պետք է կարծել հանցագործության դեպքի բացակայության հիմքով, քանի որ իրավական տեսանկյունից դեպքի ապացուցված չլինելը հավասարազոր է դրա բացակայությանը։

Ելնելով մասնագիտական գրականության մեջ տարբեր հեղինակների կողմից արտահայտված մոտեցումներից՝ կարելի է առանձնացնել այն հնարավոր իրավիճակները, որոնք կգնահատվեն որպես հանցագործության դեպքի բացակայություն և հնարավորություն կտան այս հիմքով կարծել վարույթը։ Այլ կերպ ասած՝ հանցագործության դեպքի բացակայության հիմքով քրեական վարույթը կարող է կարճվել հետևյալ դեպքերում։

1) Երբ տեղի չի ունեցել այն փաստը (դեպքը), որը կարելի է գնահատել որպես հանցագործություն...

«...Հանցագործության դեպքի բացակայությունը ենթադրում է այնպիսի արարքի բացակայություն, որը բոլոր դեպքերում կարելի է գնահատել որպես հանցագործություն և դրա կապակցությամբ իրականացնել քննություն...»

ստույգ հաստատված լինի հանցագործության կատարման փաստը։ Եթե հանցագործության կատարման փաստը ստույգ չի ապացուցվել քրեական գործով վարույթը չափոր է կասեցվի, այլ պատը է կարծվի՝ հանցագործության դեպքի բացակայության հիմքով¹⁵։

Ըստ Ն.Վ. Ժոգինի և Ֆ.Ն. Ֆատկուլինի՝ տվյալ պարագայում գործով վարույթը պետք է կարծվի մեղադրյալի մասնակցությունը հանցագործության կատարման մեջ ապացուցված չլինելու հիմքով¹⁶։ Մեր կարծիքով, այս մոտեցումը ևս ընդունելի չէ, քանի որ նշված իրավիճակում խոսքը ոչ թե մեղադրյալի մեղավորությունը հանցագործության կատարման մեջ ապացուցված կամ չապացուցված լինելու, այլ հանցա-

(օրինակ՝ հանցագործության մասին սույտ մատնությունը),

2) Երբ դեպքը տեղի է ունեցել, բայց այն ոչ թե մարդկային գործունեության, այլ բնական ուժի հետևանք է (օրինակ՝ տարերային աղետ, կենդանիների գործողություններ, անվերահսկելի ֆիզիկական կամ քիմիական գործընթացներ և այլն),

3) Երբ դեպքը տեղի է ունեցել, բայց այն չի հանդիսանում ոչ իրավաչափ գործունեության արդյունք, այսինքն՝ դեպքը սխալմամբ ընկալվում է որպես հանցագործություն (օրինակ՝ սեփականատերը գույքը տալով այլ անձի՝ այդ մասին տեղյակ չի պահում ընտանիքի անդամներին),

¹⁴ Տե՛ս Չեկանով Վ.Յ. Գарантии прав граждан в СССР и усиление их охраны на современном этапе коммунистического строительства. Саратов, 1962. էջ 82:

¹⁵ Տե՛ս Բյկով Վ.Մ. Основания приостановления предварительного следствия по УПК РФ // Государство и право – 2004. - N 5. էջ 107:

¹⁶ Տե՛ս Ժօգին Հ.Վ., Ֆատկուլլին Փ.Ի. Предварительное следствие в советском уголовном процессе. էջ 335–336:

4) Եթե դեպքը տեղի է ունեցել, բայց այն արդյունք է տուժողի գործողությունների (օրինակ՝ ինքնասպանությունը, անզգուշությամբ գույքը ոչնչացնելը և այլն),

5) Եթե հնարավոր չէ ստույգ որոշել հանցագործության դեպքը տեղի է ունեցել թե ոչ (օրինակ՝ փորձագետը չի կարողանում միանշանակ պատասխան տալ այն հարցին՝ մահը բռնի է, թե ոչ):

Քրեական գործով վարույթի ընթացքում հանցագործության դեպքի ապացուցումից բացի, կարևոր նշանակություն ունի նաև անձի կատարած արարքում հանցակազմի առկայության պարզումը: Ըստ ՀՀ քրեական օրենսդրի 3-րդ հոդվածի՝ քրեական պատասխանատվության միակ հիմքը հանցանք, այսինքն՝ այնպիսի արարք կատարելն է, որն իր մեջ պարունակում է քրեական օրենքով նախատեսված հանցակազմի բոլոր հատկանիշները: Ելնելով քրեական պատասխանատվության միակ հիմքը հանցանք, այսինքն՝ այնպիսի արարք կատարելն է, որն իր մեջ պարունակում է քրեական օրենքով նախատեսված հանցակազմի բոլոր հատկանիշները: Ելնելով քրեական պատասխանատվության միակ հիմքը հանցակազմի բացակայությունը: Արարքի մեջ հանցակազմի բացակայությունը: Արարքի մեջ հանցակազմի բացակայության հիմքը քրեական վարույթը կարճվում է, եթե հանցագործության դեպքը հաստատվել է, սակայն միաժամանակ այն չի բովանդակում հանցակազմի բոլոր պարտադիր տարրերը¹⁷:

Հանցակազմի բացակայության հիմքով քրեական վարույթի կարճանա է կությունը պարզաբանելու համար անհրաժեշտ է ներկայացնել կոնկրետ այն իրավիճակները, եթե կիրառվում է այդ հիմքը:

Հանցագործության օբյեկտի բացակայությունը: Հանցագործության օբյեկտը քրեական օրենքով պաշտպանվող այն հասարակական հարաբերություններն են, որոնց դեմ ոտնձգում է հանցագործությունը: Հանցակազմի օբյեկտի բացակայության հիմքով քրեական գործով կարճվում է, եթե գործի քննության ընթացքում պարզվում է, որ գործողությունը կամ անգործությունը թեև

բացքում պարզվում է, որ կատարված արարքը ոչ թե հանցագործություն է, այլ քաղաքացիական խախտում, վարչական զանցանք, կարգապահական խախտում և այլն: Արարքում հանցակազմի բացակայություն կարող է դիտարկվել նաև այն դեպքը, եթե տվյալ արարքի հանցավորությունը կամ պատժելիությունը վերացվել է քրեական օրենքով, որն ուժի մեջ է մտել արարքը կատարելուց հետո¹⁸: Կարծում ենք, որ արարքի հանցավորությունը կամ պատժելիությունը վերացմելու դեպքում արարքում հանցակազմի բացակայության հիմքով քրեական գործով վարույթի կարծումը ճիշտ չէ, քանի որ այս հիմքով վարույթի կարծումը ենթադրում է անձի արդարացում՝ դրանից բխող բոլոր իրավական հետևանքներով: Այսինքն՝ այս հիմքով վարույթը կարծելիս անձը հնարավորություն է ստանում պահանջելու իրեն անօրինական ձերբակալման, կալանավորման, որպես մեղադրյալ ներգրավելու հետևանքով պատճառված գույքային հատուցում անբողջ ծավալով՝ հաշվի առնելով իրական հնարավոր բաց թողնված օգուտները, այն դեպքում, եթե քննության ընթացքում դրանց կիրառումը օրինաչափ է եղել: Ուստի գտնում ենք, որ անհրաժեշտ է լրացնել գործով վարույթի կարճանա հիմքը՝ դրանց շարուն նախատեսելով կատարված արարքի ապաքրեականացված լինելու հանգամանքը:

Հանցակազմի օբյեկտիվ կողմի բացակայությունը: Հանցակազմի օբյեկտիվ կողմը քրեական օրենքով սահմանված որոշակի հանցագործության այնպիսի հատկանիշների համակցությունն է, որոնք բնութագրում են կոնկրետ հանցավոր տունձգության կատարման արտաքին գործնթացը¹⁹: Հանցակազմի օբյեկտիվ կողմի մասին խոսելիս կարևոր է անդրադառնալ նաև այն հարցին, թե ինչ հիմքով քրեական վարույթը պետք է կարծվի, եթե գործի քննության ընթացքում պարզվում է, որ գործողությունը կամ անգործությունը թեև

¹⁷ Տե՛լ Բեզլեպկին Բ.Տ. Կոմментарий к Уголовно процессуальному кодексу Российской Федерации (постатейный). — 9-е изд., перераб. и доп.- М., 2010. էջ 39:

¹⁸ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն: Հատուկ մաս— Երևանի պետ. հանձնում. — Եր: ԵՊՀ հրատ., 2010, էջ 218:

¹⁹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Ընդհանուր մաս, Երևան, 2003, էջ 127:

ձևականորեն պարունակում է քրեական օրենսգրքով նախատեսված որևէ արարքի հատկանիշներ, սակայն իր նվազ կարևորության պատճառով հասարակական վտանգավորություն չի ներկայացնում, այսինքն՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը կամ պետությանը եական

վնաս չի պատճառել և չէր կարող պատճառել (ՀՀ քր. օր., հոդված 18, մաս 2): ՀՀ գործող քր. դատ. օր.-ը արարքի նվազ կարևորության փաստը չի նախատեսել որպես քրեական վարույթի կարծնան ինքնուրույն հիմք: Այս կապակցությամբ դատավարագետների մեծ մասը գտնում է,

որ նշանակած դեպքում քրեական գործով վարույթը պետք է կարծել հանցակազմի բացակայության հիմքով²⁰:

Կարծում ենք, որ արարքի նվազ կարևորության փաստը չի նշանակում, որ դրանում բացակայում են հանցակազմի տարրը կամ տարրերը: Ընդհակառակը, արարքը պետք է բովանդակի հանցակազմի բոլոր տարրերը, հակառակ դեպքում քրեական վարույթը պետք է կարճվի այլ հիմքով: Դրա մասին է վկայում օրենսդրի այն ձևակերպումը, որ «արարքը պետք է ձևականորեն պարունակի որևէ հանցագործության հատկանիշներ»: Ուստի գրտնում ենք, որ արարքի նվազ կարևորության դեպքում քրեական գործով վարույթը պետք է կարճվի ոչ թե հանցակազմի բացակայության, այլ ՀՀ քր. դատ. օր.-ի 35 հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով, այն է՝

անձը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի ընդհանուր մասի դրույթների ուժով ենթակա է ազատնա քրեական պատասխանատվությունից:

Հանցագործության սուբյեկտի բացակայությունը: Հանցակազմի տարրերից մեկն էլ հանցագործության սուբյեկտն

«...Արարքի մեջ հանցակազմի բացակայության հիմքով քրեական վարույթը կարձվում է, եթե հանցագործության դեպքը հաստատվել է, սակայն միաժամանակ այն չի բովանդակում հանցակազմի բոլոր պարտադիր տարրերը...»

է, որն ըստ ՀՀ քր. օր.-ի՝ քրեական օրենքով չթույլատրված արարք կատարած և օրենքով սահմանված տարիքի հասած ֆիզիկական, մեղսունակ անձն է:

ճիշտ է, հանցագործության սուբյեկտը հանցակազմի պարտադիր տարրերից է, սակայն ՀՀ քր. դատ. օր.-ը որպես քրեական վարույթի կարծնան ինքնուրույն հիմք նախատեսել է անձի՝ քրեական պատասխանատվության տարիքի հասած չլինելը²¹ (ՀՀ քր. դատ. օր. հոդված 35, մաս 1, կետ 9): Սրանով պայմանավորված՝ քննչական պրակտիկայում հաճախ վիճահարույց է այն հարցը, թե որ հիմքով քրեական վարույթը պետք է կարծվի, եթե անձը արարքը կարարելու պահին չի հասել քրեական պատասխանատվության տարիքի: Որոշ իրավաբաններ գտնում են, որ քրեական վարույթի կարծնան մի քանի հիմքերի միջև

²⁰ Տե՛ս Սմիրնով Ա.Վ., Կալինովսկի Կ.Բ. Комментарий к Уголовно-процессуальному кодексу Российской Федерации (постатейный). под. общ. ред. А.В. Смирнова, Проспект. - М., 2009. ёз 46, Комментарий к Уголовно-процессуальному кодексу Российской Федерации (постатейный) / Л.Н. Башкатов, М.В. Боровский, Г.Н. Ветрова и др., отв. ред. И.Л. Петрухин, И.Б. Михайловская. – 7-е изд., перераб. и доп. – М.: Проспект, 2010. ёз 55, Խիմիչևա Գ.Պ. Досудебное производство по уголовным делам: концепция совершенствования уголовно-процессуальной деятельности. М., 2003. ёз 284, Ենդոլյչեվա Ա.Վ. Институт освобождения от уголовной ответственности. М., 2004, ёз 36 և ուղիղներ:

²¹ Որոշ դատավարագետներ գտնում են, որ ՀՀ քր. օր.-ի 35-րդ հոդվածի առաջին մասի 9-րդ կետը նույն մասի 2-րդ կետի մասնավոր դրսենորումն է, նրա տարատեսակը, ամբողջի մասը: Ըստ այդմ՝ առաջարկում են քր. դատ. օր.-ի 35-րդ հոդվածի առաջին մասի 9-րդ կետը ուժը կրոցրած ճանաչել: Տե՛ս Ավագյան Վ. Քրեական վարույթի կարծնան առանձնահատկությունները //Օրինականություն, 2010, N 64, ёз 25:

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

մրցաւացության դեպքում պետք է կիրառվի այն հիմքը, որն առավել բարենպաստ իրավական հետևանքներ է առաջացնում տվյալ անձի համար: Այսինքն՝ տվյալ դեպքում գործով վարույթը պետք է կարծվի արարքի մեջ հանցակազմի բացակայության հիմքով, քանի որ այս դեպքում անձը

մասի 9-րդ կետի հիմքով՝ առանց վկայակոչելու 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը: Այլ կերպ՝ եթե հանցագործության կատարման պահին անձը չի հասել ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված՝ քրեական պատասխանատվության տարիքին, իսկ հանցակազմի

մյուս բոլոր տարրերը և հատկանիշները առկա են, ապա նրա նկատմամբ քրեական հետապնդումը պետք է դադարեցվի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ և ոչ թե նույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով»²²:

Քննարկվող հիմնախնդրին անդրադարձել է նաև ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը Հ. Աթոյանի վերաբերյալ գործով (2010 թ. հուլիսի 23): Այդ գործով ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը նշել է. «Օրենսդրի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով նախատեսված հիմքից առանձնացնելը ենթադրում է, որ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ) քրեական գործով վարույթը պետք է կարծվի և անձի նկատմամբ քրեական հետապնդումը պետք է դադարեցվի, եթե նրա արարքում բացակայում են հանցակազմի տարրը կամ տարրերը: Նշված կանոնից բացառություն է այն դեպքը, երբ հանցակազմի բացակայությունը պայմանավորված է բացառապես հանցանը կատարած անձի՝ քրեական պատասխանատվության տարիքի հասած չլինելով: Վերջին դեպքում քրեական գործով վարույթը պետք է կարծվի և անձի նկատմամբ քրեական հետապնդումը պետք է դադարեցվի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին

դադարեցվի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ և ոչ թե նույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով»²²:

Հանցագործության սուբյեկտիվ կողմի բացակայությունը: Հանցագործության սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է նեղը: Սեղը անձի հոգեկան վերաբերմունքն է իր կողմից կատարված արարքին և դրան հաջորդած հետևանքներին: Առանց մեղքի չկա ոչ հանցագործություն, ոչ էլ քրեական պատասխանատվություն: ՀՀ քր. օր.-ի 31 հոդվածով սահմանված են առանց մեղքի արարքի կատարման պայմանները: ՀՀ քր. օր.-ի 31 հոդվածով նախատեսված պայմանների առկայության դեպքում քրեական գործով վարույթը կարծվում է հանցակազմի բացակայության հիմքով՝ կապված հանցագործության սուբյեկտիվ կողմի բացակայության հետ:

Այսպիսով՝ ընդհանրացնելով վերոգրյալը, պետք է նշել, որ քննարկվող հիմքերի հստակ տարանջատման և դրանց կիրառման կապակցությամբ ներկայացվող առաջարկները միտված են քրեադատավարական օրենսգրքի կատարելագործմանը, քննչական պրակտիկայի միասնականության ապահովմանը, ինչպես նաև անձի իրավունքների պատշաճ երաշխավորմանը:

²² Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումը, քրեական գործի թիվ ԵԱԴԴ/0014/11/09 մասին. www.arlis.am.

Ինքնիշխանության հասկացությունը և եռթյունը

Արքուր ԻԿԻԼԻԿՅԱՆ

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության,
սոցիոլոգիայի և իրավունքի իմաստիուտի հայցորդ

Ինքնիշխանությունը որպես պետականական և միջազգային իրավական կատեգորիա, իրավագիտության առավել բարդ ու վիճարկելի և, միևնույն ժամանակ, արդիական հիմնահարցերից է:

Պետական և միջազգային իրավունքի առավել արդիական հիմնահարցերն են իրավունքի այդ ձյուղերի բուն Էռթյան, միջազգային և ազգային իրավունքների հարաբերության, միջազգային կազմակերպության իրավաբանական բնույթի, պետության մեջ բարձրագույն իշխանության կրողի, իշխանությունների բաժանման, պետության իշխանության սահմանների վերաբերյալ հարցերը¹: Դրանք անմիջականորեն և օրգանապես կապված են ինքնիշխանության հիմնահարցի հետ, իսկ դրանց լրացումը՝ ինքնիշխանության հիմնահարցի բացահայտման հետ:

Սակայն ինքնիշխանության կատեգորիայի դերն ամեններն է չի սահմանափակվում լրկ իրավունքի տեսության համար նրա ունեցած նշանակությամբ:

Ինքնիշխանությունը բոլոր իրավաբանական սկզբունքներից ամենաքաղաքականն է: Եվ դրա պատճառը միայն այն չէ, որ ինքնիշխանության հիմնահարցն ուղղակիորեն կապված է քաղաքական իշխանության էռթյան, կրողի և սահմանների հիմնահարցի հետ, այլև ինքնիշխանության կատեգորիայի այն նշանակությունը, որ նա ունի պետության ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքականության մեջ: Ինքնիշխանության հիմնահարցի շուրջ ընթացող տեսական բանավեճերն ու քննարկումներն ստանում են ոչ միայն իրավաբանական, այլև քաղաքական երանգավորում: Ինքնիշխանության վերացարկված-ծևական, արտաքնապես «մաքուր» տեսությունները, որոնք դեռ մինչ երկրորդ համաշխարհային պատերազմը մշակվում էին գիտնականների աշխատասեմյակներում (օրինակ՝ ինքնիշխանության ժխտումը «իրավունքի գուտ տեսության» կողմից), ստանում են միանգամայն կոնկրետ քաղաքական կիրառություն՝ ժառանգելով որոշակի քաղաքական

շահերի, մի կողմից հետադիմության ուժերի, և մյուս կողմից՝ ժողովրդավարության ուժերի պայքարում, որով բնորոշվում է միջազգային հարաբերությունների զարգացման հետպատերազմյան փուլը միմյանց են բախվում ինքնիշխանության տրամադրության հակառակ քաղաքական ու իրավաբանական հայեցակարգերը:

Ներկայումս ինքնիշխանության մասին խոսում են խորհրդարանական ամբիոններից, բանավիճում են միջազգային խորհրդաժողովներում, գրում են միլիոնավոր տպաքանակներով լույս տեսնող թերթերում և ընդհանուր տարածում գտած հանդեսներում, ելույթներ ունենում հեռուստատեսությամբ ու ռադիոյով: Այս ամենը ծանրակշիռ վկայություն է այն քանի, որ ինքնիշխանության թեման շատ կենսահույզ է: Այս ելույթների մի գգալի մասի լեյտոնուրի կարելի է համարել այն թեզը, թե ինքնիշխանությունը մի «հնացած» կատեգորիա է և պետք է հանձնվի արխիվ կամ հիմնովին վերանայված լինի, թե անհրաժեշտ է լիովին կամ

¹ Ст. Государственный суверенитет. Сборник научных статей. Отв. ред. А.А. Рябинин. М., 2011.

մասնակիորեն հրաժարվել ինքնիշխանությունից՝ որպես տնտեսական ու քաղաքական իհմնահարցերի լուծմանը «խանգարող» հանգամանքի, թե անհրաժեշտ է բռափել ինքնիշխանության «խելահեղությունը»: Իբր ինքնիշխանությունը խանգարում է խաղաղության պահպանմանը, ատոմային զենքի արտադրության նկատմամբ վերահսկողության հաստատմանը, մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանությանը և այլն:

Ինքնիշխանության «մահացման» վերա-

խաղա և իսկապես դրական դեր է խաղուն առաջադիմության ու ժողովրդավարության հաստատման գործում:

Ինքնիշխանության հակառակորդները նշում են, որ ինքնիշխանության (կամ ինչպես պնդում են՝ բացարձակ ինքնիշխանության) և 17-18-րդ դարերի բացարձակ միապետության միջև կա պատճական կապ, և այստեղից հանգում են այն եղակացության, թե ինքնիշխանությունը կիրառելի չէ 20 և 21-րդ դարերի միանգամայն այլ պայմաններում: Իրականում ինքնիշխանության կատեգորիայի բովանդակությունը զարգացել և հարմարվել է պատճականորեն փոփոխվող սոցիալ-քաղաքական պայմաններին: Պատճականորեն ինքնիշխանության կատեգորիան առաջացել է բացարձակ միապետության զարգացման հետևանքով (ի դեպ, վերջինս որոշակի փուլում եղել է ավելի առաջադիմական, քան իրեն նախորդած պատճական մասնատվածությունը): Սակայն շուտով այն հանդես գալով ժողովրդական ինքնիշխանության ձևով, արդեն ուղղված էր բացարձակ միապետության դեմ: Բուրժուազիան, ծգտելով իշխանության, ընդունեց ինքնիշխանության սկզբունքը անտեսելով նրա միապետական ծագումը և նրան տալով նոր բովանդակություն և նոր ձևեր:

Ինքնիշխանության հակառակորդները ինքնիշխանությունը վերացնելու իրենց ծգտումը հաճախ քողարկում են բացարձակ ինքնիշխանության դեմ ուղղված իհմնավորությունը: Սակայն բացարձակ ինքնիշխանությունը երբեք չի եղել և չեր է կարող լինել: Դա մետաֆիզիկական կարգի կատեգորիա է կամ երևակայության պտույտ: Միշտ էլ գոյություն են ունեցել ինքնիշխանության սահմաններ, որոնք պայմանավորված են եղել տնտեսական պայմաններով, պետությունների միջազգային հաղորդակցման զարգացությամբ և պատճական դարաշրջանի քաղաքական պահանջներով: Այդ սահմանները փոփոխվել են այդ բոլոր գործնների փոփոխման համեմատ:

Ինքնիշխանության կատեգորիան երեկոց չի մերժել կամ մերժում այնպիսի սկզբունքներ, ինչպիսիք են՝ մեծամասնության սկզբունքը, որի կիրառումը միջազգային հաղորդակցման զարգացությամբ:

Եթերյալ այս խոսակցությունների իրական իմաստը բացահայտվում է շնորհիվ պետությունների այն պարակտիկայի, որի համար դրանք պետք է ծառայեն որպես «արդարացում» և «տեսական իհմնավորում»:

Տարբեր երկրների էկոնոմիկայի վերահսկում՝ ատոմային զենքի արտադրության վերահսկման քողի տակ, «բաց դրմերի» և «հավասար հնարավորությունների» պահանջներ, որոնք տնտեսապես թույլ զարգացած երկրները ուղարձնում են անպաշտպան տնտեսական ենթափանցման առօքե, միջազգային հարցերի լուծման ժամանակ քվեարկության մերենայի չափից դրւու կիրառում, ծգտում անհիմն կերպով ընդլայնելու միջազգային կազմակերպությունների իրավասությունները, հատկապես՝ միջազգային դատարանի, որը ցանկանում են վերածել մի մարմնի, որ կանգնած լինի ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայից բարձր, այս ցանկում ներառված է ինքնիշխանության «մահացման» վերաբերյալ տեսության կենսագործման փորձերի միայն մի անշանմասը:

Ինքնիշխանության հակառակորդները վկայակոչում են այն հանգամանքը, որ ինքնիշխանությունը պատճական կատեգորիա է, որն առաջացել է որոշակի պայմաններում, ուստի և չի կարող հավակնել բացարձակ իրավահասկացողության²: Հակառակը, ինքնիշխանությունը կարող է, պետք

² Ինքնիշխանության պատճական զարգացման մասին՝ մանրամասն տես՝ Գրաբել Հ.Ի. Происхождение суверенитета. М., 2009.

կազմակերպությունում անխուսակելի է, չի ժխտում միջազգային արդարադատության և պետությունների միջև տնտեսական համագործակցության զարգացումները, միջուկային գենքի արտադրության նկատմամբ միջազգային վերահսկողության անհրաժեշտությունը, մարդու իրավունքների պաշտպանությունը և այլն:

Ազգային ինքնիշխանության համար մղվող պայքարը հանուն ժողովրդավարության ու միջազգային խաղաղության մղվող պայքարի բաղադրամասն է:

Դանուն ազգային անկախության, պետական ինքնիշխանության համար մղվող պայքարը արդի պայմաններում անքակտելիորեն կապված է ժողովրդավարական պետական իշխանության համար մղվող պայքարի հետ³: Ժողովուրդների հենց այդ պայքարում են դրսևորվում արդի պատճական ժամանակաշրջանում ինքնիշխանության ունեցած դրական իմաստն ու առաջադիմական նշանակությունը:

Ինքնիշխանությունը սոցիալական որևէ երևույթի /գոյի/ ինքնությունը, անկախությունը և գերակայությունն է: Սոցիալական իրականության մեջ, որպես կանոն, ինքնիշխանության հիմնական սուբյեկտներն են՝ անձը, ժողովուրդը /ազգը/ և պետությունը, որոնցից յուրաքանչյուրն ունի իր բնորոշ առանձնահատկությունները:

Անձի ինքնիշխանությունը նրա կամքի ազատության և սոցիալական նորմերի սահմաններում ինքնուրույն ու անկախ վարդագիր դրսևորվում է: Անձի ինքնիշխանությունն անսահման ու բացարձակ չել կարող լինել, որովհետև որպես սոցիալական ու բանական էակ՝ անձն ապրում է որոշակիորեն կանոնակարգված հասարակության մեջ, որտեղ պարտավոր է պահպանել ինչպես գրված, այնպես էլ չգրված սոցիալական նորմերը: Այսինքն՝ անձն այնքանով է ինքնիշխան, որքանով չի խախտում, ուրիշների ինքնիշխանությունը և հասարակությունում գործող նորմերը:

Ժողովրդի /ազգի/ ինքնիշխանությունն ազգի օրգանական բաղադրական հատկու-

թյունն է, նրա անբաժան, անօտարելի և բնական հատկանիշը: Ժողովրդի ինքնիշխանությունը պայմանավորված է իր գոյության փաստով: Ժողովրդի ինքնիշխանության դրսևորման քաղաքական-իրավական ձևերը կարող են տարբեր լինել անկախ պետականություն, ինքնավարության տարբեր աստիճաններ և այլն: Ժողովրդի ինքնիշխանության իրացման դասական եղանակը ինքնորոշման իրավունքն է, որը յուրաքանչյուր ազգի անօտարելի և բնական իրավունքն է: Ազգերի ինքնորոշման իրավունքը մարդու կոլեկտիվ իմնարար իրավունքն ունի է, որի շնորհիվ ինքնորոշ ազգը որոշում է իր ճակատագիրը: Ըստ այդ իրավունքի՝ յուրաքանչյուր ժողովուրդ /ազգ/ իրավունքը ունի ազատորեն տարիքնել իր ճակատագիրը ինքնուրույնաբար, առանց արտաքին միջամտության լուծել իր ներքին զարգացման և կառուցվածքի բոլոր հարցերը, իր հայեցողությանը ընտրել այլ ժողովուրդների և պետությունների հետ հարաբերվելու ցանկացած ձևը: Ժամանակակից սահմանադրականությունը և միջազգային իրավունքը երաշխավորում են ժողովուրդների

**«...Ազգային
ինքնիշխանության համար
մղվող պայքարը հանուն
ժողովրդավարության ու
միջազգային խաղաղության
մղվող պայքարի
բաղադրամասն է...»**

և ազգությունների իրավահավասարությունն ու ինքնորոշումը, տնտեսական ու սոցիալական ազատ զարգացումը առանց որևէ միջամտության:

Ազգերի ինքնորոշման դասական և արդյունավետ տարբերակը՝ անկախ, ինքնիշխան պետականության հիմնադրումն է, քանի պետականությունը յուրաքանչյուր ազգի հասարակական կյանքի կազմակերպման, կանոնակարգման, բնականության զարգացման և անվտանգության պահպանման իրավաքաղաքական հենայունն է:

³ Տե՛ս Սոբոլեվա Ի.Վ. Բудущее мировой политики: через разрешение противоречия между принципом суверенитета и правом наций на самоопределение // Государственный суверенитет и право наций на самоопределение. М., 2011, с. 9-10.

Պետական իշխանությունն իրականացնող երեք հիմնական ճյուղերը՝ օրենսդիրը, գործադիրը և դատականը, ինքնին երթիցե օժտված չեն պետական ինքնիշխանությամբ: Յետևաբար, պետական ինքնիշխանությունը բացառապես ամբողջ պետության անբաժան հատկանիշն է, այլ ոչ թե՝ նրա առանձին մասերի, ներառյալ նաև պետական իշխանությունը:

Ժամանակակից սահմանադրական դոկտրինայում և պրակտիկայում, ինքնիշխանությունը՝ որպես ամբողջ պետության

թյան գոյությամբ, որի անդամ- պետությունները, անվերապահորեն ընդունելով միջազգային իրավունքի սկզբունքների ու նորմերի գերակայությունն իրենց ազգային օրենսդրության նկատմամբ, դրանով իսկ կամովին սահմանափակում են իրենց ինքնիշխանությունը որոշակի ոլորտներում:

Դայ իրականության մեջ պետական ինքնիշխանության հիմնահարցը բացահայտել է XII դարի խոշորագույն օրենսգետ և օրենսդիր Մխիթար Գոշը՝ իր «Դատաստանագիր Հայոց»-ում⁴:

«...Անձն այնքանով է ինքնիշխան, որքանով չի խախտում, ուրիշների ինքնիշխանությունը և հասարակությունում գործող նորմերը...»

Անբաժան և եական հատկանիշ, շատ հաճախ նշվում է երկրի հիմնական օրենքում: Օրինակ՝ Իռլանդիայի Սահմանադրությունում ամրագրված է: «Իռլանդիան ինքնիշխան, անկախ և ժողովրդավարական պետություն է»: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-ին հոդվածի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է», այսինքն՝ պետական ինքնիշխանության միակ կրողը Հայաստանի Հանրապետությունն է, այլ ոչ թե նրա առանձին մարմինները կամ պաշտոնատար անձինք, որոնք օժտված են միայն իշխանական լիազորություններով:

Պետությունն իր ինքնիշխանությամբ կոչված է առավել բարենապատ պայմաններ ապահովել ժողովրդի /ազգի/ տնտեսական, քաղաքական և սոցիալ- նշակության արժանապատիվ կյանքի համար, այսինքն ժողովրդի ինքնիշխանության իրականացման համար:

Կյապիսով, պետական ինքնիշխանությունը բացարձակ և անսահման չէ. նրա սահմանափակ բնույթը պայմանավորված է ոչ միայն ժողովրդի ինքնիշխանությամբ, այլև պետությունների միջազգային համրու-

թյան գոյությամբ, որի անդամ- պետությունը և անկախությունը տեսնում էր ուժեղ, ինքնիշխան մեջ և վերջինս կապում է թագավորի անձի հետ, «Թագավորը այնոքի անուանին, որք ազգաց ըիրենց ըիրեն միանգա-

մայն եւ յայլոց հարկ առնում, յազգաց, եւ եթէ ոչ ոչ հակիցին» (Ղատ., 299-300):

Ինչ խոսք, Գոշի՝ պետական ինքնիշխանության սահմանան, ինչպես նաև նրա ողջ աշխարհայցողության վրա իր կնիքն է դրեւ ավատատիրական ժամանակաշրջանի մտածելակերպը, որմ արտահայտվում է հետևյալում, առաջին, Գոշը պետական ինքնիշխանության կրողն է համարում թագավորին, քանզի թագավորն է պետության գլուխը, երկրորդ, ուրիշ ժողովրդությունը (պետություններից) հարկ վերցնելը նույնպես միջնադարյան միջավետական հարաբերությունների չափանիշներով դիտվում էր որպես բնականոն երևույթ: Չնայած այս միջնադարյան քողին, այնուանենայնիվ, պետական ինքնիշխանության մասին Գոշի հասկացողությունը հեռու չէ պետական ինքնիշխանության ժամանակակից գիտական սահմանումից: Սակայն պետական ինքնիշխանությունը անսահմանափակ չէ ինչպես երկրի ներսում, այնպես էլ արտաքին հարաբերություններում: Թագավորին օժտելով պետական ինքնիշխանությամբ, այսուհետերձ Գոշը որոշակի իրավանորմերով սահմանափակում է նրա իշխանությունը. «Դատաստան վարսեցի յամենայն իրս եւ ի գործս հաւատացեալ թագաւոր»

⁴ Տե՛ս Մխիթար Գոշի Դատաստանագիրը Հայոց իրավաբանական հետազոտությամբ հանդերձ ծանօթութեամբ Կահան Ժ Վարդապետի Բաստամեանց, ի Վաղարշապատ, 1880 (այսուհետ՝ տեքստում նշելով էջերը):

(Դատ., 306): Օրենքին ենթարկվելը պարտադիր է բոլորի, այդ թվում և թագավորի համար, որովհետև քանի դեռ գործում է օրենքը, ապա այն պետք է պահպանվի. «զի օրենք է և պահելի» (Դատ., 228):

Պետական ինքնիշխանության գիտատեսական հայեցակարգը նշակել է ֆրանսիացի նշանավոր իրավաբան **Ժան Բողենը** (1530-1596)⁵՝ «Վեց գիրք հանրապետության մասին» (lex Six livres de la République) աշխատության մեջ:

Ըստ Բողենի պետությունը «բազմաթիվ ընտանիքների, ինչպես նաև նրանց համար ընդհանուր հանդիսացող (սեփականության) կառավարումն է»: Ընտանիքը պետության քիչըն է, իսկ պետությունը, իրու կազմակերպություն, ստեղծվում է պայմանագրի միջոցով: Պետության բարձրագույն նպատակը հասարակության ներսում խաղաղության ապահովումը և նոյն հասարակությունն արտաքին ոտնագործություններից ու սպառնալիքներից ու սպառնալիքներից ու այս բոլորն, ի վերջո, հանգեցնում են հասարակության անդամների՝ անհատների անձնական երջանկության համար անհրաժեշտ երաշխիքների ու նախապայմանների ստեղծման: Ընտանիքը, Բողենի մեկնաբանությամբ, պետության նախատիպն է ու մանրակերտը: Ընտանիքի գլուխը (ավագը, նահապետը) պետական իշխանությունն է միահանդիպ: Ինչպես ընտանիքի գլուխն է կարգավորում ներընտանեկան բոլոր հարաբերությունները, լուծում ծագող խնդիրները, նոյն կերպ միապետն է դեկապարում պետությունը:

Համաշխարհային քաղաքագիտական մտքի ընդհանուր գանձարանում Բողենի խոշորագույն ավանդը նրա ուսմունքն է պետության ինքնիշխանության մասին: Այս հիմնախնդիրին Բողենը անդրադարձել է մանրամասնորեն, տվել ինքնատիպ ու խիստ արժեքավոր մեկնաբանություններ և հիմնավորումներ:

Ինքնիշխանություն ասելով Բողենը հասկանում էր պետական իշխանության որոշակի յուրացում, դա պետական իշխա-

նության գլխավոր բնութագիրն է: «Ինքնիշխանությունը Հանրապետության բացարձակ ու հավերժական իշխանությունն է», գրում է Բողենը նշված «Վեց գիրք Հանրապետության մասին» աշխատության մեջ: Ըստ ֆրանսիացի մտածողի՝ ինքնիշխանությունը ենթադրում է միասնական՝ անտրոհելի իշխանություն, վերջինս չի կարող իր արտոնություններից որևէ մեկը վերաբաշխել կամ վերափխանցել ինչ-որ այլ մարմինների, որոնք իր ենթակայության տակ են: Բողենն իշխանությունը բնութագրելիս առանձնացնում է նրան առանձնահատուկ հիմք կողմեր. օրենքների իրատարակում, որոնք հասցեագրում են բոլոր հպատակներին ու պետական հաստատություններին, պատերազմի ու խաղաղության խնդիրի լուծում, պաշտոնատար անձանց նշանակում, բարձրագույն ինստանցիաների դա-

«...Ժողովրդի ինքնիշխանության իրացման դասական եղանակը ինքնորոշման իրավունքն է, որը յուրաքանչյուր ազգի անօտարելի և բնական իրավունքն է....»

տական գործումներություն, ներման շնորհում: Ակներև է, որ պետական ինքնիշխանությունը Բողենը բնութագրում է այնպիսի հատկանիշներով, որոնցից գրեթե բոլորն ընդունում է նաև ժամանակակից իրավագիտությունը: Մասնավորապես, ժամանակակից իրավաբանական գրականության մեջ ինքնիշխանությունը հատկորոշվում է պետության տարածքում պետական իշխանության գերակայությամբ ու անկախությամբ: Օրենքների իրատարակումը, պաշտոնատար անձանց նշանակումը, որոշ պետական մարմինների դատական գործառությունը, ներման շնորհումը հենց պետության ներսում պետական իշխանության գերակայության արտահայտություններ են: Ժամանակակից իրավաբանական գրականության մեջ պետական ինքնիշխանության բաղկացուցիչ է դիտարկվում նաև անկախությունն այլ պետությունների հետ ունեցած հարաբերություններում: Նոյնին է ասում նաև Բողենը՝ ընդգծելով, որ պետության ինքնիշ-

⁵ Տե՛ս Գրաչև Հ.Ի. Происхождение суверенитета, с. 278-279.

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ

խանական կամարտահայտումներից է նաև պատերազմի և խաղաղության խնդիրների լուծումը: Պետական իշխանության բողենյան ըմբռնումն արդարք չատ մոտ է այն ըմբռնում-սահմանմանը, որին հասել է ժամանակակից քաղաքագիտական միտքը՝ պետական ինքնիշխանությունը տվյալ երկրի ներսում պետական իշխանության գերակայությունն է, իսկ արտաքին հարաբերություններում անկախությունն ու ազատակամությունը: Բողենն իր ժամանակին միանգամայն հստակորեն լուծել էր ինքնիշխանության երկու՝ ներքին և արտաքին կողմերի իհմնախնդիրը առաջինը գերակայությունն է, երկրորդը՝ անկախությունը:

Ինքնիշխանության իհմնախնդիրի վերաբերյալ Բողենի մոտեցումներին և ժամանակակից ըմբռնումներին անդրադառնալիս հարկ է նշել, մեր կարծիքով, մի եւական համընկնում: Արդի իրավագիտության մեջ գոյություն ունի տեսակետ, թե ինքնիշխանությունը պետական իշխանության, ոչ թե պետության հատկություն է: Այլ կերպ ասած՝ իրավագիտության մեջ որոշակի վերապահությամբ է ընդունվում ինքնիշխանության՝ պետության հատկանիշ լինելու կարծիքը: Ըստ Բողենի՝ քանի որ պետական իշխանությունը ենթադրում է միապետի իշխանություն, ուստի ինքնիշխանությունը նիստական, այն է՝ պետական կամ պետության հատկանիշ է: Այսպիսով՝ Բողենը լուծում է նաև այն իհմնահարցը, որ ինքնիշխանությունն անթույլատրելի է շփոթել իշխանության հետ:

Արդի դարաշրջանում ինքնիշխանության կատեգորիան նարմնավորում է արդի ժողովրդավարության բարոյաքաղաքական պահանջները:

Դրանցում շեշտվում են.

ա) պետական ինքնիշխանության սկզբունքը, որը նշանակում է պետության լիիշխանություն և անկախություն,

բ) ժողովրդական ինքնիշխանության սկզբունքը, որը նշանակում է պետության մեջ ժողովրդի՝ որպես գերազույն իշխանության նիստ օրինական ու իրավագոր կրողի իրավազորությունը,

գ) ազգային ինքնիշխանության սկզբունքը, որը ներառում է ազգերի ինքնորոշման իրավունքը,

դ) պետությունների ինքնիշխանության և

կոլեկտիվ անվտանգության միջազգային կազմակերպության ու ազրեսիայի համար պետության պատասխանատվության համատեղելիությունը՝ որպես մեծ և փոքր ինքնիշխան պետությունների իրավունքների ու շահերի փոխադարձ հարգման և հավասարության իհմունքով նրանց խաղաղ գոյակցության երաշխիք:

Անհրաժեշտ է ընդգծել, որ «անսահմանափակ և բացարձակ պետական ինքնիշխանության» տեսական հայեցակարգը երրեկց իրականություն չդարձավ և չեղ էլ կարող դառնալ, քանի որ պետությունների «անսահմանափակ և բացարձակ» ինքնիշխանության պայմաններում անհնար է ապահովել ինչպես ներպետական կայուն ժողովրդավարական հաստատությունների և ինստիտուտների բնականոն գործառնությունները, այնպես էլ անհնար է ապահովել միջազգային անվտանգության համակարգը, միջազգային իրավակարգը և միջազգային օրինականությունը, առանց որոնց հնարավոր չէ քաղաքակիրք աշխարհի գոյությունն ու զարգացումը:

Պետությունների ինքնիշխանությունը սահմանափակված է ոչ միայն միջազգային իրավական ակտերի գերապատվությամբ և ստանդած պարտավորություններով, այլև տարածաշրջանային կազմակերպություններին անդամակցելով / Եվրոպական Միության/, համադաշնային կամ դաշնային պետական միություններում ընդգրկվելով:

Այսպիսով, պետական ինքնիշխանությունը ձևական-իրավաբանական առումով ամբողջ պետության անբաժան և եւական հատկանիշն է, որի տարածքային գերակայությունը ներպետական հարաբերություններում սահմանափակվում է Սահմանադրությամբ, օրենքներով և միջազգային պայմանագրերով, իսկ արտաքին հարաբերություններում միջազգային իրավական նորմերով ու սկզբունքներով:

Պետական ինքնիշխանությունը փաստացի առումով ենթադրում է պետական ինքնիշխանության նյութական-առարկայական բովանդակությունն ու ծավալը, որը պայմանավորված է տվյալ պետության քաղաքական-իրավական կարգավիճակով ինչպես նաև տնտեսական, սոցիալական և օրեկտիվորեն գոյություն ունեցող այլ գործոններով:

Հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու հասկացությունն ու իրավաբանական բնույթը

Անդրանիկ ՄԱՆՈՒԿՅԱՆ
Ասպիրանտ

«Հ գործող քրեական օրենսգիրը նախատեսում է հանցանք կատարած անձին բռնելիս վնասի պատճառման հիմքերն ու պայմանները սահմանող, ինչպես նաև հանցանք կատարած անձին բռնելու համար անհրաժեշտ միջոցների սահմանազանցման համար պատասխանատվություն սահմանող համապատասխան նորմեր:

Հանցանք կատարած անձին բռնելիս վնասի պատճառման ինստիտուտն կարգավորվում է «Հ ՔՕ 43-րդ հոդվածում, որի 1-ին մասի համաձայն՝ «Հանցագործություն չի համարվում այն գործողությունը, որը հանցանք կատարած անձին վնաս է պատճառել նրան՝ իրավասու մարմիններին հանձնելու կամ նրա կողմից հանրության համար նոր վտանգավոր արարք կատարելու հնարավորությունը խափանելու նպատակով բռնելիս, եթե դրա համար անհրաժեշտ միջոցների սահմանազանցում թույլ չի տրվել»:

Եույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Հանցանք կատարած անձին բռնելու համար անհրաժեշտ միջոցների սահմանազանցում է համարվում բռնելու միջոցների ակնհայտ անհամապատասխանությունն արարքի և դա կատարող անձի վտանգավորությանը, ինչպես նաև բռնելու հանգամանքներին, որոնց հետևանքով անձին դիտավորությամբ պատճառվել է այնպիսի վնաս, որը պայմանավորված չի եղել բռնելու անհրաժեշտությամբ»:

Սիամանանակ ՀՀ քրեական օրենսգրքի 3 հատուկ մասում ներառված են հատուկ, արտոնյալ նորմեր, որոնք քրեական պատասխանատվություն են սահմանում մարդու կյանքի և առողջության դեմ ուղղված հանցագործությունների համար, որոնք կատարվել են հանցանք կատարած անձին բռնելու համար անհրաժեշտ միջոցների սահմանազանցմանք: Բացի այդ՝ հանցանք կատարած անձին բռնելու համար անհրաժեշտ միջոցների սահմանազանցումը, ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն, անձի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանք է:

Բացի ՀՀ քրեական օրենսգրքից՝ հանցագործին բռնելիս նրան վնաս պատճա-

ռելու հետ կապված առանձին հարցեր կարգավորվում են ՀՀ օրենսդրության այլ ճյուղերով:

Առաջին հերթին անհրաժեշտ է նշել, որ հանցագործություն կատարման մեջ կասկածվող անձի ձերբակալման կարգն ամրագրված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 128-րդ հոդվածում: Քրեական հետապնդում իրականացնող հատուկ լիազորված անձանց համար նախատեսված տվյալ նորմը սահմանում է հանցագործություն կատարելու մեջ կասկածվող անձի կարծաժամկետ ձեռբակալման հիմքերը, կարգը, ժամկետներն ու այլ պայմանները:

Հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու հետ կապված հար-

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ցերն իրենց կարգավորումն են ստացել նաև այնպիսի իրավական ակտերում, որոնք սահմանում են այն պետական մարմինների իրավունքներն ու պարտականությունները, որոնց գործառույթներն անմիջականորեն կապված են, հասարակական անվտանգության պաշտպանության ապահովման, հանցագործությունների կանխարգելման, և բացահայտման հետ:

Օրինակ՝ 2001թ. ապրիլի 16-ին ընդունված «Ուստիկանության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի համաձայն՝ ոստիկանության աշխատակիցներին իրավունք է տրված կիրառել ոստիկանության սպառազինությունում առկա հատուկ միջոցները հետևյալ դեպքերում.

1) քաղաքացիների և ոստիկանության ծառայողի վրա կատարվող հարձակումը խափանելիս.

2) ոստիկանության ծառայողին կամ հասարակական կարգի պահպանության և հանցագործությունների դեմ տարվող պայքարին աջակցող, իրենց հասարակական կամ ծառայողական պարտականությունները կատարող անձանց նկատմամբ ցուցաբերվող դիմադրությունը խափանելիս կամ նրանց օրինական պահանջներին չենթարկվելու դեպքում.

3) իրավախախտման պահին բռնված և փախուստի փորձ կատարող անձանց բռնելիս.

4) երբ բավարար հիմքեր կան ենթաքելու, որ տվյալ անձը կամ անձինք պատրաստվում են զինված դիմադրություն ցույց տալ.

5) իրավախախտում կատարած անձանց Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված հիմքերով ոստիկանություն բերելիս կամ ծերբակալելիս, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված հիմքերով ծերբակալելիս, ծերբակալված և կալանավորված անձանց ուղեկցելիս կամ նրանց պահպանելիս, երբ վերջիններիս վարժագիծը հիմք է տալիս ենթադրելու, որ նրանք կարող են դիմել փախուստի, վճառ պատճա-

ռել իրենց կամ շրջապատին, դիմադրություն ցույց տալ ոստիկանության ծառայողին կամ չենթարկվել նրա օրինական պահանջներին.

6) առևանգված, ապօրինաբար ազատությունից գրկված և բռնի կերպով պահպող անձանց ու զավթված բնակարանները, շինությունները, տարածքներն ու տրանսպորտային միջոցներն ազատելիս.

7) տրանսպորտի, կապի և այլ կազմակերպությունների աշխատանքը կազմալուծող զանգվածային անկարգությունները և խմբակային գործողությունները խափանելիս.

8) ավտոտրանսպորտային միջոցը կանգնեցնելիս, երբ վարորդն ակնհայտորեն չի ենթարկվում ոստիկանության ծառայողի՝ տրանսպորտային միջոցը կանգնեցնելու պահանջնականությունը:

9) հանցագործություն կատարող կամ կատարած անձանց հայտնաբերելիս:

Նշված օրենքի 32-րդ հոդվածն առանձին իրավական կարգավորման է ենթարկում նաև ոստիկանության կողմից հրացենի կիրառման բույլատրելի դեպքերը՝ սահմանելով, որ.

Օստիկանության ծառայողներն անձամբ կամ ստորաբաժանման կազմում իրավունք ունեն իրազեն գործադրել՝

1) քաղաքացիներին՝ նրանց կյանքի կամ առողջության համար վտանգավոր հարձակումից պաշտպանելիս.

2) ոստիկանության ծառայողի վրա կատարվող հարձակումը հետ մղելու համար, երբ նրա կյանքին կամ առողջությանը վտանգ է սպառնում, ինչպես նաև նրա զենքին տիրանալու փորձը կանխելիս.

3) պատանդներին, ինչպես նաև զավթված պետական պահպանության ենթակա օրյեկտները ազատելիս.

4) կյանքի, առողջության, սեփականության դեմ ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն կատարելու պահին բռնված և փախուստի փորձ կատարող, ինչպես նաև զինված դիմադրություն ցույց տվող անձանց ծերբակալելիս.

5) քաղաքացիների բնակարանների,

պետական մարմինների, կազմակերպությունների գբաղեցրած տարածքների, պետական պահպանության ենթակա օբյեկտների, ինչպես նաև ուղեկցող ստորաբաժանումների վրա խմբակային կամ զինված հարձակումը հետմղելիս.

6) կյանքի, առողջության, սեփականության դեմ ուղղված ժանր կամ առանձնապես ծանր հանցագործության կատարման կասկածանքով ծերբակալված, կալանքի կամ ազատազրկման վայրերից փախուստի դիմած անձանց բռնելիս կամ փախուստը խափանելիս, ինչպես նաև նրանց բռնի ազատման փորձերը հետ մղելիս.

Ոստիկանության ծառայողներն իրավունք ունեն հրազեն օգտագործել՝

1) տրանսպորտային միջոցը վճասելով կանգնեցնելիս, եթե վարորդը իրական վտանգ է ստեղծում քաղաքացիների կյանքի ու առողջության համար և չի ենթարկվում ոստիկանության ծառայողի՝ տրանսպորտային միջոցը կանգնեցնելու ազդանշաններին.

2) մարդկանց կյանքին և առողջության անմիջականորեն սպառնացող կենդանիներին վճասագերծելիս.

3) զենք օգտագործելու կամ գործադրելու մտադրության մասին նախագուշական կրակոց արձակելիս, տագնապ հայտարարելիս կամ օգնության կանչելիս:

Արգելվում է հրազենի գործադրումը հղության նկատելի նշաններով կանանց, ակնհայտ հաշմանդամների և անշափահասների նկատմամբ (բացառությամբ նրանց կողմից քաղաքացիների կյանքի համար վտանգավոր զինված կամ խմբակային հարձակման և զինված դիմադրության դեպքերի), ինչպես նաև նարդկանց զգալի կուտակումների ժամանակ, երբ հրազենի գործադրումից կարող են տուժել այլ անձինք:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ նշված օրենսդրական ակտում ծերբակալվողին վճաս պատճառելու հետ կապված

իրավական հետևանքների մասին և ոչ մի նշում չի նախատեսված: Այս հանգամանքն առաջին հերթին քրեական իրավունքի օրինականության սկզբումքի, հանցավորության դեմ պայքարի գործընթացում պետական իշխանության բարձրագույն մարմնի կողմից ընդունված քրեական օրենքի գերակայության դրսևություն է:

Հանցանք կատարած անձին բռնելիս կամ ծերբակալելիս նրան վճաս պատճառելու իրավաչափության հարցերը վերաբերելի են նաև միջազգային իրավունքի առարկային: Սանապորապես, 1950 թ. նոյեմբերի 4-ի «Մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածում նախատեսվում է կյանքից գրկելու իրավաչափությունը, երբ այն հանդիսանում է բացարձակ անհրաժեշտության պայմաններում ուժի կիրառման առարկա՝ յուրաքանչյուր անձին անօրինական բռնությունից պաշտպանելու ժամանակ, օրինական կալանավորում իրականացնելու կամ օրինական հիմքերով ծերբակալված անձի փախուստին խոչընդոտելու, խռովություն կամ ապատամբությունը ճնշելու նպատակներով իրավաչափորեն ձեռնարկված գործողությունների ժամանակ¹:

1979 թ. դեկտեմբերի 17-ին ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեյայի կողմից ընդունված «Կարգուկանոնի պահպաննամ գծով պաշտոնատար անձանց վարքի օրենսգրքում» ներառված է այդպիսի ծերբակալման ժամանակ «միայն ծայրահեղ անհրաժեշտության դեպքերում և միայն իրենց պարտականությունների կատարելու համար անհրաժեշտ չափով»² ուժի կիրառման կանոնը: Համանման դրույթներ պարունակովում են նաև «Կարգուկանոնի պահպաննամ գծով պաշտոնատար անձանց կողմից ուժի և հրազենի կիրառման հիմնական սկզբունքներում», որն ընդունվել է 1990 թ. կայացած ՄԱԿ-ի Համաշխարհային կոնգրեսում:

Հանցանք կատարած անձին բռնելիս

¹ Տե՛ս. СССР и международное сотрудничество в области прав человека. Документы и материалы. М. 1989. № 159-160:

² Кодекс поведения должностных лиц по поддержанию правопорядка // Социалистическая законность. 1990 N 1. № 72:

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Վնաս պատճառելու ինստիտուտն օրենսդրի կողմից ներառված է արարքի հանգավորությունը բացառող հանգանաքների կազմում: Բացի քննարկվող ինստիտուտից, այդպիսի հանգանաքների շարքում ՀՀ քրեական օրենսգրքում նախատեսվում են նաև անհրաժեշտ պաշտպանության, ծայրահեր անհրաժեշտության, հիմնավորված ռիսկի, ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանքի, հրամանի կամ կարգադրության կատարման ինստիտուտները:

Կարծում ենք, որ արարքի հանցավորությունը բացառող հանգանաքների էության պարզաբանումը, դրանց ընդհանրությունների և առանձնահատկությունների ամրագրումը թույլ կտա հետևողականորեն մոտենալ հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու ինստիտուտի էության և նշանակության լիարժեք բացահայտմանը:

Արարքի հանցավորությունը բացառող հանգանաքների ընդհանուր բնորոշման, դրանց ընդհանուր հատկանիշների և առանձնահատկությունների հետ կապված տեսական գրականության մեջ մոտեցումները տարբեր են: Այսպես, **Վ. Պ. Մալկովը** արարքի հանցավորությունը բացառող հանգանաքները բնորոշում է որպես դեպքեր, որոնք, ըստ արտաքին հատկանիշների, համապատասխանում են **ՔՕ Դատուկ** մասի որևէ հոդվածին՝ որպես հանցագործություն, սակայն դրանք հատուկ պայմաններում և հանրորեն օգտակար շարժառիթով կատարելու շնորհիվ հանցագործություն չեն համարվում և քրեական պատասխանատվություն չեն առաջացնում³:

Այլ հեղինակներ տվյալ հանգանաքները մեկնաբանում են որպես պայմաններ /կանոններ/, որոնց պահպանան

դեպքում արտաքնապես հանցագործությանը նմանվող գործողությունը հանրային վտանգավորություն չի ներկայացնում⁴:

Սակայն առավել հաճախակի, այդ թվում նաև մասնագիտական գրականության մեջ, արարքի հանցավորությունը բացառող հանգանաքները մեկնաբանվում են որպես հասարակայնորեն օգտակար ու նպատակահարմար գործողություններ՝ ուղղված առկա հասարակական հարաբերությունների հանար ստեղծված սպառնալիքի վերացմանն ու օգտակար գործունեության խթանմանը⁵: Տվյալ մոտեցումը, մասնավորապես, կիսում է **Յու.Վ.Բառուկինը**, ով բավակայն մանրամասն վերլուծում է արարքի հանցավորությունը բացառող հանգանաքների տարբեր կողմերը և գալիս այն հետևողական, որ արարքի հանրային վտանգավորությունը և հակահրավականությունը բացառող հանգանաքը օրենսդրության տարբեր ճյուղերով նախատեսված և հանցագործություններին արտաքնապես նմանվող հանրորեն օգտակար /սոցիալապես ընդունելի/ և իրավաչփ արարք է, որը կատարվում է որոշակի հիմքերի առկայությամբ՝ բացառելով հասցված վնասի համար քրեական պատասխանատվությունը⁶:

Սամանագիտական գրականության մեջ առկա մեկ այլ դիրքորոշման համաձայն՝ արարքի հանցավորությունը բացառող հանցանաքներն իրենց բնույթով և էությամբ տարբերվում են միմյանցից: Դրանց մի մասը բացառում է արարքի հանրային վտանգավորությունը, մյումները՝ մեղքը, երրորդները՝ հակահրավականությունը: Միևնույն ժամանակ բոլոր դեպքերում առկա է մի ընդհանուր հատկանիշ, որով նշված հանցանաքները կարելի է միավո-

³ Տե՛ս. Практикум по уголовному праву. М., 1997. էջ 120:

⁴ Տե՛ս. Комментарий к Уголовному кодексу Российской Федерации /Отв. Ред. А. В. Наумов, М., 1996. էջ 130; Миньковский Г. М., Магомедов А. А., Ревин В. П. Уголовное право России. Общая и особенная части. М., 1998. էջ 60; Российское уголовное право. Общая часть /Под ред. В. Н. Кудрявцева и А.В.Наумова. М., 1997. էջ 227; Уголовное право. Общая часть/ Отв. Ред. И. Я. Козаченко и З.А.Незнамова. М. 1997. էջ 262-263:

⁵ Տե՛ս. Уголовное право. Общая часть. М., 1992. էջ 200; Уголовное право. Общая часть. М., 1994. էջ 222; Уголовное право России. Общая часть/Отв. Ред. Б. В. Здравомыслов. М., 1996. էջ 301:

⁶ Տե՛ս. Баулин Ю. В. Обстоятельства, исключающие преступность деяния... էջ 41:

րել մեկ հասկացության ներքո: Ընդհանուրն այն է, որ բոլոր դեպքերում արարքում բացակայում է հանցագործության հատկանիշներից որևէ մեկը կամ բոլորը միաժամանակ: Այսպես, արարքում հանրային վտանգավորության բացակայությունը վկայում է հանցագործության բացակայության մասին: Նույն ձևով հանցագործության բացակայության մասին: Նույն ձևով հանցագործության բացակայության մասին:

Այսպիսով, վերոշարադրյալի իիման վրա արարքի հանցավորությունը բացառող հանգամանքների ներքո պետք է հասկանալ այնպիսի հատկանիշների համակարգը, որոնք որոշակի գործողությանը հաղորդում են իրավաչափություն՝ հակահրավական վարքից այն տարանջատելու եղանակով:

Եթե ննան կերպ մոտենամբ արարքի հանցավորությունը բացառող հանգամանքների ընկալմանը, ապա հարկավոր է փոքր-ինչ այլ կերպ մեկնաբանել տվյալ հասկացության այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են հանրային օգտակարությունը, հանցանք կատարած անձին բռնկյունությունը:

Արարքի հանցավորությունը բացառող որոշ հանգամանքների օրենսդրական ընդունումը (անհրաժեշտ պաշտպանություն, հանցանք կատարած անձին բռնկյունություն, կատարած անձին բռնկյունություն, կատարած պատճառելը, հիմնավորված ոիսկ և այլն) հիմնվում է սոցիալապես ցանկալի, իրավաչափ վարքի խթանման անհրաժեշտության վրա: Որոշ իրադրություններում (իրամանի կամ կարգադրության կատարում, ֆիզիկական կամ հոգեբանական հարկադրանքը) հանապատասխան հանգամանքների նորմատիվ ամրագման կարիքը պայմանավորված է քաղաքացիների անքակտելի իրավունքների պաշտպանությամբ, դրանց ավելի բարձր արժեքով:

Հատկանշական է, որ ՀՀ քրեական օրենսգիրքը արարքի հանցավորությունը բացառող հանգամանքները նախատեսող նորմերում չի նշում դրանց հանրային օգտակարության մասին: Քրեական օրենքում, ըստ էության, ամրագրվում է միայն իրավաչափ և հակահրավական (քրեական իրավունքի տեսանկյունից) գործողությունը բաժանող սահմանը: Չուտ իրավաչափ վարքը կոնկրետացվում է միայն այնպիսի հատկանիշներով, որոնք տվյալ վարքը բաժանում են հակահրավական վարքից: Քրեական կարգավորման նման ձևը, մի կողմից, ապահովում է օրենսդրական նյութի տնտեսում, մյուս կողմից՝ լայն հեռանկար է բացում ցանկացած օգտակար, բարոյապես արդարացված գործողության համար:

Գրականության մեջ բազմաթիվ հետազոտողներ որպես արարքի հանցավորությունը բացառող հանգամանքների պարտադիր, կառուցողական հատկանիշներ առաջ են քաշել համապատասխան գործողության՝ այս կամ այն հանցագործության հետ արտաքին նմանության հատկանիշը⁷: Ըստ Յու. Վ. Բառլիմի կարծիքի, արարքի հանցավորությունը բացառող հանգամանքների համապատասխանելիությունը քրեական օրենսգրքով նախատեսված արարքի արտաքին հատկանիշներին կայանում է դրանց սուբյեկտների և օբյեկտների հատկանիշների լրիվ համապատասխանելիության, նրանց օբյեկտիվ կողմի փաստացի հատկանիշների լրիվ կամ մասնակի համապատասխանելիության մեջ⁸: Տվյալ մոտեցումը, մեր կարծիքով, ստացավ իր հետոագա զարգացումը արարքի հանցավորությունը բացառող ինստիտուտի հիմնական դրույթների մշակման մեջ, ինչպես նաև նրա կոնկրետ հանգամանքների վերլուծության ժամանակ՝ հանցակազմի ավանդական սխեմայի՝ օբյեկտիվ կողմ,

⁷ Տե՛ս. Բայլին Յ. Վ. Ուգոլովно-պարագայության և պարագայության մեջ հանցագործության մասին օրենսդրությունը. Մասնակի համապատասխան հանցագործության մասին օրենսդրությունը. Խարկով 1990 թ. էջ 14-15; Նիկոլաևա Յ. Ա. Ուգոլովության և պարագայության մասին օրենսդրությունը. Խարկով 1990 թ. էջ 36-39; Մագոմեդով Ա. Ա. Ուգոլովության մասին օրենսդրությունը. Խարկով 1990 թ. էջ 262:

⁸ Տե՛ս. Բայլին Յ. Վ. Ուգոլովության և պարագայության մասին օրենսդրությունը. Խարկով 1990 թ. էջ 27:

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

սուրյեկտ, սուբյետիվ կողմ⁹ տեսամկյուննեց:

Մինչեռ այլ հեղինակներ կասկած են արտահայտել արարքի հանցավորությունը բացառող հանգամանքների պարտադիր հատկանիշների շարքում հանցագործության հետ դրանց արտաքին /ձևական/ նշումը ներառելու կապակցությամբ, այդ թվում՝ նման հատկանիշի օրենսդրական ամրագրման նկատմամբ¹⁰: Նշված դիրքորոշումը իիմնավորվում է նրանով, որ ոչ ֆորմալ, ոչ բովանդակային առումով չի կարելի հանցագործության հատկանիշներ պարունակող արարքը նույնացնել հանրութեն օգտակար գործողության հետ: Այդաիս նույնացումը խեղաթյուրում է իրավաբանական ձևի և սոցիալական պարունակության հարաբերակցությունը, որոնք պետք է համապատասխանեն միմյանց:

Որպես հավելում նշենք, որ գործող ՀՀ քրեական օրենքը, էապես ընդլայնելով արարքի հանցավորությունը բացառող հանգամանքների թիվը, դրանց սահմանման ժամանակ չի օգտագործում որևէ հանցակազմի հետ դրանց ձևական համընկնման հատկանիշը՝ որպես արարքի հանցավորությունը բացառող հանգամանքը բնութագրող գործոն:

Դամաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 43-րդ հոդվածի՝ հանցանք կատարած անձին բռնելու համար անհրաժեշտ միջոցների սահմանազանցումը չի հանդիսանում հանցագործություն կատարած անձին բռնելուն ուղղված գործողությունների հակահրավականության միակ հատկանիշը: Դրա հետ մեկտեղ, հակահրավական է համարվում բռնվողին վնաս պատճառելը, որը կատարվել է, օրինակ, հան-

ցագործին իշխանության մարմիններին հանձնելու նպատակի հետ չկապված շարժառիթով կամ եթե հանցանք կատարած անձին բռնելը հնարավոր էր իրականացնել այլ միջոցներով: Թվարվկած փաստերից յուրաքանչյուրի առկայությունը վերացնում է հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու իրավաչափությունը:

Սեր կարծիքով, հենց այս հատկանիշներն են վճռական դեր խաղում հանցագործին բռնելիս նրան վնաս պատճառելու գործողությունների հստակ քրեահրավական գնահատականի համար: Դրանց՝ այս կամ այն հանցակազմի հետ համադրության անհրաժեշտությունն առաջանում է երկրորդ հերթին, օրենքում ամրագրված պայմանների չպահպաննան դեպքում:

Արարքի հանցավորությունը բացառող հանգամանքների էլության և հիմնական հատկանիշների սահմանումը թույլ է տալիս անցնել հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու ինստիտուտի առավել խորը դիտարկմանը:

Հեղինակների մեծամասնության կողմից հանցագործություն կատարած անձին բռնելիս վնաս պատճառելը դիտարկվում է որպես հանրութեն օգտակար գործողություն, որն իր հերթին ամրագրում է կատարած հանցագործության համար պատասխանատվության անխուսափելիության սկզբունքը և բարձրացնում է հանցագործության հետ պայքարի արդյունավետությունը¹¹:

Դարկ է ընդգծել նաև, որ բռնելիս հանցանք կատարած անձին հասցված վնասը հանդես է գալիս բացառապես որպես վտանգի, հանրութեն վտանգավոր հետևանքների կանխման կամ վերացման

⁹ Տե՛ս. Բարչуков Վ. Պ. Ուղղու-պարագայի իրավունքի առաջնային գործողությունների հակահրավականության միակ հատկանիշը: Դրա հետ մեկտեղ, հակահրավական է համարվում բռնվողին վնաս պատճառելը, որը կատարվել է, օրինակ, հան-

¹⁰ Տե՛ս. Կոզակ Վ. Ն. Վորոշիլով. Առաջնային գործողությունների հակահրավականության միակ հատկանիշը: Համարվում է գործողությունը անձին բռնելու համար անհրաժեշտ միջոցների սահմանազանցումը չի հանդիսանում հանցագործություն կատարած անձին բռնելուն ուղղված գործողությունների հակահրավականության միակ հատկանիշը: Դրա հետ մեկտեղ, հակահրավական է համարվում բռնվողին վնաս պատճառելը, որը կատարվել է, օրինակ, հան-

¹¹ Տե՛ս. Կուլիկով Ս. Վ. Կատարած անձին բռնելու համար անհրաժեշտ միջոցների սահմանազանցումը չի հանդիսանում հանցագործություն կատարած անձին բռնելուն ուղղված գործողությունների հակահրավականության միակ հատկանիշը: Դրա հետ մեկտեղ, հակահրավական է համարվում բռնվողին վնաս պատճառելը, որը կատարվել է, օրինակ, հան-

միջոց։ Այդպիսի միջոցի օգտակարության կամ իրավաչափության մասին հարցը կարող է լուծվել՝ ելնելով միայն պաշտպանվող և խախտվող շահերի արժեքների հարաբերակցությունից։

Հեղինակների մեկ այլ խումբ, առաջարկելով հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու հետ կապված իր սահմանումը, այն կառուցում է բացառապես վնաս պատճառելու իրավաչափության՝ օրենսդրորեն ամրագրված պայմաններից ելնելով։ Այդպիսի մոտեցումն առավելապես ներկայացված է **Վ. Պ. Դիդենկոյի, Ե.Ա. Օնգարբայեվի** և այլ հեղինակների աշխատություններում¹²։

Վ. Վ. Բուլշուկը նշում է, որ «հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու իրավաչափությունը որոշելու համար անհրաժեշտ է բացահայտել այն միասնությունը, որը թույլ կտար եզրակացություն անել հանցագործին վնաս պատճառելու թույլատրելի սահմանների մասին, ելնելով նրա կողմից խախտվող հասարակական հարաբերությունների կարևորությունից, դրանց սոցիալական արժեքից»¹³։ Հանցանք կատարած անձին բռնելիս նրան վնաս պատճառելու իրավաչափության աղբյուրները դրված են սոցիալ-քարոյական կատեգորիաներում, բխում են հանապատասխան քարոյական նորմերից ու պատկերացուներից։ Ինչպես հայտնի է, ցանկացած իրավական կարգավորման մեջ որպես կողմնորոշիչ են հանդես գալիս որոշակի քարոյական պահանջները, որոնք կատարում են իրավունքի արժեքային չափանիշի դեր։ Տվյալ դրույթը նշված է **Ի. Ի. Կարպեցի** կողմից։ «Իրավունքը ... կարծես թե ընտրում է քարոյական պահանջների զանգվածից առավելապես նշանավորները և հաղորդում է նրանց համապատասխան քնույթ»¹⁴։ Ուստի հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու ինստիտուտի իրավական բնույթը բխում է նաև դրա քարոյական արժեքից։

Ինչպես հայտնի է, բարոյականության տեսության հիմնադիր դրույթներից մեկն է հանդիսանում նպատակի ու միջոցների փոխադարձ պայմանավորված լինելու մասին դրույթը։ Հանցանք կատարած անձին բռնելիս նրան վնաս պատճառելը պայմանավորվում է նպատակի բարոյապես դրական բնույթով, որին հասնելու համար պատճառվում է տվյալ վնասը։ Այլ կերպ ասած՝ հանցագործին բռնելը ու նրան իշխանության համապատասխան մարմիններին հանձնելը արդարացնում է այն վնասը, որը նրան հասցվում է տվյալ նպատակի իրականացնան համար։

Սիամանանակ անհրաժեշտ ենք համարում նշել, որ հանցանք կատարած անձին բռնելիս նրան հասցվող վնասի բարոյական բովանդակությունն անմիջականութեն առնչվում է այնպիսի սոցիալական բնութագրիներին, ինչպիսիք են անհրաժեշտությունը, օգտակարությունը, բացասական հետևանքների վերացումը կամ կանխումը։ Անփոփելով նշվածը՝ կարելի է եզրակացնել, որ հանցանք կատարած անձին բռնելիս նրան վնաս պատճառելը կարող է իրավաչափ համարվել միայն հետևյալ փոխադարձ համարվել հանգանակների առկայությամբ։

ա/ բռնվողին պատճառվող վնասի և դրա նպատակի միջև հակասության բացակայության;

բ/ հանցագործին բռնելու համար վնասի պատճառման անհրաժեշտության;

գ/ վնաս պատճառելու համար անհրաժեշտ միջոցների սահմանագնանցան բացակայության:

Սեր կարծիքով, քննարկվող հարցը դիտարկելիս չափազանց կարևոր է հաշվի առնել նաև հանցանք կատարած անձին բռնող անձի մոտիվացիոն կողմը։ «Արարքի քարոյական արժեքը, - նշում է Ի.Ն.Կոնմարովը, - սահմանվում է նրա ամբողջ քա-

¹² Տե՛ս. Դիդենկո Վ. Վ. Պրավոմերность причинения вреда преступнику при его задержании. Киев, 1984. էջ 12; Օնգարբաև Ե. Ա. Ակազ. Ծոչ. էջ 12-13; Ռուսийսկое уголовное право. Общая часть / Под ред. В. Н. Кудрявцева и А. В. Наумова. М., 1997. էջ 247; Ուղղության պահանջանական համապատասխան քնույթ»։ Ուստի հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու ինստիտուտի իրավական բնույթը բխում է նաև դրա քարոյական արժեքից։

¹³ Բուշուև Գ. Վ. ‘Социальная и уголовно-правовая оценка причинения вреда преступнику при задержании’. Горький, 1976. էջ 14:

¹⁴ Կարպեց Ի. Ի. Ուղղության պահանջանական համապատասխան մարմարացնանական քնույթ»։ Մ., 1985. էջ 36:

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

րոյական բռվանդակությամբ՝ շարժադիթի, պրակտիկ գործողության ու արդյունքի նշանակությամբ»¹⁵: Բռնող անձի արժեքային կողմնորոշումը որոշվում է նրանվ, որ տվյալ սուբյեկտը, բռնելով օրենքը խախտած անձին, դեկավարվում է հանցագործին վնասազերծելու, արդարությունը վերականգնելու, նյութական վնասի փոխատուցումն ապահովելու ձգտումով։ Այս դեպքում նրա գործողությունները հաճիսանում են խորապես բարոյական։ Այլ բարոյական գնահատական կունենան նույն գործողությունները՝ կատարված վրեժի, կարիերիզմի և այլ շարժադիթներով։

Վերոշարադրյալի հիման վրա առաջարկում ենք հանցանք կատարած ան-

ձին բռնելիս վնաս պատճառելու ինստիտուտի հասկացության հետևյալ սահմանումը. հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելը, որպես արարքի հանցավորությունը բացառող հանգամանք, հանցագործություն կատարած անձին իշխանության մարմիններին հանձնելու և նրա կողմից նոր հանցագործությունների կատարման հնարավորությունը կանխելու նպատակով, բռնելուն ուղղված գործողությունների իրավաչափությունը բնութագրող օբյեկտիվ ու սուբյեկտիվ հատկանիշների համակցությունն է՝ այդ նպատակին հասնելու համար անհրաժշտ ու բավարար ֆիզիկական վնասի պատճառման եղանակ։

The concept and the legal nature of damage at the time of catching the person has committed a crime in the criminal code of Armenia

The circumstances, which exclude the Criminality of action, are the conditions, which presence convert into the actions, which are just as crime outwardly, legitimate, sometimes even useful actions.

This article is dedicated to the one of the circumstances, which exclude the Criminality of action. It is detection and definition of the features of catching the person committed a crime, prejudice Institute.

In the criminal law in light of science It is presented the place of this Institute in the system of The circumstances, which exclude the Criminality of action in this article, concept and peculiarities of this institute, which are provided in the Criminal Code, compare with those situations, which are provided in the other branches of the law, in which these conditions are used in a some measure.

In the article There are also analysed such questioins of the marked Institute, which concern the commonly useful fact and expediency of legislative fixation of above-mentioned institute, and other practical issues.

¹⁵ Комаров И.Н. Диалектика мотива и действия в моральном поступке //Философские науки. 1987. N 5. էջ 100:

Ազատական իրավաբանական իրավահասկացության եռլշյունը

Յուրի ԴՈՒԿԱՅԱՆ

Ասպիրանտ

Բնական - իրավական մոտեցման թերությունների հետևողական հաղթահարումը (իրավաբանական արժեքանության բնագավառում նոյնպես, ինչպես և իրավաբանական իմացարանության և գոյաբանության մեջ) հանգեցնում է ոչ թե պողիտիվիզմի և լեզիզմի, այլ իրավաբանական իրավահասկացության տեսականորեն ավելի զարգացած հայեցակարգի՝ իրավաբանական ազատական (լիբերտայ) տեսության¹:

Այս կապակցությամբ բուն իրավաբանական (հակալեգիստական) տեսակի իրավահասկացության շրջանակներում մենք առանձնացնում ենք երկու տարրեր մոտեցումները: **Առաջինը** բնական իրավական մոտեցումն է, որը ենում է պողիտիվ իրավունքին հակառակող բնական իրավունքի ճանաչումից («պողիտիվ իրավունք» տերմինը առաջացել է միջնադարյան իրավագիտության մեջ)²: **Երկրորդը՝** իրավահասկացման ընդհանուր տեսության ակադեմիկոս **Վ. Ս. Ներսեսյանցի** կողմից մշակված լիբերտար-իրավաբանական (ազատական-իրավաբանական) մոտեցումն է, որը ենում է իրավունքի և օրենքի (պողիտիվ իրավունքի) տարրերակման և հարաբերակցության սկզբունքից:

Ազատական-իրավաբանական մոտեցումնը ենթադրում է (և ներառում է) իրավունքի ու օրենքի տարրերակման և հարաբերակցության բոլոր հնարավոր ձևերը՝ անջատումից ու նրանց միջև հականարտությունից (ոչ իրավական օրենքի դեպքում) մինչև դրանց համընկնում (իրավական օրենքի դեպքում): Նույն տրամարանությունն է գործում նաև իրավունքի ու պետության վերաբերյալ, ընդորում ազատական - իրավաբանական տեսակետից պետությունը դիտարկվում է իր իրավական ու հակահրավական դրսերում-

ների ողջ դիավագնում (իրավախախտ պետությունից մինչև իրավական պետություն)³:

Համաձայն ազատական - իրավաբանական (ձևական-իրավաբանական) իրավահասկացության, իրավունքը հավասարության, ազատության ու արդարության հարաբերությունների ծև է, բնորոշված հարաբերությունների տվյալ ծևի մասնակիցների ձևական հավասարության սկզբունքով: Ամենուր, որտեղ կա, գործում է ձևական հավասարության սկզբունքը (և դրան կոնկրետացնող նորմերը), այնտեղ կա (գործում է) իրավունքը, հարաբերությունների իրավական ծևը: Ձևական հավասարությունը որպես իրավունքի սկզբունք կազմում է բուն իրավական սկզբունքը և հանդիսանում է իրավունքի տարրերակիշ հատկություն և սպեցիֆիկ հատկամիջ: Ըստ **Վ. Ս. Ներսեսյանցի** իրավունքում չկա ոչինչ, բացի ձևական հավասարության սկզբունքից (և այդ սկզբունքի կոնկրետացումներից)⁴: Այն ամենը, ինչը դուրս է գալիս այդ սկզբունքի շրջանակներից և հակասում է նրան, ոչ իրավական է և հակահրավական:

Ազատական-իրավաբանական հայեցակարգի համաձայն հավասարությունը իրենից ներկայացնում է որոշակի արստրակցիա, այսինքն, հանդիսանում է գիտակցական

¹ Нерсесянц В. С. Общая теория права и государства. Введение в курс общей теории права и государства. М., 1998, с. 40-49, Лапаева В. В. Российская юриспруденция в поисках нового типа правопонимания - "Наш трудный путь к праву". Материалы философско-правовых чтений памяти академика В. С. Нерсесянца. М., 2006, с. 35-61.

²Տե՛ս Ներսեսյանց Վ. Ս. Իстория политических и правовых учений. М., 2005, с. 139-140.

³ Տե՛ս Четвернин В. А. Современная либертарно-юридическая троека - "Ежегодник либертарно-юридической теории". Вып. 1. 2007, с. 5-6.

⁴ Տե՛ս Ներսեսյանց Վ. Ս. Философия права. М., 2006, с. 28-29.

ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

(մտածողական) վերացարկման արդյունք այն բոլոր տարբերությունների, որոնք բնորոշ են հավասարեցվող օբյեկտներին: Հավասարեցումը ենթադրում է հավասարեցվող օբյեկտների տարբերությունները և, միաժամանակ այդ տարբերությունների աննշանությունը հավասարեցնան համապատասխան հիմքի (չափանիշի) տեսակետից:

Այսպես, տարբեր օբյեկտների հավասարեցումը ըստ դրանց թվական հիմքի (դրանց քանակը, քաշը և այլն որոշելու համար) վերացրկվում է դրանց բովանդակային զանազան տարբերություններից (անհատական, սեռային, տեսակային և այլն): Այս հունվ է ձևավորվել մաթեմատիկան, որտեղ հավասարումների կազմումն ու լուծումը առանցքային դեր է խաղում և որտեղ հավասարությունը, «մաքրագերծված» որակական տարբերություններից, հասցված է քանակական բնորոշումների արարությամբ:

Իրավական հավասարությունը այնքան արարություն չէ, որքան թվային հավասարությունը մաթեմատիկայում⁵: Տարբեր մարդկանց իրավական հավասարության հիմք (և չափանիշը) է հանդիսանուն հասարակական հարաբերություններում նրա ազատությունը, ճանաչված և հաստատված իրավունակության և իրավասությեկտության տեսքով: Դրանում է իրավական հավասարության և ընդհանրապես իրավունքի առանձնահատկությունը:

Ազատության մեջ իրավական հավասարությունը, որպես ազատության հավասար չափ, նշանակում է համաչափություն, համարժեքություն իրավունքի սուրյեկտ հանդիսացող ազատ անհատների հարաբերություններում:

Իրավական հավասարությունը՝ ազատ և իրարից անկախ իրավունքի սուրյեկտների հավասարությունը՝ ըստ բոլորի համար ընդհանուր մասշտաբի, միասնական նորմի, հավասար չափի: Իսկ այնտեղ, ուր մարդկի բաժանված են ազատների ու անազատների, վերջիններս դասվում են իրավունքի ոչ թե սուրյեկտների, այլ օբյեկտների շարքին և իրավական հավասարության սկզբունքը նրանց վրա չի տարածվում:

Իրավական հավասարությունը ազատների հավասարություն է և ազատության հավասարություն, անհատների ազատության

ընդհանուր մասշտաբ և հավասար չափ: **Իրավունքը խոսում և գործում է այդ հավասարության լեզվով և միջոցներով և շնորհիվ դրա հանդես է գալիս որպես մարդկանց համատեղ կյանքի ազատության գոյի, դրսեորման և իրականացման համընդհանուր և անհրաժեշտ ծե: Այս իմաստով կարելի է ասել, որ իրավունքը ազատության մաթեմատիկան է⁶:**

Ընդ որում, կարելի է, թերևս, ենթադրել, որ մաթեմատիկական հավասարությունը, որպես առավել արարուակտ գոյակցություն, ունի պատմական ավելի ուշ ծագում և ածանցյալ է իրավական հավասարությունից: Հավասարության սկիզբերի հետագա զարգացումը և գիտական մշակումը հանգեցրել է այն պատկերացման, թե հավասարության գաղափարը իրավունքի մեջ է ներմուծվել մաթեմատիկայից:

Նման մեկնության կարելի է հանդիպել արդեն պյութագորասցիների մոտ, որոնց լուրջ հետաքրքրությունը մաթեմատիկայով գործակցվում էին թվային միստիկայով իրապուրվելով և հավասարության մասին մաթեմատիկական պատկերացումները հասարակական երևույթների, այդ թվում նաև իրավունքի վրա տարածելու հետ⁷: Համաձայն պյութագորասցիների, աշխարհի եւրությունը (ֆիզիկական և սոցիալական) իրենից ներկայացնում է թիվ, և աշխարհում ամեն ինչը ունի թվային բնութագիր և արտահայտություն: Մեկնաբանելով հավասարությունը որպես որոշակի (և իր բնույթով թվային) համամասնության պատշաճ չափ, նրանք իրենց սոցիալական մաթեմատիկայի ոգով արտահայտում էին արդարությունը (այսինքն իրավունքը իր հավասարության սկզբունքը հանդերձ) «չորս» թիվ տեսքով:

Հավասարության մասին թվային (մաթեմատիկական) պատկերացումների տարածումը հասարակական հարաբերությունների վրա արտացոլում էր իրավունքի մասին թերզարգացած հայացքները և, ըստ եւրիան, անտեսում էր հավասարության յուրահատկությունը մարդկանց սոցիալական կյանքում՝ հենց որպես ազատ մարդկանց ձևական-իրավական հավասարության: Ունենալով ձևական հավասարության այդ սկզբունքը, իրավունքը ինքնին հանդիսանում է յուրատեսակ սոցիալական մաթեմատիկա (հա-

⁵ Տե՛ս նույն տեղում:

⁶ Այս մասին ավելի մանրամասն տե՛ս Հերսեսյան Վ. Ս. Պարագայության մասին ազատության համարժեքությունը՝ ազատության համարժեքությունը:

⁷ Տե՛ս Հերսեսյան Վ. Ս. Իտալիական պատմությունը՝ ազատության համարժեքությունը՝ ազատության համարժեքությունը:

սարակական հարաբերություններում հավասարությունը և անհավասարաության մասին ուսմունքի իմաստով):

Սոցիալական ոլորտում հավասարությունը՝ միշտ իրավական հավասարություն է, ձևական-իրավական հավասարությունը: Չէ՞ որ իրավական հավասարությունը, ինչպես ցանկացած հավասարություն, վերացարկված է (ըստ սեփական իիմքի ու չափանիշի) փաստական տարբերություններից և այդ իսկ պատճառով անհրաժեշտաբար և ըստ բնորոշման կրում է ձևական բնույթ:

Հավասարության վերաբերյալ գոյություն ունեն բազում թյուրմբոնուններ, սխալական պատկերացումներ: Վերջնական հաշվով դրանց իիմքում ընկած է չհասկանալը այն բանի, որ հավասարությունը ունի ռացիոնալ իմաստ, որ այն տրամաբանութեն ու գործնականորեն սոցիալական աշխարհում հենց որպես և միայն իրավական (ձևական-իրավական, ձևական) հավասարություն է:

Այսպես. հավասարությունն հաճախ (ինչպես անցյալում, այնպես էլ այսօր) շփրշլւմ է տարբեր տեսակի էգալիստական (իսկ փաստորեն հավասար) պահանջների, համարթեցման և այլնի հետ: Կամ էլ, ընդհակառակը, նրան հակառութ են այսպես կոչված «փաստացի հավասարությունը»: Նման խառնաշփոթ այսպես թե այնպես, բայց միշտ կրում է հակաիրավական բնույթ: Չէ՞ որ «փաստացի հավասարությունը» ռացիոնալ բնույթ ունի միմիայն որպես բացառում (այսինքն, որպես ձևական, իրավական հավասարության բացառում), իսկ որպես պնդում այդ «փաստացի հավասարությունը» իրացիոնալ մեծություն է:

«Փաստացի հավասարությունը»՝ «փաստական» և «ոչ փաստական» (ձևական) հասկացությունների խառնուրդ է և «հավասարություն» բուն հասկացության հակասություն: Որպես հասկացություն, որպես կարգավորիչ սկզբունք, չափման մասշտաբ, հարաբերությունների ձև և տեսակ՝ «հավասարությունը» իմաստ ունի միայն «փաստական» և «ձևականի» տարբերակման համատեքստում ու միայն որպես ինչ-ինչ «ձևական» բան, անջատված (վերացարկված) ինչ-ինչ «փաստական» բանից, ինչպես բառերն են անջատ նրանցով նշվող իրերից, թվերը նրանցով հաշվվող առարկաներից, կշեռքը՝ կշռվող զանգվածից և այլն: Շնորհիվ հենց այդ իր ձևականության («փաստակա-

նից» վերացարկվածության) հավասարությունը կարող է դառնալ և իրապես դառնուն է «փաստականի» կարգավորման եղանակ, միջոց, սկզբունք, յուրատեսակ ձևական և ձևականացված «լեզու», «հաշիվ», «կշեռք», արտաձևական (այսինքն «փաստական») իրականության չափիչ: Նույնկերպ և ձևական-իրավական հավասարությունը:

Դետևաբար, իրավունքի պատմությունը՝ ձևական (իրավական) հավասարության բովանդակության, ծավալի, մասշտաբի ու չափի առաջադիմող է կոլյուցիայի պատմություն և բուն այդ սկզբունքի պահպանությունը իրավունքի ցանկացած համակարգի և ընդհանրապես իրավունքի սկզբունքի: **Մարդկանց հարաբերություններում ազատության և իրավունքի պատմական զարգացման տարբեր փուլերին բնորոշ է ազատության սեփական մասշտաբ և սեփական չափ, ազատության ու իրավունքի հարաբերությունների և սուբյեկտների սեփական շրջանակ, մի խոսքով, ձևական (իրավական) հավասարության սկզբունքը իրենից ներկայացնում է իրավունքին մշտապես բնորոշ սկզբունք պատմականորեն փոխվող բովանդակությամբ⁸:**

Զևական հասարակության սկզբունքի բովանդակության, ծավալի, գործողության ոլորտի պատմական էկույուցիան ընդհանուր առմանը ոչ թե հերքում, այլ ընդհակառակը՝ անրապնդում է տվյալ սկզբունքի (և դրան կոնկրետացնող նորմերի համակարգի) նշանակությունը որպես իրավունքի տարբերակիշ հատկանիշի սոցիալական կարգավորման (քարոյական, կրոնական և այլն) այլ տեսակների հետ հարաբերակցություններում և տարակարծություններում: **Հաշվի առնելով այս ամենը, ակադեմիկոս Վ. Ս. Ներսեսյանը նշում է, որ իրավունքը՝ ազատության արտահայտման նորմատիվ ձև է հասարակական հարաբերություններում մարդկանց ձևական հավասարության սկզբունքի միջոցով:**

Սարդկանց միջև սկզբնական տարբերությունները, դիտարկված (և կարգավորված) հավասարության աբստրակտ-համընդհանուր սկզբունքի տեսակետից (հավասար չափից), արդյունքում ներկայանում են որպես արդեն ծեռք բերված իրավունքների անհավասարություն (իրավունքի տարբեր անհատ - սուբյեկտների իրավունքների անհավասարություն ըստ դրանց բովանդակության ու ծավալի): Իրավունքը որպես հավասարու-

⁸ Կերսեսյան Վ. Ս. Օբщая теория права и государства, с. 55.

ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

թյան սկզբունքով հարաբերությունների ծև, ամշուշտ, չի ոչնչացնում (և չի էլ կարող ոչնչացնել) ելակետային տարրերությունները սուբյեկտների միջև, այլ միայն ձևականացնում ու կանոնակարգում է այդ տարրերությունները ըստ միասնական հիմքի, ձևափոխում է անորոշ, փաստական տարրերությունները ազատ, իրարից անկախ, հավասար ամենա ձևական - որոշակի անհավասար իրավունքների: Ըստ եռթյան, հենց դրանում է հասարակական հարաբերությունների միջնորդականացման, կարգավորման ու կանոնակարգման իրավական եղանակի առանձնահատկությունն ու ինաւոր, սահմաններն ու սահմանափակությունը, նշանակությունն ու արժեքը:

Իրավական հավասարությունը և իրավական անհավասարությունը (հավասարությունը և անհավասարությունը իրավունքի մեջ) հանդիսանում են նույն կարգի (մեկը մեկին ենթադրող և լրացնող) իրավական բնորոշումներ և հասկացություններ, որոնք հավասար չափով և հակադրվում են փաստացի տարրերություններին, և տարրերվում են դրանցից: Տարբեր սուբյեկտների իրավական սուբյեկտների սկզբունքը ենթադրում է, որ նրանց կողմից ծեռք բերվող սուբյեկտիվ իրավունքները լինելու են անհավասար: **Իրավունքի շնորհիվ տարրերությունների քառորդ վերափոխվում է հավասարությունների և անհավասարությունների կարգի համաձայնեցված ըստ միասնական հիմքի և ընդհանուր նորմի:**

Տարբեր անհատներին ձևականորեն հավասար ճանաչումը հանդիսանում է նրանց հավասար իրավունակության, համապատասխան բարիքների, կոնկրետ օրյեկտների վերաբերյալ այս կամ այն իրավունքի ծեռքբերման հնարավորության ճանաչում, սակայն դա չի նշանակում անհատական-կոնկրետ առարկաների, բարիքների վերաբերյալ արդեն ծեռք բերված իրավունքների հավասարություն: Տարբեր մարդկանց ձևական հավասարության և հավասար իրավունակության դեպքում իրենց կողմից իրականորեն ծեռք բերված իրավունքները անխուսափելիորեն (մարդկանց միջև տարրերությունների, նրանց իրական հնարավորությունների, կյանքի պայմանների և հանգանքների պատճառով) լինելու են անհավասար, կենսական տարրերությունները, որոնք չափվում ու գնահատվում են իրավունքի միևնույն մասշտարով ու հավասար չափով, արդյունքում հանգեցնում են կոնկրետ սուբյեկտի կողմից ծեռք բերված, անձնապես նրան պատկանող (և այդ ինաւորով սուբյեկ-

տիվ) իրավունքների տարրերության:

Անշուշտ, իրավունք ունենալը (իրավունակությունը) մի բան է, իսկ նման ձևական արստրական իրավական հնարավորության իրագործումը և որոշակի բարիքի հանդեպ իրական իրավունքի ծեռքբերումը միանգամայն այլ: Սակայն իրավունքը միմիայն տարբեր մարդկանց համար ձևականացված ճանապարհ է զանազան իրերի, առարկաների, բարիքների հանդեպ իրավունքի ծեռքբերման համար, այլ ոչ դրանց ձրի բաժանում հավասարապես բոլորին:

Սակայն, ըստ միասնական հիմքի և հավասարաչփի տարրերությունների կանոնակարգման մեջ էլ հենց առկա է այն բոլորի ձևական ազատության և հավասարության ճանաչումը, ում վրա տարածվում է հարաբերությունների տվյալ իրավական ձևը: Այսպես, **Երկրորդ իրավիճակում բոլորը ձևականորեն ազատ են ու հավասար, սակայն համապատասխան օբյեկտների** (արտադրության միջոցների) վերաբերյալ իրականորեն ծեռքբերված իրավունքները տարբեր են: Առաջին (նախակապիտալիստական) իրավիճակում իրավական ազատության և հավասարության ոլորտը ընդգրկում է քչերին, իսկ մյուսների մոտ համապատասխան իրավունքի (իրավունակության) բացակայությունը նշանակում է, որ նրանք չեն ճանաչվում իրավականորեն ազատ ու հավասար: Այստեղ բուն իրավունքը (ձևական հավասարությունը, իրավաունակությունը, իրավական ձևից օգտվելը և այլն), իսկ դրա հետ նաև ազատությունը հանդիսանում է հասարակության առանձին անդամների մեջաշնորհ:

Երրորդ (սոցիալիստական) դեպքում, չկան ոչ առաջին իրադրության իրավական արտօնությունները, ոչ էլ համապատասխան օբյեկտների հանդեպ իրավունքների տարրերություն, քանի որ այդ օբյեկտների, որպես արտադրության միջոցների հանդեպ ոչ ոք ընդհանրապես իրավունք չունի (ոչ իրավաունակություն, ոչ էլ հատկապես իրականորեն ծեռքբերված): Անհատի մոտ որոշակի իրավունքի բացակայությունը միաժամանակ նաև համապատասխան անհատական ազատության բացակայությունն է: Հետևաբար, դիտարկվող հարաբերության մեջ ընդհանրապես բացակայում է անհատի ձևական հավասարության ու ազատության սկզբունքը, և այս երկրորդ իրավիճակում հասարակությունը կոնկրետացված չէ իրավունքի անհատ-սուբյեկտների: Հասարակական (այդ թվում նաև տնտեսական) հարաբերությունները այստեղ կար-

գավիրվում են այլ (ոչ իրավական) միջոցներով ու նորմերով:

Որպես իրավական կարգավորման յուրահատուկ սկզբունքի, հավասարության դրսնորման ծևերը կորում են սոցիալական-պատմական բնույթը: Դրանով են պայմանավորված այդ ծևերի առանձնահատկությունները սոցիալ-տնտեսական տարրեր ֆորմացիաներում, իրավունքի պատմական օրգագման տարրեր փուլերում, ինչպես նաև հասարակական կյանքում ծևական (իրավական) հավասարության սկզբունքի ժավալի ու բովանդակության, տեղի և ների փոփոխումներով:

Դրա հետ մեկտեղ տվյալ սկզբունքը՝ իր դրսնորումների ողջ բազմազանությամբ և տարրերությամբ հանդերձ, ունիվերսալ նշանակություն ունի իրավունքի պատմական բոլոր տեսակների և ծևերի համար և արտահայտում է ազատ անհատների հասարակական հարաբերությունների կարգավորման իրավական եղանակի առանձնահատկությունները և տարրերակի հատկանիշը: **Ամենուր, ուր գործում է իրավական հավասարության սկզբունքը, առկա է նաև իրավական սկիզբ և կարգավորման իրավական եղանակ, որտեղ կա իրավունք, կա նաև հավասարության սկզբունքը:** Այդ իսկ պատճառով ազատ անհատների ծևական հավասարությունը հանդիսանում է իրավունքի առավել վերացական բնորոշումը՝ ընդհանուր ցանկացած իրավունքի համար ու յուրահատուկ իրավունքի համար ընդհանրապես:

Չևական հավասարության սկզբունքի հետ կապված է նաև իրավունքի՝ որպես հասարակական հարաբերությունների ծևի հասկացությունը⁹: Իրավական ծևականության առանձնահատկությունները պայմանավորված են նրանով, որ իրավունքը հանդես է գալիս որպես իրենց վարքունք, գործունեությունում և հարաբերություններում ընդհանուր նորմին ենթակա անկախ սուբյեկտների հասարակական հարաբերությունների ծև: Իրենց հարաբերությունների իրավական ծևի սահմաններում նրանց անկախությունը և միաժամանակ նրանց միանման, հավասար ենթարկությունը ընդհանուր նորմին բնորոշում է գոյի իրավական ծևի և ազատության արտահայտման ինաստն ու հույսունը:

Ազատության իրավական ծևը, ցուցադրե-

լով հավասարության, համընդիմության և ազատության ծևական բնույթը, ենթադրում և արտահայտում է իրավական ծևականության, համընդիմության, հավասարության և ազատության ներքին էական և ինաստային միասնականությունը:

Իրավական հավասարության և իրավական ծևի համընդիմության ներքին փոխկապակցածության անհրաժեշտությունը ակներև է: Իրավական չափը համընդիմութը է միայն այն սահմաններում և այնքանով, մինչև և որքանով այն մնում է միասնական (և, հետևաբար, հավասար) չափման (կարգավորման) տարրեր օբյեկտների համար, որոնք իրենց անբողջականությամբ կազմուն են այդ համընդիմության ոլորտը, այսինքն, միևնույն չափով չափվող զանազան հարաբերությունների շրջանակը: Հետևաբար, այդ համընդիմությունը հարաբերական է: Այն սահմանափակված է զանազան հարաբերություններում միասնական չափի գործողության շրջանակներով: Բուն հավասարությունը այստեղ նրանում է, որ հարաբերությունների ընդհանուր շրջանակի սուբյեկտները ընկնում են միասնական (ընդհանուր, հավասար) չափի գործողության տակ:

Նման ծևականությունը ցանկացած իրավունքի ներքուստ անհրաժեշտ, այլ ոչ պատհական հատկությունն է: Զևս այստեղ արտաքին կաղապար չէ: Այն բովանդակային է և հնարավոր միակ ծևով, ծշգրիտ և համահումը կերպով տվյալ ծևով միջնորդացվող (այսինքն, իրավունքի կողմից ընդգրկվող ու կարգավորվող) հարաբերությունները անհատի ազատության չափը ըստ միասնական մասշտաբի: Իր համընդիմուր մասշտաբով և հավասար չափով իրավունքը չափվում ու ծևակերպվում է փոխհարաբերություններում, գործողություններում, արարթներում, մի խոսքով, մարդկանց արտաքին վարքի մեջ:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ ազատական-իրավաբանական հայեցակարգը, հաղթահարելով բնական իրավունքի ու պողիտիվիստական տեսությունների միակողմանիությունը և դրանց միջև եղած հակադրությունը, դարձել է նաև իրավաօրինականության և իրավական օրենքի բովանդակության ծջգրտման, պարզաբանման և բացահայտման գիտական մեթոդաբանություն:

⁹ Տե՛ս Ներսեսյան Վ. Ս. Օբщая теория права и государства, с. 58:



ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

74, 2012

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Յուրաքանչյուրը պետք է պատասխանատվություն ունենա.....	2
ՀՀ Նախագահի համձնարարականներ է տվել.....	4
ՀՀ դատախազության կողեգիայում.....	5
Ի կատարումն ՀՀ Նախագահի համձնարարականների.....	7
Հորեցյան.....	9
Նշանակումներ ՀՀ դատախազության համակարգում.....	10

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԴԱՏԱԽԱՅԻՆ, ՔՏԵՏՉԻՆ

Արամ ԹԱՄԱԶՅԱՆ Խուլիգանության քրեականական բնութագիրը.....	11
--	----

ԻՐԱՎՈՒԹԻՒՆ ՓԼԱՍՄՈՒԹՅՈՒՆ

Վարդան ՄՈՒՐԱՂՅԱՆ Իրավունքի հասկացության նորմատիվիստական դպրոցը.....	20
--	----

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒԹԻՒՆ

Թամարա ՇԱՔԱՐՅԱՆ Իրավաբանական անձանց նկատմամբ կիրառվող վարչական սույների շրջանակը.....	27
--	----

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Արմեն ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ Ջանցագործության դեպքի բացակայության և արարքի մեջ հանցակազմ չլինելու հիմքերով քրեական վարույթի կարճման առանձնահատկությունները.....	37
---	----

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒԹԻՒՆ

Արթուր ԻԿԻԼԻԿՅԱՆ Ինքնիշխանության հասկացությունը և էությունը.....	45
--	----

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒԹԻՒՆ

Անդրանիկ ՄԱՆՈՒԿՅԱՆ Ջանցանք կատարած անձին բռնելիս վճառ պատճառելու հասկացությունն ու իրավաբանական բնույթը.....	51
---	----

ԻՐԱՎՈՒԹԻՒՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Յուրի ՂՈՒԿԱՍՅԱՆ Ազատական իրավաբանական իրավահասկացության էությունը.....	59
---	----